




ԶԱՄԱՇԻՆ





ԽԱ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿՈՄԻՏԵ

1984




ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 6-ին, կիրակի.—Աշխարհամածրան (Կանաչ Կիրակի).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Շնորհք արքեպիսկոպոստը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եկայք հաւատացեալք որք ի հեթանոսաց. Յնծութեամբ տօնեացուք զնաւակատիս Ա. Եկեղեցոյ» (ջարական) բնաբանով:

*
* *

Մայիսի 13-ին, կիրակի.—(Կարմիր Կիրակի).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քին. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Կնիքս, յանուն Յիսուս Քրիստոսի, եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարացես զամենայն նեղս մոխս չարին ջիւղցանել» (Մաշտոց) բնաբանով:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռի միաբան, Երևանի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը

մեկնում է Մոսկվա՝ մասնակցելու Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի անդամ ՍՍՀՄ-ում գործող Եկեղեցիների խորհրդակցությանը:

*
* *

Մայիսի 20-ին, կիրակի.—Տօն Երևման Ա. Խաչի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկապոս վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Խաչն կենարար որ եղև մեզ փրկութիւն» (ջարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ «Յիշատակ աշխարհապօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարգսրապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»:

*
* *

Մայիսի 21-ին, երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանում սկսվում են 1983—84 ուսումնական տարվա գրավոր և բանավոր քննությունները:

*
* *


Մայիսի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Հովնան արեղա Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթե կոյր էիք, ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասեք եթե տեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են» (Հովհ. Թ 41) բնաբանով:

*
* *

Մայիսի 31-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Թորգոմ արեղա Խարապյանը: Հավարտ Ս. պատարագի Իջման Ս. Սեղանի առջև նա քարոզում է «Եւ ինքն Տէր Յիսուս յետ խոսելոյն ընդ նոսա, համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր» (Մարկոս ԺԶ 19) բնաբանով:

Այնուհետև Ս. Սիոն արքեպ. Մանուկյանի նախագահությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք՝ ի հիշատակ «Փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սոյ ի Ս. Էջմիածին, յամի Տեառն 1441»:






ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՎԵՀԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆՑ ԴԱՀԼԻԾՈՒՄ



ՎԵՀԱՐԱՆԻ ԵՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՁԵՎ



ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ԺՈԶԵ ԴԵ ԱԶԵՐԵԴՈ ՊԵՐՏԻԳԱՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մայիսի 23-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 16.30-ին, Մայր Աթոռ է այցելում ՍՍՀՄ մշակութային մինիստրության հրավերով Սովետական Միությունում շրջագայող Գալուստ Կյուպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Հարգարժան հյուրին ողջեցում էր Հայկական ՍՍՀ Մշակույթի մինիստրության գեղարվեստի և թանգարանների բաժնի վարիչ Ալեքսանդր Տեր-Գաբրիելյանը:

Ա. Էջմիածնի Մայր տաճարի մուտքի առջև դոկտ. Պերտիգանին և իր տիկնոջը դիմավորում են Մայր Աթոռի միաբանները, գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթրոյանի, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հոգևոր ձեմարանի ուսանողները:

Ջերմագին դիմավորումից հետո, ողջույնի և բարիգալստյան խոսք է ասում Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, որից հետո հոգևոր ձեմարանի ուսանողներից մեկը վարդերից կապված մի գեղեցիկ ծաղկեփունջ է նվիրում տիկին Պերտիգանին:

Ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, Մայր Աթոռի պատվարժան հյուրերն առաջնորդվում են Մայր տաճար: Ավագ խորանի առջև լուռ խոկումի աղոթք են կատարում դոկտ. Պերտիգանը և իր կինը, այնքան հույսով և ինքնամոռաց, որ ներկաներին թվում է, թե աղոթողները գրտնըլվում են իրենց իսկ հարապատ եկեղեցու կամարների տակ:

Մայր տաճարում հյուրերին Հայ Եկեղեցու, Մայր Աթոռի և հայ ժողովրդի վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Տ. Նարեկ եպիսկոպոսը, թեև հարգարժան նախագահը, ինչպես գիտենք, քաջածանոթ է հայ ժողովրդի տառապանքներով լի անցյալին և ներկայի առաջընթաց կյանքին:

Այնուհետև Մայր Աթոռի հյուրերն առաջնորդվում են Մայր տաճարի եկեղեցական արվեստների թանգարան: Այստեղ նույնպես նրանց ծանոթություններ է տալիս Տ. Նարեկ եպիսկոպոսը:

Թանգարանի ցուցանմուշներին ծանոթանալուց հետո, պորտուգալացի հյուրերն առաջնորդվում են Վեհարան, որտեղ նրանց դիմավորում է Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը՝ շրջապատված Խորհրդի անդամներով:

Այստեղ նույնպես ողջույնի, բարիգալստյան և շնորհակալության խոսքեր են փոխանակվում Տ. Սիոն արքեպիսկոպոսի և դոկտ. Պերտիգանի միջև: Այնուհետև Վեհարանի ընդունելությունների սրահում հյուրերի և ներկաների միջև տեղի է ունենում ջերմ պրոյց՝ սրտագին մթնոլորտում, որից հետո բոլոր ներկաները հրավիրվում են հյուրասիրության սեղանի շուրջ: Այստեղ Տ. Սիոն արքեպիսկոպոսը բաժակ է բարձրացնում պորտուգալացի մեծահարգ հյուրի և նրա տիկնոջ կենաց արևշատության մաղթանքով:

Այնուհետև Տ. Սիոն արքեպիսկոպոսը խոսում է Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Վապգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի եկեղեցանվեր ու շինարարական ծաղկուն գործու-

ներության մասին և ցավ հայտնում, որ Մայր Աթոռի պատվարժան հյուրերը բարեբախտությունը չունեցան անձամբ ընդունվելու Վեհափառ Հայրապետի կողմից, քանի որ նա այժմ հովվապետական այցելությամբ գտնվում է Արգենտինայի հայոց թեմում:

Տ. Սիոն արքեպիսկոպոսն ապա խոսում է Գալուստ Կյուպենկյան հիմնարկության նվիրատվություններով Մայր Աթոռում և ընդհանրապես Հայ Եկեղեցու բոլոր թեմերում, որ սփռված են աշխարհով մեկ, կատարված ջինարարական-բարեկերպության աշխատանքների մասին և իր խորապգաց շնորհակալությունը հայտնում Գալուստ Կյուպենկյան հիմնարկությանն ու անձամբ նրա նախագահ դոկտ. Պերտիգանին:

Ի պատասխան Տ. Սիոն արքեպիսկոպոսի խոսքի, դոկտ. Պերտիգանն ասում է, որ ինքը հավատում է անդրջիրիմյան կյանքին և հաստատ համոզված է, որ հանգուցյալ Գալուստ Կյուպենկյանի հոգին այժմ ցնծության մեջ է այնտեղ՝ տեսնելով և զգալով այն դրականն ու բարին, որով ապրում և գոյատևում են հայ հավատացյալ ժողովուրդը և Հայ Եկեղեցին:

Հյուրասիրության վերջում Տ. Սիոն արքեպիսկոպոսը Մայր Աթոռի բարձրաստիճանի հյուրերին նվիրում է հայկական մանրանկարչության մի նմուշ և օնիքս քարից հայկական ոճով պատրաստված մի խաչ:

Դոկտ. Պերտիգանը շնորհակալություն է հայտնում թանկագին նվերների և հատկապես այն ջերմ ու սրտագին ընդունելության համար, որին իրենք արժանացան Հայ Եկեղեցու դարավոր կենտրոն Ս. Էջմիածնում:


Վեհարանից Մայր Աթոռի մեծարգո հյուրերն առաջնորդվում են «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատուն», որտեղ նրանց Գանձատան հայաոճ կառույցի և նրանում պահպանվող հայ եկեղեցական արվեստի ցուցանմուշներին ծանոթացնում է ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը: Այստեղ արդեն, չկարողանալով զսպել իր հիացմունքը, դոկտ. Պերտիգանն ասում է. «Ես չգիտեմ, թե ինչպես արտահայտեմ իմ հիացմունքը: Միայն կասեմ, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բոլոր հաստատությունների կամարների տակ իշխում է աստվածային ոգին»:

Հրաժեշտի պահին է: Դուրս գալով Գանձատնից, դոկտ. Պերտիգանը հայտնում է իր ավստոսանքը այն բանի համար, որ, իրենք, ցավոք սրտի, հնարավորություն չունեն երկար մնալու և հանգամանորեն ծանոթանալու Մայր Աթոռին:

Ապա դոկտ. Պերտիգանը և իր հարգելի տիկինը հրաժեշտ են տալիս բոլոր ներկաներին և լավագույն տպավորություններով մեկնում Մայր Աթոռից:

Վ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ





ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՑ ԾԱԳՈՒՄ ԱՌԱԾ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐ

Անձնանունը անձի անվանումն է՝ հասարակության մեջ նրան անհատականացնելու նպատակով: Ամեն մի ցեղ և ժողովուրդ իր ազգային լեզվով ստեղծել է արական և իգական անուններ: Հայերը ևս ստեղծել են իրենց անձնանունները: Հայոց մեջ անձնանունները ծագել են հայոց լեզվի կազմավորման հետ կուզընթաց: Անձնանունները առաջացել են հիմնականում հասարակ գոյականներից, բարդ կամ ածանցավոր բառերից, ածականներից:

Մեր ամենաինն անձնանունները կոչվում են նախահայկական կամ խաղյան փոխառություններ: Այս խմբին պատկանող անձնանունները վերցված են հայոց աշխարհի տեղանունների, դաշտերի, լեռների, գետերի ու լճերի անուններից, ինչպես նաև Արամ անունը, որը խաղյան Արամե թագավորի անունից է:

Կան նաև անծանոթ անուններ, որոնք, ըստ Մովսես Խորենացու, հայկական են, բայց չեն մեկնաբանվում հայերենով: Դրանցից են՝ Հայկ, Արմենակ, Արամայիս, Արա և այլն:

Հայոց լեզվից առաջացած բուն հայկական անունների ծագման առաջին շրջանը Հր. Աճառյանը վերագրում է Արշակունյաց ժամանակաշրջանին (64—428 թթ.): Այս անձնանունների ցանկը իր լրացումներով կտրվի սույն հոդվածի շարադրանքի վերջում:

Կա եբրայական և հունական անունների մի մեծ հույլ, որը մուտք է գործել հայոց մեջ քրիստոնեության հետ, Աստվածաշնչի միջոցով: Այդ անունները ներկայումս գոր-

ծածության մեջ են ոչ միայն հայոց, այլև ուրիշ ազգերի մեջ: Եբրայական անուններ՝ Աբրահամ, Իսահակ, Մարիամ և այլն: Հունական անուններ՝ Մարկոս, Դուկաս, Պողոս և այլն:

Հայոց անձնանունների ցանկում տեղ են գտել նաև 1-ին դարի առաջին կեսից մինչև 5-րդ դարի առաջին կեսը՝ 451 թիվը ապրած և ընդհանրական քրիստոնեական եկեղեցու կողմից ճանաչված սրբերի անուններից շատերը: Օրինակ՝ Աթանաս, Անաստաս, Գրիգոր, Գևորգ, Արսեն, Սարգիս, Եփրեմ, Նեկտարիոս, Կատարիոս, Հեղինե, Եվադոքս, Վառվառե, Հռիփսիմե, Գայանե, Մարգարիտ, Սոֆիա, Ագապի և այլն:

Եկեղեցական տոների անունները դարձել են անձնանուններ: Այսպես՝ Ջատիկ, Հարություն, Համբարձում և այլն:

Քրիստոնյա ժողովուրդների սովորության համաձայն, նորածինները կոչվել են նաև իրենց ծննդյան օրը հիշատակվող սրբի կամ տերունական տոնի անուններով:

Ինչպես քրիստոնեությունից առաջ, այնպես էլ հետագա շրջաններում հայոց անձնանունների մեջ քաղաքական և մշակութային ազդեցությունների, սոցիալական փոխհարաբերությունների հետևանքով, մուտք են գործել նաև հարևան ազգերի անձնանունները: Օրինակ՝

Վազգեն, Շավարշ, Անուշ (պենդերենից).
Վահրիճ, Վաղարշ, Ներսես (պաղավերենից).

Աբգար, Եղիշե, Մարթա (ասորերենից).

Բաֆֆի, Սեդա, Ջարիֆ (արաբերենից) .
Ասլան, Թուրֆանտա, Շաքե (սելջուկ-թա-
թարերենից) .

Վիկտոր, Վիկտորյա, Վիգեն (լատիներե-
նից) .

Էծեն, Էդուարդ, Համլետ (եվրոպական լե-
զուներից) .

Վլադիմիր, Սլավիկ, Լիդա, Կիմա, Նադեժ-
դա (ռուսերենից) :

Ռուսական անձնանունները 18-րդ դարից
լայն տարածում էին գտել Ռուսաստանում
ապրող հայերի մեջ, որոնք սովորություն
ունեին իրենց անունները թարգմանել ռու-
սերենով, երբեմն ճիշտ, երբեմն էլ ոչ ճիշտ
կերպով, և ինչպես Հր. Աճառյանն է ասում
«Այս «արվեստի» մեջ նշանավոր են հատ-
կապես Նոր-Նախիջևանի հայերը»¹ :

Երկրորդ համաշխարհային պատերազմից
հետո ռուսական անունները ավելի լայն
տարածում գտան հայոց մեջ: Պատերազմից
վերապրած հայ մարտիկները, վերադառնա-
լով հայրենիք, իրենց զոհված ռուս ընկերնե-
րի անուններն անմահացնելու համար իրենց
նորածիններին կոչում էին իրենց ռազմական
ընկերների անուններով:

Օգտվելով մեծահռչակ գիտնական ակա-
դեմիկոս Հր. Աճառյանի հնգահատոր «Հայ
անձնանունների բառարան» աշխատություն-
ներից և մի շարք այլ գրքերից ու անվանացան-
կերից՝ աշխատել ենք դուրս բերել հայոց
լեզվից ծագում առած արական և իգական
անունների երկու ցանկեր, որոնք ներկայիս
շատ թե քիչ գործածության մեջ են:

Մեր նպատակից դուրս է տալ փոխառյալ
այն անձնանունների ցանկերը, որոնք հայոց
մեջ մուտք են գործել օտար ազգերից՝ ան-
կախ դրանց հայաշունչ լինելուց, պատմա-
կան ու նվիրական լինելուց: Այդպիսի ան-
ձնանունների թիվը շատ մեծ է:

Սույն բառացանկը տրվում է հին ուղղա-
գրությամբ՝ հարապատ մնալու համար Հր.
Աճառյանի կազմած «Հայոց անձնանունների
բառարան» աշխատության ուղղագրությանը
և այբբենական կարգին:

Բառացանկը կազմված է երկու մասից՝
արական և իգական անուններից: Անվան
ոտիդ ձևերը տրված են շեղ տառերով, իսկ
գծիկների մեջ տրված են անձնանվան բա-
ցատրությունները, ապա փաղաքական, կըր-
ճատ կամ բարբառային ձևերը:

ԱՐԱՎԱՆ

Ազատ—ազատ բառից—:

Ազնաուր—հսկայ, դիւցապն—, Ազնաուր,
Ազնուր:

Աղան—ազնուական, իշխան—:

Անդրանիկ—մեծ, երեց, աւագ—, Անդրիկ:

Առաքել—ուղարկել, առաքեալ ձևից—:

Առնակ—այր, քաջ, տղամարդ—:

Ասողիկ—ասող—:

Ասպետ—ձիաւոր իշխան—:

Աստուածատուր—Աստուծոյ տուածը—, Ասա-
տուր, Ասուատուր, Ասօ, Ծատուր, Տատուր:

Արթուն—չքնաղ, զգաստ, ուշադիր—:

Արշալոյս—այգաբաց, լուսաբաց—, Աշիկ:

Աւագ—երեց, անդրանիկ, մեծ—, Աւագիկ:

Աւետիս—բարի լուր—:

Աւետիք—բարի լուր—, Աւետ, Աւօ:

Բաթիկ—բաղ բառից—:

Բարունակ—ճիւղ, ուտ—:

Գալուստ—Հոգեգալուստ օտն—:

Գառնիկ—զառն բառի փաղաքական է:

Գիսակ—վարս, մաւերի հիւս—:

Գիւտ—գտնուած—, Գիւտիկ:

Գնէլ—գնուած—:

Գոռ—հայարտ—, Գոռակ:

Դերենիկ—վանքի սան—:

Եզնիկ—եզն բառի փաղաքական է—:

Երկաթ—կարծր թուխ—մոխրագոյն մետաղ:

Զատիկ—պասեք, Քրիստոսի յարութեան
օտն—:

Զարմայր—զարմանալի այր՝ տղամարդ—:

Զգօն—զգօն, արթուն, ուշիմ—:

Զօրայր—զօրաւոր տղամարդ—, Զօրիկ:

Ընձակ—ինձ կենդանին—:

Թագաւոր—թագաւոր բառից—:

Թաթիկ—թաթ—:

Թաթուլ—թաթ—:

Թռնիկ—թռն բառից—:

Ժիրայր—ժիր այր՝ տղամարդ—:

Իշխան—իշխող, տիրող, պետ—:

Լեռնիկ—լեռն բառից—:

Լուսեղէն—լոյս + եղէն—:

Լորիկ—թոչունի անուն—:

Խաժակ—կապտականաչ աչք—:

Խաչատուր—խաչի տուածը—, Խաչիկ, Խա-
չուկ, Խաչօ, Խաչքօ:

Խաչերես—խաչ + երես—:

Խնդիր—առաջադրանք—:

Խոստիկ—ուխտաւոր—:

Ծառուկ—ծառ բառից—:

Ծերուն—ծերունի բառից—:

Ծովակ—ծովաչեայ, կապուտաչեայ—:

Կայծակ—կայծ բառից—:

Կապուտիկ—Աստծուն տրուած մակդիր, երկ-
նային—:

¹ Հայոց անձնանունների բառարան, Հատոր Ե,
Երևան, 1962, էջ 353:

Կարապետ—առաջընթաց—, Կարապետիկ,
Կարապիս, Կարօ, Կրպօ:
Կորիւն—առիւծի ձագ—:
Կորիճ—հերոս, քաջամարտիկ—:
Հապարապետ—հապար պիւնդրների պետ—:
Համբարձում—Համբարձման տօնի անու-
նից—, Համբօ, Համբիկ:
Հայկապ—Հայկի ցեղից—:
Հայկակ—Հայկ (Orion համաստեղության
անունն է) +ակ փաղաքջական մասնի-
կով—:
Հայկասեր—Հայկի սերնդից—:
Հարապետ—կաթողիկոս—, Հայրիկ, Հայրօ:
Հարապատ—հարապատ բառից—:
Հովիկ—մեղմ քամի—:
Հրանդ—հուր, կրակ բառից—:
Հրաշեայ—հուր + աշք—: Հրաշ, Հրաշիկ:
Չագիկ—ձագ բառից + իկ փաղաքջական մաս-
նիկով—:
Չօնիկ—ձօն (նուէր) բառից + իկ փաղաքջա-
կան մասնիկով—:
Ճնճղուկ—թռչնանուն—:
Մակասար—ուսուցիչ—:
Մանկաւագ—ուսուցիչ—:
Մանուկ—մանուկ բառից—:
Մասիս—մեծ գագաթ—:
Մարգար—մարգարէ բառից—:
Մարտիկ—կռուող—:
Մեխակ—ծաղկանուն—:
Մխիթար—մխիթարանք, սփոփանք—, Միսօ,
Խիթար:
Մկրտիչ—մկրտող—, Մկր, Մկօ, Միկիչ,
Մուկուչ:
Մկրտում—մկրտութիւն բառից—:
Մնացական—մնալ բառից (մնացակա՛ն լինի,
երկար կեանք ունենայ) —, Մացակ, Մնաց:
Մոմիկ—մոմ բառից—:
Յարութիւն—Յարութիւն կամ Չատիկ տօնի
անունից—, Արթին, Արութին, Յարութ,
Արթաքի, Արթօ:
Յուսիկ—յոյս բառից—:
Նահիրի—մեր երկրի նախապատմական ա-
նունն է—:
Նահապետ—տոհմապետ, ցեղապետ, ծերու-
նապարդ այր—:
Նարեկ—տեղանուն—:
Նաւասարդ—ամսանուն—:
Նշան—խաչի նշան—:
Նորայր—նոր + այր (մարդ) —:
Նորապետ—նոր + պետ—:
Նորաւագ—նոր + աւագ—:
Նորիկ—նոր բառից + իկ փաղաքջական մաս-
նիկով—, Նորի, Նորին, Նորուկ:
Նուէր—նուէր, ընծայ, պարգև—:
Շանթ—շանթ բառից—:
Շերամ—մետաքսի որդը—:
Շիրակ—տեղանուն—:

Շնորիք—շնորհք բառից—:
Ոսկան—ոսկի բառից—, Ոսկեակ:
Ոսկի—ազնիւ, թանկարժէք մետաղ—:
Ոստանիկ—արքայական տոհմից սերուած,
մեծ քաղաքի՝ ոստանի բնակիչ—:
Որդիք—որդիներ—:
Պատուական—պատուական (ընտիր, ազնիւ)
բառից—:
Պատրիկ—իշխանական աստիճան—:
Պարգև—պարգև, ընծայ—:
Պարէտ—վերակացու, հսկող—:
Պարթև—յաղթանդամ, հսկայ—:
Պարոյր—ջրջան, պտոյտ—:
Պերճ—պերճ, փառաւոր—:
Պսակ—պսակ բառից—:
Պստիկ—պստիկ, փոքր—:
Չաջուռ—նորածիլ բոյս—:
Չոչիկ—մեծ, մեծաւոր, աւագ—:
Ռազմիկ—մարտիկ, պիւնդր—:
Սասուն—տեղանուն—, Սասունիկ:
Սեպուհ—իշխանական տիտղոս—:
Սերովբէ—հրեշտակների մի դասախմբի ա-
նուն է—, Սերոբ:
Սևակ—սև + ակ—, Սևեկ, Սևի, Սևիկ, Սևուկ:
Սիրական—սիրական բառից—:
Սուր—թուր—:
Սօսոր և Սօսի—ծառատեսակ—:
Վահագն—դիցանուն—:
Վահան—պաշտպանական զէնք, ասպար—,
Վահանիկ:
Վանատուր—վանքի տուածը—:
Վարդգէս—վարդ + գէս (մալ) —:
Վարդերես—վարդ + երես—:
Վարուժան—արու թռչուն—:
Վրէժ—վրէժ բառից—:
Տիրայր—Տիրոջ մարդը—:
Տիրատուր—Տիրոջ տուածը—, Տատուր:
Տօնական—տօն բառից—, Տօնակ, Տօնիկ,
Տօնօ:

Տօնապետ—տօն + պետ—:
Տօնաւագ—տօն + աւագ—:
Յոլակ—ցոլալ բառից—:
Ուխտանէս—ուխտ բառից, Ուխտիկ:
Փաղակ—կայծակի փայլատակումը—:
Քաջիկ—քաջ + իկ փաղաքջական ածանցով—:
Քերովբէ—հրեշտակների մի դասախմբի ա-
նուն է—, Քերոբ:


ԻԳԱԿԱՆ


Ազատուհի—ազատ + ուհի իգականակերտ
մասնիկով—:

Ազգանոյշ—ազգ + անոյշ—:
Ազնիւ—ընտիր, պատուական—:
Ալվարդ—ալ (կարմիր) + վարդ—:
Աղանիւ—թռչունի անուն—, Աղաւ, Աղանիկ:
Ալեանիկ—ալծեամ բառից—, Ալծիկ:

- Անգինէ—շատ թանկագին—, Անգին:
Անթառամ—անթառամ, անթարշամ, չթոռոմող—:
- Աստղիկ—աստղ բառից—:
Արեգնապան—արեգ (արև) + նապ (նապանք)—, Արեգ, Արեգնապ:
Արև—արև, արեգակ բառից—, Արևիկ:
Արևհաստ—արև + հատ (հատիկ)—:
Արծուիկ—արծիւ թռչնանունից—:
Արշաղոյս—արշալոյս, լուսաբաց բառից—, Արշո:
- Արուսեակ—մոլորակի անուն—, Արուս:
Արփիկ—արև—, Արփենիկ, Արփի, Արփիկ:
Բաւական—բաւական բառից—:
Բերկրուհի—բերկրանք բառից + ուհի մասնիկով—:
Բիւրեղ—թանկագին քար, թափանցիկ վճիտ ապակի—:
- Բուրաստան—ծաղկանոց—:
Բրաբրոն—ծաղկանուն—:
Գարուն—գարուն բառից—, Գարունիկ:
Գեղանոյշ—գեղ (գեղեցկութիւն) + անոյշ—, Գեղուշ, Ղուշիկ:
Գեղեցիկ—գեղեցիկ բառից—:
Գեղուհի—գեղեցկուհի—:
Գոհար—թանկագին, ապնիւ քար—, Գոհարիկ, Գոհարիկէ:
- Դալար—բուսնող, կանաչ, թարմ—:
Դեղձանիկ—թռչնանուն—:
Դշխուհի—թագուհի—:
Դոխիկ—աղանիկ—:
Եղնար—եղնիկ—:
Եղներ—եղնիկ—:
Երանեակ—երանի բառից—, Երանիկ:
Երանուհի—երանի բառից—, Երան:
Երջանիկ—երջանիկ, յաջողակ, անհոգ, բախտաւոր—, Երջիկ, Երջօ:
- Չանապան—տեսակ-տեսակ—:
Չարդար—վարդարեկ բառից—, Չարդարիկ:
Չարմուհի—քրոջ կամ եղբոր աղջիկ—:
Չեփիւռ—մեղմ քամի—:
Չուարթ—վուարթ, աշխոյժ, կենսուրախ—:
Շնծայ—նուէր—:
Շնծանոյշ—Շնծակի իգականն է, որը առաջացել է ինձ կենդանու անունից—:
Թագուհի—թագաւորի, արքայի կին—:
Թանգ—մեծագին, արժէքաւոր—, Թանգիկ:
Թուխիկ—թուխ բառից + իկ փաղաքշական մասնիկով—:
Թուխձամ—թուխ + ձամ (մալ) —:
Թռչնակ—թռչուն բառից—:
Ժամխաթուն—ժամի տիկին—:
Իմաստուհի—իմաստ բառից + ուհի իգականաւոր անունիցով—:
Իշխանուհի—իշխանի կին—:
Իսկուհի—տիրուհի, թագուհի, ղշխոյ—, Իսկուն, Սկուն:
- Իղաբեր—իւղ բերող—, Իղիկ:
Լեռնուհի—լեռնաբնակ, լեռնում ապրող (կին կամ աղջիկ) —:
Լուսաբեր—լոյս բերող—:
Լուսածին—լոյսից ծնուած—:
Լուսանոյշ—լոյս + անոյշ—:
Լուսիկ—լոյս բառից + իկ փաղաքշական մասնիկով—:
Լուսին—Երկրի արբանեակի անունը—:
Լուսինէ—լոյս արմատից—:
Լուսնթագ—մոլորակի անուն—:
Լուսնարդ—լոյս և վարդ բառերից—:
Խաչանոյշ—խաչ + անոյշ—:
Խաթուն—տիրուհի, տիկին, յարգելի՝ պատուաւոր կին—:
Խաչխաթուն—խաչ + խաթուն—:
Խոնարի—խոնարի (համեստ, հեպ) բառից—:
Խոնար—փոքր-ինչ շիւ, անոյշ հայեացքով—:
Ծաղիկ—ծաղիկ բառից—:
Ծաղկինէ—ծաղիկ բառից—:
Ծամուկի—ծամ (մալ) + ուկի—:
Ծխածան—ծիրանի գօտի, աղեղնակ—:
Ծովիկ—ծով + իկ փաղաքշական մասնիկով—:
Ծովինար—փայլակ—:
Կաքաւ—թռչնանուն—, Կաքաւիկ:
Համաափիւռ—ծաղկանուն (որ իր բոքմունքը սփռում է ամէն կողմ) —:
Համեստ—համեստ (խոնարի, հեպ) բառից—:
Հայաստան—մեր երկրի անունը—:
Հայկանոյշ—Հայկ + անոյշ (աղջիկ) —, Հայկուշ:
Հայկուհի—Հայկ + ուհի իգականակերտ մասնիկով—:
Հեղնար—եգ եղնիկ—:
Հերիք—բաւական—:
Հերիքնապ—հերիք + նապ (հերիք ինչքան նապ ես անում) —:
Հնապանդ—լսող, անսացող, հլու—:
Հուրիկ—հուր (կրակ) + իկ փաղաքշական մասնիկով—:
Հրանոյշ—հուր + անոյշ—, Հրուշ:
Հրաչուհի—հուր + աչք + ուհի (կրակի նման վառվռուն աչքեր ունեցող) —:
Հրավարդ—հուր + վարդ (կրակի նման կարմիր վարդ) —:
Հրարփի—հուր + արփի (հրափայլ արև) —:
Չայնիկ—ձայն բառի փաղաքշականը—:
Չուիկ—ձու բառի փաղաքշականը—:
Մամախաթուն—մամա + խաթուն (պատուաւուն) —:
Մայրանոյշ—մայր + անոյշ—:
Մանանայ—մանանայ (զապպէն) բառից—, Մանա, Մանայ, Մանան, Մանայ:
Մանիշակ—որ և Մանուշակ—ծաղկանուն—, Մանուշ:
Մարգարիտ—մարգարիտ բառից—, Մարգօ:
Մարինէ—սաքուր բառից—:

- Մաքրուհի—մաքուր բառից + ուհի իզականա-
 կերտ մասնիկով—, Մաքրիկ, Մաքրուն,
 Մաքո:
 Յաղթուհի—յաղթ (մեծ, բարձր, հզոր) ար-
 մատից—:
 Յասմիկ—ծաղկանուն—:
 Նապելի—շնորհալի, սիրելի, չքնաղ,—Նապա-
 նի, Նապենի, Նապի, Նապիկ, Նապունկ,
 Նապունտ:
 Նաիրա որ և նաիրէ կամ նաիրուհի—Նաիրի
 անվան իզական ձևը—:
 Նախշուն—կարդարուն, գեղեցիկ, սիրուն—:
 Նաներ—նան (մայր, մայրիկ) բառի հոգնա-
 կին է—, Նանիկ, Նանուշ:
 Նարդուհի—նարդոս ծաղկանունից—:
 Նշանուհի—Նշան անունի իզական ձևը—:
 Նուէրիկ—նուէր բառից—:
 Նունուֆար—ծաղկանուն—:
 Նուշիկ—նուշ, բաղամ բառից—, Նուշօ:
 Շաղոսկի—շաղ + ոսկի—, Շաղիկ:
 Շամամ—պտղանուն—, Շամիկ:
 Շնորհիկ—շնորհ բառից—:
 Շողակաթ—շող կաթելը—, Շողեր, Շողի,
 Շողիկ:
 Շուշան—ծաղկանուն—, Շուշանիկ, Շուշիկ:
 Ոսկեհատ որ և ոսկի հատ—ոսկու հատիկ—:
 Ոսկի—ոսկի բառից—:
 Ովաննա—օրհներգութիւն—, Օսան, Օսիկ:
 Չնաշխարհիկ—աշխարհում նմանը չգտնուած,
 գեղեցիկ—:
 Պայծառ—պայծառ, լուսաւոր, փայլուն—:
 Պարպիկ—պարպ (պարպասեր) աղջիկ—:
 Պերճուհի—Պերճ անունից + ուհի իզականա-
 կերտ մասնիկով—, Պերճիկ:
 Պսակուհի—պսակ բառից—:
 Ռեհան—ծաղկանուն—:
 Սէրիկ—սէր բառից—:
 Սիրանոյշ—Սէր + անոյշ—, Սիրան, Սիրուշ:
 Սիրարփի—սէր + արփի (արն) —:
 Սիրիկ—Սէրիկ անվան հին ձևը—:
 Սիրուն—Սիրուն, գեղեցիկ—, Սիրունիկ:
 Սիրվարդ—սէր + վարդ (սիրուց ծած վարդ) —:
 Սոնա որ և Սոնիա—բարձրահասակ, վայել-
 չազեղ,— Սոնիկ:
 Սուսամբար—ծաղկանուն—, Սուսամ, Սուսայ,
 Սուսօ:
 Սրբուհի—սուրբ բառից ուհի իզականակերտ
 մասնիկով—, Սուրբիկ, Սրբուն, Սրբօ:
 Սօսի—ծառի անուն—:
 Վարդեհատ—վարդ + հատ—:
 Վարդենի—վարդի թուփ—:
 Վարդիթեր—վարդի թերթ—:
 Վարդիշաղ—վարդի ցօղ—:
 Վարդուհի—վարդ բառից—, Վարդուկ, Վար-
 դուշ:
 Վարսենիկ—վարս (մալ) բառից—, Վարսիկ,
 Վարսօ:
 Վեհանոյշ—վեհ + անոյշ—, Վեհիկ:
 Տաթևիկ—տեղանուն—:
 Տիրուհի—տէր բառի իզական ձևը—, Տիրուն:
 Յօիւնէ—ցօղ բառից—:
 Յօիկ—ցօղ բառից—:
 Փարուն—փայլ ունեցող—, Փայլիկ:
 Քնար—քնար՝ երաժշտական գործիքի անու-
 նից—, Քնարիկ:
 Քնքուշ—նուրբ, փափուկ, մեղմ, նապելի—:
 Օղեր—օղ բառի հոգնակին—:
 Օրիկ—օր բառի փաղաքական ձևը—:





ՊՐՈՖ. ՎԱՐՍԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՈՒԻ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1956—1980)***

**ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ**

Գեղարդա վանքի կամ Այրիվանքի հըռ-
չակավոր ճարտարապետական համալիրը՝
բաղկացած ժայռափոր և վերգետնյա եկեղի
հուշարձաններից, դարձավ ս. Էջմիածնի
Մայր Աթոռի հոգատարության առարկան տա-
կավին Գևորգ Ջ կաթողիկոսի գահակալու-
թյան օրերից: Սակայն վանքի վերաշինու-
թյան և բարեկարգման ուղղությամբ այստեղ
աշխատանքներ ձեռնարկվեցին ավելի ուշ,
Վազգեն Ա կաթողիկոսի օրով, սկսած 1958
թվականից և շարունակվում են մինչև այսօր:

Հավատացյալ և պոսաշրջիկ այցելուների
մեծ հոսքը հնարավորություն չէր ընձեռում
այստեղ ծավալուն աշխատանքներ կազմա-
կերպել, ուստի նպատակահարմար էր դրանք
իրականացնել մաս առ մաս, որոշ հերթակա-
նությամբ: Առաջին հերթին տուֆաքարով սա-
լարկվեց բակը (ըստ ճարտարապետ Ա. Գա-
լիկյանի նախագծի) և նրա հարավ-արևելյան
կողմում կառուցվեց մի աղբյուր (հեղինակ՝
ճարտարապետ Ռ. Իսրայելյան): Աղբյուրի և
ոռոգման կարիքների համար ջուրը բերվեց
Գողթ գետակի ձախափնյա աղբյուրներից:
Վերոհիշյալ աշխատանքները կատարվեցին
Մայր Աթոռի շինարարական գրասենյակի մի-

ջոցով ու լիակատար ավարտի հասցվեցին
1959 թվականին:

Վերաշինության հաջորդ աշխատանքը ե-
ղավ վանքի գլխավոր (հարավ-արևմտյան)
դարպասի շինությունը: Վանքի նախկին դար-
պասը կիսափված վիճակում էր գտնվում,
կարիք ուներ քանդվելու և վերաշինվելու:
Աշխատանքների կատարումը հանձն առավ
Հայկական ՍՍՀ Շինարարության պետա-
կան կոմիտեի՝ Պետշինին առընթեր հատուկ
գիտա-արտադրական արվեստանոցը ու ա-
վարտեց այն 1960 թվականի վերջում:

Բարեկարգման հետագա աշխատանքների
ընթացքում նկատի առնվեց Վեհափառ Հայ-
րապետի ցանկությունը՝ վանատան նոր շենք
կառուցելու մասին:

Վանքատարածության բարեկարգումը, բա-
ցի բակի սալարկումից, ընդգրկեց նրա հյու-
սիս-արևմտյան կողմի դարավանդներում տե-
ղավորված խուցերի արտաքին պատերի ու
թաղակապ ծածկերի վերանորոգումը, նոր
յուների ու պատուհանների տեղադրումը, ինչ-
պես նաև քարե բաց սանդուղքների կառու-
ցումը դեպի Հաղբակյանների դամբարանը և
բակի հյուսիս-արևելյան կողմի ժայռափոր
շտեմարանները: Վանքի հին շենքերի արև-
մտյան վերջավորության և նոր վանատան
միջև քարե սանդուղքներ կառուցվեցին, որ-
պեսզի կապ ստադծվի վանքի և արտաքին
բակերի միջև:

Գլխավոր եկեղեցու և ժամատան կտուրնե-
րի քարե կղմինդրների անսարք վիճակի

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվա-
կանի № № ԺԱ—ԺԲ-ից և 1984 թվականի № № Ա—
Դ-ից:

պատճառով խոնավություն էր թափանցում նրանց ծածկի մեջ, առաջացնում կաթոցներ: Որպես ժամանակավոր միջոցառում, կտուրների բոլոր լանջերը (բացի գմբեթի վեղարից) թիթեղապատվեցին: Մինչև ժամանակ ստորգետնյա և ապարային ճեղքերից ժայռափոր տաճարների մեջ ներծծվող ձևիալի և անձրևաջրերի վնասապետումը շարունակեց մնալ լուրջ մտահոգության առարկա: Մինչ համապատասխան մասնագետների կողմից կնշակվել հատուկ նախագիծ, և ձեռք կառնվեին ջրահեռացման համար ներգործուն միջոցներ, փորձարարական կարգով ժայռապանգվածի գագաթի ապարային ճեղքերը փակվեցին ցեմենտի հեղուկ շաղախի ներարկման միջոցով: Թեև դրա հետևանքով ներթափանցվող ջրերի քանակը պակասեց, բայց իսպառ չվերացավ:

Որպեսզի Գեղարդաձոր մոտողների տեսադաշտում հատակ և ամբողջովին երևա վանական համալիրի գեղատեսիլ հումայնապատկերը, նպատակահարմար համարվեց քանդվեղարացնել հարավակողմյան շենքերի միջին հատվածի վրա ուշ ժամանակներում (հավանաբար 19-րդ դարի վերջին կամ 20-րդ դարի սկզբին) հավելված երկրորդ հարկը՝ բակի կողմի փայտաշեն պատշգամբի և սանդուղքների հետ միասին:

Երբ հիմնականում ավարտվեցին պարիսպներով ներփակված վանքի բակի բարեկարգման աշխատանքները, խնդրո առարկա դարձավ պարսպապատի սահմաններից դուրս գտնվող շրջապատի բարեկարգման հարցը: 1966 թվականին պատրաստվեց Գեղարդա վանքի ընդհանուր բարեկարգման նախագիծը: Կենսագործելով նախագիծը՝ հարավային պարսպապատից և նրա արևմտյան շարունակությամբ կառուցվելիք վանատնից ներքև ստեղծվեց հենապատով սահմանապատված վանքի արտաքին բակը: Որոշվեց նաև մատաղատունը և հասարակական կուգարանները տեղադրել երկու բակերի սահմաններից դուրս, Գողթ գետակի աջափնյա ոչ մեծ տարածքի վրա:

Վերը նշվածներով ավարտվեց Գեղարդա վանքի օժանդակ շենքերի վերաշինության և վանքի շրջապատի ընդհանուր բարեկարգման աշխատանքների առաջին փուլը: Հավարտ այդ բոլորի, բակի հյուսիս-արևմտյան ռարավանդի պատին (դեպի Հաղբակյանների տոհմական դամբարանը տանող սանդուղքների ձախ կողմում) փակցվեց տախտակ՝ հետևյալ արձանագրությամբ.

«Ի Հայրապետության S. S. Վազգենի Ամենայն Հայոց կաթողիկոսի լամի 1965—1971 վերանորոգեալ պայծառա-

ցաւ սուրբ տաճարս այս հանդերձ շրջապատիւքն արդեամբ ամբրիկաբնակ Էդուարդ Մարտիկեանի՝ հարապատ որդւոյ Մայր Աթոռոյ. ի վայելումն ապգիս հայոց»:

Հաջորդ տարիներին պզալի ծավալ ստացան դարձյալ բազմաբնոյթ աշխատանքները Գեղարդա վանքում: Դրա շարժառիթը 1978 թ. սեպտեմբերին Երևանում հրավիրվող հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովը հանդիսացավ: Պետական, գիտական և հասարակական շատ մարմիններ ու կազմակերպություններ սկսեցին նախապատրաստվել այդ կարևոր իրադարձությանը: Անմասն չմնաց նաև ս. Էջմիածնի Մայր Աթոռը:

Մշակվեց և հաստատվեց գիտաժողովի հրավիրման կապակցությամբ Մայր Աթոռի շինարարական միջոցառումների մի ծրագիր, որի մեջ առանձնահատուկ տեղ հատկացվեց Գեղարդա վանքին:

Այստեղ կատարվելիք աշխատանքներն ընդգրկում էին ինչպես վանքապատկան շենքերի հետագա վերաշինության, այնպես էլ հիդրոտեխնիկական կարգի արդյունավետ միջոցառումներ՝ ժայռափոր տաճարների մեջ ներթափանցող ջրերը վնասապետելու նպատակով: Բացի այդ, անհրաժեշտ էր էլեկտրական լուսավորության օդային գիծը փոխարինել ստորգետնյա (կաբելային) գծով:

Միջնադարյան վանական շենքերի վերանորոգումը կատարվեց 1978 թ.՝ ծրագիր ունենալով տարբեր նպատակների համար դրանք օգտագործելի դարձնել: Արևելյան հատվածը հատկացվում էր միաբանական սեղանատանը, իսկ հարավայինը՝ թանգարանին: Բոլոր պատերի վերնամասերը նորոգվեցին ու պրոսակվեցին բազալտյա գոտեձև քիվով, հիմնովին կարգի բերվեցին կտուրները՝ ապահովվելով անջրանցիկ ծածկույթով, ապա սարկվեցին սուֆաքարով: Այս աշխատանքների ընթացքում վանական շենքերի հարավային շարքի մի ծայրում, փլատակների միջից բացվեցին դեպի տանիքը տանող քարե կիսաքանդ սանդուղքներ, որոնք վերականգնվեցին:

Միաբանական սեղանատունը օժտված է որոշ հարմարություններով: Ճաշասրահի (մուտքով թաղակապ միջանցքից) հյուսիսային կողմից հաջորդաբար տեղավորված են խոհանոցն ու հացատունը, իսկ թաղակապ միջանցքից հարավ՝ սանիտարական հանգույցը: Ոչ մեծ չափերի թաղածածկ ճաշասրահը՝ կենտրոնում տեղավորված մարմարյա սեղանով ու ներքին ձևավորման տարրերով, մրտերմիկ է:

Սեդանատան հանդիսավոր բացումը, նախագահությամբ Վեհափառ Հայրապետ Վաչգեն Ա-ի, տեղի ունեցավ 1978 թվականի սեպտեմբերի 7-ին:

Թանգարանին հատկացված սենյակներում շինարարական միջամտությունը պակաս չափով եղավ: Նրանց հնամենի տեսքը պահպանելու նպատակով պատերն ու թաղակապ առաստաղները, ծեփով չսվաղվեցին: Միայն սալարկվեցին հատակները, մուտքի և ելքի հանգույցներում սանդուղքներ կառուցվեցին: Այցելուների շարժման գրաֆիկը կարգավորելու նպատակով, առանձին պատերում դռները բացվեցին, մի այլ տեղ դուռը փակելով՝ երկկողմանի խորշի վերածվեց: Թանգարանում Գեղարդա վանքի և շրջակայքի պատմա-ճարտարապետական հուշարձաններին նվիրված ցուցադրության ծրագրի կազմումը հանձնարարվեց ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանին, իսկ կահավորման և ներքին ձևավորման նախագծի մշակումը՝ նկարիչ Գրիգոր Խանջյանին:

Հարկ է գոհունակությամբ նշել, որ շնորհիվ Մայր Աթոռի շինարարական գրասենյակի վարպետների խմբի բարեխղճության, աշխատանքները կատարվեցին պատշաճ որակով: Գլխավոր եկեղեցու բարեկարգման նրպատակով նրա հարավային դուռը փոխառինվեց մի նոր, քանդակավարդ դռնով:

1978 թ. հաջողվեց ավելի գործնականորեն պեղվել ժայռավոր տաճարները ներծծվող ստորգետնյա ջրերից վնասապերծելու հարցով: Կառավարության առաջադրանքով մի քանի մասնագիտացված հիմնարկների հանձնարարվեց պեղվել Գեղարդա վանքի տարածքի երկրաբանական կառուցվածքի և ստորգետնյա ջրերի քանակի ու հոսքի ուղղության ուսումնասիրությամբ, իսկ «Հիդրոնախագիծ» ինստիտուտի հայկական բաժանմունքին՝ մշակել ջրահեռացման միջոցառումների նախագիծ:

Նկատի ունենալով կատարվելիք աշխատանքների խիստ մասնագիտական բնույթը՝ նախագծի իրականացումը հանձնարարվեց Հայկական ՍՍՀ մեխորացիայի և ջրային միևնույնության մասնագիտացված շինարարական կազմակերպությանը: 1978—79 թթ. ծավալված աշխատանքներն ընթացան բացառիկ աննպաստ պայմաններում, քանի որ թեք տեղանքը դժվարացնում էր շինանյութի մուտեցնելը և շինարարական մեքենաների օգտագործելը:

Կատարված նախնական դիտարկումները համոզում են, որ ձեռք առնված ինժեներական միջոցառումները պետք է ծառայեն իրենց նպատակին՝ դրանով իսկ դադարեցնել

յով ժայռավոր տաճարների հետագա քայքայման պրոցեսը:

Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովի երավորման առիթով բազմաբնույթ աշխատանքներ Գեղարդա վանքի տարածքից դուրս կատարվեցին պետական միջոցներով ու պետական մարմինների ջանքերով: Դրանցից ամենածանրը բաժին ընկավ Հայկական ՍՍՀ խճուղային ճանապարհների շինարարության և շահագործման միևնույնությանը, որի նպատակապես ու կազմակերպված գործունեության շնորհիվ մի քանի ամիսների ընթացքում հաջողվեց հիմնովին վերակառուցել Երևան-Գառնի-Գեղարդ խճուղային ճանապարհը: Գեղարդաձորում դրա վերջավորությունը ուղղվեց, լայնացվեց և թեքությունը կանոնավորվեց: Ստեղծվեց ընդարձակ կանգառ ավտոմեքենաների համար:

Ուխտավորների և այցելուների սպասարկման գործը բարելավելու նպատակով Գողթ գետակի ձախափնյա թեք լանջերին կառուցվեց մատաղատուն:

Ինչպես արդեն նշվեց, տարիներ առաջ գլխավոր եկեղեցու և ժամատան կտուրները ժամանակավորապես թիթեղապատվեցին՝ կաթոցքը դադարեցնելու համար: Գեղարդա վանքի վերաշինության և բարեկարգման ընդհանուր ծրագրի մեջ էր մտնում թիթեղի ծածկի վերացումը և միջնադարյան սալածածկի վերականգնումը:

Հայկական ՍՍՀ Պետշինի գիտա-վերանորոգման արտադրական արվեստանոցը, հանձն առնելով սալածածկերի վերականգնումը, 1979 թ. գառնանից ծավալեց նախապատրաստական աշխատանքներ: Գլխավոր եկեղեցու շուրջը, մինչև վեղարի գագաթը, կապվեցին փայտամածներ, թիթեղածածկի տակից բացվեցին կտուրի և վեղարի առանձին հատվածներ՝ ստուգելու համար հին սալածածկի վիճակը: Չուգահեռաբար միջոցներ ձեռնարկվեցին համապատասխան քարի հայթայթման ուղղությամբ, որի համար Գեղարդա վանքից ոչ հեռու, Գողթ գյուղից վեր, կազմակերպվեց լավորակ բազալտի քարհանք: Գեղարդա վանք փոխադրվեց փորձառու քարագործ վարպետների 10 հոգուց բաղկացած մի խումբ ու աշխատանքի ղեկավար նշանակվեց ինժեներ Ս. Նալբանդյանը:

Եկեղեցու կտուրի լանջերի և վեղարի սալածածկը (որը տուֆաքարով նորոգվել էր ուշ միջնադարում) գտնվում է անմխիթար վիճակում, քայքայված է, ճաքճված ու խախտված, հետևաբար ամբողջովին ենթակա է փոխարինման:

Այս կապակցությամբ արդեն կազմված է եկեղեցու և գավթի կտուրների վերանորոգման նախագիծ:

ՍԻՍԱՎԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Սիսիանի շրջանային կենտրոնից դեպի արևմուտք մի բարձունքի վրա առանձնակի կանգնած Սիսավանի Ս. Հովհաննես եկեղեցին վաղ միջնադարի հայ ճարտարապետության ուշագրավ կոթողներից է:

Այս եկեղեցու կառուցման թվականի մասին մատենագրական հավաստի տեղեկություններ չունենք⁷²: Սակայն ելնելով եկեղեցու ճարտարապետական ձևերից՝ կարծվում է, որ այն կառուցվել է 6—7-րդ դդ.⁷³: Տաճարի վրա պահպանված բարձրաքանդակների ու դրանց շուրջն եղած փմագրությունների, ինչպես նաև ճարտարապետական առանձնահատկությունների ուշադիր ուսումնասիրության միջոցով կառուցման ժամանակը համարվում է 7-րդ դարի 80—90-ական թվականները⁷⁴:

Հռիփսիմեատիկ այս հուշարձանի գլխավոր տրամախճներից մեկն այն է, որ, պատկանելով նույն դարաշրջանին, մեկ է հասել համեմատաբար պակաս չափով աղավաղված փիճակում (հատկապես ստորին մասերում և ներսից), թեև վերնամասերը խիստ կարիք ունեն վերաշինության: Անհրաժեշտ էր վերացնել անհայտ ժամանակներում կատարված անորակ վերակոթողություններից առաջացած աղավաղումները, անպետքացած թիթեղածածկը, վերաշինել գմբեթի թմբուկի խարխուլված վերնամասը, վեղարը և հիմքի տուրբերը, վերականգնել քանդված պատերը, կլետուրի բոլոր լանջերը առնել հուսալի ծածկի տակ:

Վերը նշված առաջադրանքով ս. Էջմիածնի Մայր Աթոռը պատվիրեց Հայկական ՍՍՀ Պետշինի հուշարձանների վերականգնման հատուկ գիտա-արտադրական արվեստանոցին կազմել նախագիծ:

Ամբողջական վերականգնման նպատակադրությամբ կազմված նախագիծը, նույն արվեստանոցի միջոցով, ճարտարապետ Դ. Ավետիսյանի ղեկավարությամբ սկսեց իրականացվել: Նախապես եկեղեցու շրջապատում

կատարվեցին պեղումներ ու առանձնացվեցին հուշարձաններին պատկանող հայտնաբերված քարերը: Այս, փայտամածներ կապվելուց հետո, ներսից ու դրսից համարակալվեցին խարխուլված թմբուկի քարերը և Վոլշույամբ, մեկ առ մեկ իջեցվեցին ու դասավորվեցին գետնի վրա, որպեսզի հետո, նույն հերթականությամբ, իրենց տեղերը դրվեն:

Թմբուկի ու նրա վրայի որմնանկարները վերականգնվեցին: Հետո գմբեթի հիմքը՝ գմբեթից առաջացած հիման ուծերից հուսալի կերպով պաշտպանելու համար, նպատակահարմար համարվեց թմբուկի վերնամասում, ողջ պարագծով, գրկող երկաթբետոնյա (ներսից ու դրսից չնրկացող) գոտի տեղադրել: Վերականգնվեցին նույնպես գմբեթն ու վեղարը, ինչպես նաև կտուրի լանջերը:

Այս աշխատանքների ընթացքում վերանայվեց ճակտոնների թեքության հարցը: ճակտոններին տրվեց այնպիսի թեքություն, որպեսզի չծածկվեն լուսամուտների ներքնամասերը: Գմբեթն ու կտուրի բոլոր լանջերը ծածկվեցին քարե սալերով:

1961 թ. երկրորդ կեսին սկսված աշխատանքները Յուլակ Սարգսյանի գլխավորած որակյալ քարագործ վարպետների ջանքերով ավարտվեցին հաջորդ տարվա սեպտեմբերին, որից հետո կատարվեց շրջապատի մասնակի բարեկարգում:

ԷԶՄԻԱԾՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈԳՈՒՄ, ԲԱՐԵԶԱՐԴՈՒՄ, ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՊԱՐՍՊԱՊԱՏՈՒՄ

1694 թ. Նահապետ Եղեսացի կաթողիկոսի օրոք և Աղամալ Հոռոթեցի իշխանի միջոցներով Էջմիածնում կառուցված ս. Հողակաթ եկեղեցին որոշակի հետաքրքրություն է ներկայացնում որպես վաղ միջնադարում ստեղծված ու գմբեթավոր դահլիճ եկեղեցիների (Պողոսի, Արուճ) տիպի ուշ միջնադարյան նմուշ: Հողակաթի եկեղեցին իր նախօրինակներից տարբերվում է արևմտյան կողմից եկեղեցու հետ միաժամանակ կառուցված կամարակապ սրահով, որի կտուրը պսակված է պուլնապարդ պանգակատնով:

Հուրջ 300 տարվա ընթացքում եկեղեցին թեև մասնակի նորոգումների է ենթարկվել, սակայն հիմնականում պահպանվել է անադարտ փիճակում: Այնուհանդերձ մեր օրերում նրա առանձին մասերը, հատկապես կլետուրը, գմբեթի թմբուկի հիմքը ու այլ մասեր, կարիք ունեն նորոգման, իսկ վանքի շրջապատը՝ բարեկարգման ու ցանկապատման: Դրա համար հարկ էր նախապես պեղվել բակի սահմանների ճշտումով և կատարվելիք աշխատանքների ծրագրումով:

⁷² Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1893, էջ 212, Երվանդ Լալայան, «Ազգագրական հանգես», 1898, էջ 188:

⁷³ Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, ст. 90. В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, ст. 12. А. Б. Еремян, храм Рипсимэ, Ереван, 1956, ст. 102.

⁷⁴ Ս. Մաքսկանյան, Սիսավանի պատկերաքանդակները և տաճարի կառուցման ժամանակը, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ, 1961, № 10, էջ 63—76:

Այնուհետև նպատակահարմար համարվեց եկեղեցու կտորի նորոգման աշխատանքները հանձնարարել Պետոյի հատուկ գիտավերականգնման արտադրական արհեստանոցին: Նրա աշխատակից Հարություն Գասպարյանը կատարեց եկեղեցու մանրակրկիտ չափագրությունը և մշակեց նորոգման նախագիծ, որն ավարտելով 1960 թ. մարտին, հիմք ծառայեցրեց նորոգման աշխատանքների ծավալման համար: Դրանք գերազանցապես քարային էին:

Վերաշարվեցին կտորի խարխուլած ծածկասալերը, ավերվածները փոխարինվեցին նորերով, լրացվեցին քիվի պակասող քարերը, ողջ կտորը մաքրվեց մամռակալումից և օծվեց բուսական յուղով (կանխելու համար ջրերի ներծծումը): Կարգի բերվեցին բոլոր պատուհանների ուղիղ և թեք գոգերը, հենացվեց նրանց վրայից կրաշաղախ սվաղը՝ փոխարինվելով տուֆաքարի շարվածքով:

Եկեղեցու ներքին բարեկարգման մաս կապվեցին ավագ խորանում կառուցված սեղանը և երկաթակուռ ջահը:

Բակի պարսպապատումը և բարեկարգումը կատարվեց ճարտարապետ Յ. Չախալյանի նախագծով: 1979 թ. բակի հյուսիսային պատին կից, ներսի կողմից, կառուցվեց հասարակական բուժարան, և այդ կապակցությամբ անցկացվեցին ջրամատակարարման և կոյուղու գծեր, ինչպես նաև բակում տեղադրվեց ցայտաղբյուր:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՋՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈԳՈՒՄ, ԲԱՐԵԶԱՐԴՈՒՄ ԵՎ ՇՐՋԱՊԱՍԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ս. Ջորավորը Երևանի ուղ միջնադարյան շրջանի եկեղեցիներից է՝ կառուցված հին եկեղեցու տեղում, որն ունի իր նախապատմությունը⁷⁵:

Ինչպես վկայում է Առաքել Դավրիժեցին, սրա տեղում «կայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի՝ շինեալ ի վերայ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, որ էր ի հիւսիսային կողմանէ քաղաքին Երեւանայ ի մէջ այգեստանացն և էր աւերակ և անմարդաբնակ»⁷⁶:

Ընդառաջելով Ամիրգունա խանի առաջարկին և Երևանի բնակիչների խնդրանքին՝ Մովսես Տաթևացի վարդապետը (հետագայում կաթողիկոս) Անանիայի մատուռի ավան-

դական տեղում կառուցում է եկեղեցի, ժամատուն, միաբանական խցեր և այլ շենքեր, հիմնում մի բարգավաճ վանք, որի համբավը տարածվում է երկրի սահմաններից դուրս⁷⁷:

Սակայն Մովսես Տաթևացու հիմնադրած վանքը տևական կյանք չունեցավ: Հիմնականում (բացի Անանիայի մատուռից) փայտաշեն կառուցվածքները կրակի պոհ դարձան 1635—1636 թվականների թուրք-պարսկական կռիվների ժամանակ⁷⁸:

Տևական կյանք չունեցավ նաև Փիլիպպոս կաթողիկոսի օրոք վերաշինված վանքը, որն ավերվեց 1679 թ. Երևանի ահեղ երկրաշարժից: Մինչև մեր ժամանակները պահպանված եկեղեցին կառուցվել է 1693 թ. ավերված վանքի տեղում, խոջա Փանոսի միջոցներով: Նախապես այն կոչվել է ս. Աստվածածին ու հետագայում վերանվանվել ս. Ջորավոր: Եկեղեցու շենքն անգամբթ է, բազիլիկատիպ, ռածկված երկլանջ կտուրով: Քառանկյուն եկեղեցին երկու պուգ մույթերի տեղադրությամբ բաժանված է երեք նավերի, որոնցից միջինը արևելյան կողմից բեմի կիսաշրջան աբսիդն է՝ կողմնային ավանդատներով հյուսիսից և հարավից: Ունի հարավային և արևմտյան մուտքեր: Վերջինս կամարակապ նախասրահից է: Սրա հյուսիս-արևմտյան անկյունից մուտք կար դեպի Անանիայի ստորգետնյա դամբարանը: 1889 թ. դամբարանի վրա գմբեթավոր մի մատուռ է կառուցվել, որից հետո նրա արևմտյան կողմից մուտք ստեղծվել դեպի դամբարան (փակելով նախկինը): Նույն ժամանակ բացվել են եկեղեցու ճարտարապետական ոճին անհարիր դռներ ու լուսամուտներ, եկեղեցու արևմտյան կողմում շինվել է վերնատուն:

Վերջին տարիներին Մայր Աթոռը և Արարատյան թեմը հոգ տարան ս. Ջորավոր եկեղեցու վերաշինության, ներքին բարեկարգման և արտաքին բարեկարգման մասին: Ներքին բարեկարգման աշխատանքները հիմնականում վերաբերեցին ավագ խորանում սեղանի տեղադրմանը և հյուսիսային պատում մկրտարան ավազանի կառուցմանը: 1973 թ. ս. Էջմիածնի Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովը նիստ գումարեց ս. Ջորավոր եկեղեցում և, ծանոթանալով եկեղեցու վիճակին, հանգամանորեն քննարկման ենթարկեց կատարվելիք աշխատանքների հետ կապված հարցերը:

1974 թվականից ծավալվեցին նախատեսված աշխատանքները: Մայր Աթոռի շինարարական գրասենյակի միջոցով սկսվեց եկեղեցու ներսի վերանորոգումը, մատուռի վե-

⁷⁵ Ավելի մանրամասն ջարդարանքը տրված է Կարո Ղաֆադարյանի «Երևանի միջնադարյան հուշարձանները» (Երևան, 1975) գրքում. տե՛ս էջ 33—41:

⁷⁶ Առաքել Վարդապետ Դավրիժեցի, նույն տեղ, էջ 225:

⁷⁷ Նույն տեղ, էջ 226:

⁷⁸ Նույն տեղ, էջ 244:

դարի թիթեղապատ ծածկի փոխարինումը քարով, իսկ եկեղեցու շրջապատի սալարկումը հանձնարարվեց Հայկական ՍՍՀ Պետշինի հատուկ գիտա-վերանորոգման արտադրական արվեստանոցին: 1975—1978 թվականներին լիովին կատարվեցին ծրագրված աշխատանքները: Եկեղեցու ներսում ծեփից ապամուկված քարերի մաքրումը և մշակումը, եկեղեցու հատակի մարմարապատումը և Անանիայի մատուռի գմբեթի թիթեղապատ վեղարի փոխարինումը քարով կատարվեցին քարձր որակով: Եկեղեցու դրսի կողմից պատերի ստորին մասերի խարխված քարերը վերաշարվեցին, ոչ պիտանիները փոխարինվեցին նորերով: Չեռնարկելով եկեղեցու շրջապատի ոչ մեծ հարթակի սալահատակման աշխատանքները՝ նախապես հանվեցին հարավային կողմի գերեզմանաքարերը և խաչքարերը, դրանցից պատմա-ճարտարապետական արժեք ունեցողները սալահատակման ժամանակ վերստին տեղադրվեցին, իսկ մնացածները օգտագործվեցին սալահատակման համար:

Այսպիսով ավարտվեց Երևանի ս. Ջորավոր եկեղեցու վերաշինության, բարեկարգման և շրջապատի բարեկարգման աշխատանքների առաջին փուլը: Երկրորդ փուլը պիտի իրագործվի, երբ եկեղեցու հյուսիսային կողմի բնակելի տները քանդվեն, և բակի սահմանները ընդարձակվեն:

ԲԶՆԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Հրապարակի շրջանի ԲՆԻ գյուղը հարուստ է եկեղեցական պատմա-ճարտարապետական հուշարձաններով: Գյուղի հյուսիս-արևմտյան բարձրադիր լանջին կառուցված ս. Աստվածածնի վանական համալիրը հիրավի դրանց սլակն է հանդիսանում: Պարիսպներով շրջապատված բակի կենտրոնում իր գեղատեսիլ ծավալա-տարածական հորինվածքով վեհաշուք եկեղեցին կառուցվել է Գրիգոր Պահլավունի (Մագիստրոս) իշխանի պատվերով, 1031 թվականին:

Պատկանելով գմբեթավոր դահլիճ կոչվող եկեղեցիների տիպին՝ այն օժտված է 11-րդ դարի հայկական եկեղեցական ճարտարապետությանը բնորոշ հատկանիշներով (վերասլաց համաչափություններ, հովհարաձև վեղարով պսակված գմբեթ և այլն):

Ս. Աստվածածնի եկեղեցին դարերի ընթացքում թեև ենթարկվել է վերանորոգումների (կրելով չնչին աղավաղումներ), սակայն մեզ է հասել ընդհանուր առմամբ բար-

վոք պահպանված վիճակում⁷⁹: Չնայած դրան, եկեղեցին կարիք ուներ որոշ վերանորոգումների: Այդ կապակցությամբ Մայր Աթոռը պատվիրեց Հայկական ՍՍՀ Պետշինի հատուկ գիտա-վերանորոգման արտադրական արվեստանոցին՝ կատարել եկեղեցու տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, մշակել նախագիծ ու այն իրականացնել:

Առանձնացված մի հանձնաժողովի միջոցով տեղում կատարվեց ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվեց մի արձանագրություն հետևյալ դիտարկումներով ու եզրակացություններով:

Պատերի և քիվերի տարածություններից ու կտուրի ծածկասալերի երկու տարատեսակներից երևում է, որ եկեղեցին նախկինում վերանորոգման է ենթարկվել: Հարավային պատի ճակտոնի երեսպատման քարերը ամբողջ մակերեսով անջատվել են կրաքետոնյա միջուկից ու նկատելի չափով թեքվել դեպի դուրս: Հյուսիսային ճակտոնում ու պատերին նույնպես կան երեսպատման քարերի ու քիվերի անջատված տեղեր: Հարավ-արևելյան տանիքը քայքայվել է, որի հետևանքով փոփոխվել է նրա նախնական թեքությունն ու տեսքը: Եկեղեցու և վանգակատան տանիքներին պահպանված սալածածկի կարանները խախտված լինելու պատճառով կոպիտ կերպով ծեփված են կրաշաղախով: Բացի այդ, սալածածկի հարթ տեսակը չի ապահովում տանիքը խոնավության ներթափանցումից: Տեղում պահպանված սալաքարի բեկորներից երևում է, որ նախկինում եկեղեցին ծածկված է եղել ատամնավոր սալաքարերով, իսկ ներկա հարթ սալերը հետագայում կատարված նորոգման ժամանակ են դրվել:

Ելնելով եկեղեցու՝ վերը նկարագրած վիճակից, հանձնաժողովը առաջարկել է՝

1. Քանդել և վերաշարել եկեղեցու հարավային և հյուսիսային ճակտոնների, ինչպես նաև արտաքին պատերի տարբեր մասերում խախտված քարերը՝ պակասները լրացնելով նորերով:

2. Հարավ-արևելյան խորանի տանիքը վերակառուցել հյուսիս-արևելյան խորանի տանիքի նմանությամբ:

3. Ջրահեռացման քարե առվակ կառուցել եկեղեցու և վանգակատան միմյանց հարելու գծով:

4. Պատրաստել և տեղադրել լուսամուտների փեղկերը:

5. Վերանորոգել եկեղեցու և վանգակա-

⁷⁹ 1940-ական թվականների վերջում հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից կատարվել է հյուսիսային պատի արևելյան հատվածի և նույն կողմի ավանդատան կտուրի վերանորոգում:



տան կոտորները տեղական տուֆ քարերով և դրանք օծել բուսական յուղով:
Թվարկված առաջարկները հիմնականում ելակետ հանդիսացան Յու. Թումանյանի համար, որը կապեց վերանորոգման նախագիծ: Համաձայն այդ նախագծի, խնամքով իրականացվեցին նախատեսված աշխատանքները:

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՌՈՒՅՑԻ ՎԵՐԱԸՆԴՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան հետ է կապվում Խոր Վիրապի վանքը, որը կառուցվել է հին Արտաշատի երբեմնի միջնաբերդի վրա: Այն ներկայացված է գերազանցապես ուշ միջնադարյան շրջանի երկու եկեղեցիներով⁸⁰ ու վանքատարածությունը շրջափակող պարսպապատերի ներսի ուղղությամբ կցված վանական խցերով, տնտեսական ու բնակելի սենյակներով: Թեև եկեղեցիները պահպանված էին կանգուն վիճակում, սակայն պարիսպներն ու վանական շենքերը մասամբ կիսավեր էին դարձել:

Խոր Վիրապի վանքը վերաշինված ու կրկին պայծառացված տեսնելը հանդիսացավ նորընտիր Վազգեն Ա կաթողիկոսի սրտի բաղձանքը և ի սկզբանե տեղ գրավեց նրա շինարարական ծրագրերում:

1957 թ. նոյեմբերի 18-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամների, այցելեց Խոր Վիրապի վանքը՝ պարզելու համար այստեղ կատարվելիք աշխատանքների ծավալն ու բնույթը: Տեղում կապված ծրագիրը բաղկացած էր երեք հիմնական բաժիններից: Դրանցից առաջինը վերաբերում էր գլխավոր եկեղեցուն, երկրորդը՝ վիրապի վրայի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, իսկ երրորդը՝ պարիսպների ու վանական շենքերի վերաշինությանը և ընդհանուր բարեկարգմանը:

Գլխավոր եկեղեցում նախատեսվում էր վերանորոգել տանիքի ծածկասալերը, վերականգնել վնասված քիվերը, եկեղեցու և վանգակատան խաչերը, նորոգել գմբեթի թղմբուկի հիմքի անկյունները (տումբերը), եկեղեցու վնասված գետնախարիսխները, պատրաստել ու տեղադրել նոր դուռ ու լուսամուտներ և այլն:

Վիրապի վրայի եկեղեցու վերանորոգման աշխատանքները համեմատաբար քիչ էին: Պիտի վերանորոգվեին տանիքի ծածկասալերը, շենքի արևմտյան ու արևելյան անկյունները, պիտի պատրաստվեին ու տեղադրվեին լուսամուտների նոր փեղկեր:

⁸⁰ Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890:

Ծրագրի երրորդ բաժնով նախատեսվում էր քանդել և վերաշինել պարսպապատ արևելյան նախամուտքի թաղակապ ծածկը, վերականգնել հյուսիսային պարսպապատի ուղղությամբ եղած սենյակներից երեքը և հարավային պարսպապատի արևմտյան հատվածը: Նախատեսվում էր նաև վանքն ապահովել ջրատար գծով:

Հուշարձանախմբի չափագրության տվյալներով ճարտարապետ Ա. Գալիկյանը մշակեց կատարվելիք վերաշինությունների մի մտավոր նախագիծ: Այնուհետև, 1959 և 1960 թվականներին Խոր Վիրապի վանքում ծավալվեցին վերաշինական աշխատանքներ: Երկու եկեղեցիներում դրանք իրականացվեցին Մայր Աթոռի շինարարական գրասենյակի միջոցով: Գլխավոր եկեղեցու հատակի, հարավային ու արևմտյան կողմի մույթերի սալարկումը և հարավակողմյան պարսպապատի արևմտյան հատվածի վերաշինությունը կատարվեց գիտա-արտադրական արվեստանոցի վարպետների միջոցով:

Դրանցով ավարտվեց վերաշինական աշխատանքների առաջին փուլը: 1970 թվականից սկսած, Վեհափառ Հայրապետի թելադրանքով վերսկսվեցին վերաշինական աշխատանքները Խոր Վիրապի վանքում, որոնք, որոշ ընդմիջումներով շարունակվում են մինչև այսօր:

1974 թվականին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված ճարտարապետների հանձնաժողովի նիստում քննարկվեց ու հաստատվեց Խոր Վիրապի գլխավոր եկեղեցու Ավագ խորանում տեղադրվելիք սեղանի նախագիծը, որը և իրականացվեց տեղում: Ավելի ուշ, քանդակապարզ նոր դուռ տեղադրվեց:

Խոր Վիրապի վանական համակառույցի վերաշինության հարցին Մայր Աթոռը կրկին անդրադարձավ սկսած 1976 թվականից՝ նրպատակ ունենալով շարունակել ընդհատված աշխատանքները: Աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ էր լուծել ջրամատակարարման, էլեկտրական լուսավորման և ճանապարհը կարգի բերելու հարցերը:

1976 թվականի դեկտեմբերի 14-ին Էջմիածնում հրավիրվեց ճարտարապետների հանձնաժողովի նիստ, ուր և քննարկվեց ու հաստատվեց Խոր Վիրապի վանքում հետագա աշխատանքների ծրագիրը, որը բաղկացած էր երկու հիմնական մասերից: Թողնելով տեղական իշխանության հոգաժողությանը ջրամատակարարման, էլեկտրական հոսանքի մատակարարման ու ճանապարհաշինության հարցերը՝ Մայր Աթոռը պիտի շարունակեր վանքի վերաշինությունը, այն հանձնարարե-

յով հատուկ գիտա-արտադրական արվեստանոցին:

Այս առթիվ կազմվեց աշխատանքների նոր նախագիծ ըստ հետևյալի.

ա. Արևելյան և հարավային պարսպապատին կից եղած վանական շենքերը վերականգնել մեկ հարկի չափով՝ պահպանելով նկուղները: Այդ շենքերում նախատեսել վանքին անհրաժեշտ սենյակներ (ընդունարան, հյուրանոց, բնակարան, օժանդակ սենյակներ): Արևելյան դարպասի վրա վերականգնել «Հայրիկյան» սենյակները (ըստ պահպանված լուսանկարների):

բ. Արևմտյան կողմի վանական սենյակները վերականգնել ուխտավորների համար:

գ. Հյուսիսային կողմի սենյակների շարքը վերականգնել և օգտագործել որպես հին Արտաշատի հնագիտական արջավախմբի հնադարան-թանգարան:

դ. Վերանորոգել պարսպապատերը (առանց բարձրացնելու հյուսիսային հատվածը):

ե. Բարեկարգել բակը և շրջապատը, կարգավորել մուտքի աստիճանները, անհրաժեշտ տեղերում նախատեսել սալափառակված մայթեր և ուղիներ: Արևելյան դարպասի առջև ստեղծել ոչ մեծ հարթակ՝ ետևում կառուցելով հենապատ: Հասարակական պուգաբանը կառուցել պարսպապատից դուրս, մի հարմար տեղում:

վ. Կատարել ողջ շրջապատի մաքրում:

է. Վիրապի վրայի ս. Գրիգոր Լուսավո-

րիչ եկեղեցու հատակը վերասալարկել, դրսի ու ներսի պատերի վրայից մաքրել այցելուների կողմից արված մակագրությունները:

Ստանալով վերոհիշյալ առաջադրանքը՝ հատուկ գիտա-արտադրական արվեստանոցի նախագծային բաժնում ճարտարապետներ Ա. Մանասյանը և Ա. Հովսեփյանը մշակեցին մի նոր նախագիծ, որը 1977 թվականի ապրիլի 13-ին Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց ու հիմնականում հավանության արժանացավ՝ լրացուցիչ թելադրանքներով:

1977 թվականի երկրորդ կեսին և մասամբ նաև 1978 թվականին Պետքինի Հուշարձանների վերականգնման հատուկ գիտա-արտադրական արվեստանոցն իր միջոցներով շարունակեց ընդհատված աշխատանքները ու սովորեց պարսպապատ հարավ-արևելյան անկյան բնակարանի թաղակապ ծածկի վերականգնումը:

Հետամուտ լինելով իր ծրագրի իրականացմանը՝ Մայր Աթոռը 1979 թվականից վերստին հանձն առավ խոր Վիրապի վանքի վերաշինությունը շարունակելու հոգսն ու ծախսերը:

Խոր Վիրապում շարունակվում են վերանորոգչական և բարեկարգման աշխատանքները:

(Շարունակելի)

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ Ա Ն Ք Ը

Ժայռի վրա մթամած
Մենաստանն է ծվարել,
Զարմացած է և Աստված.
Նա Ինքն էլ է ջվարել,
Թե այն ինչպե՞ս է կերտված,
Ո՛վ և ե՞րբ է արարել,
Որ դարերի բովում թեժ
Մնացել է դեռ կանգուն,
Ժայռի գլխին, գահավեժ,
Կիրճի եպրին այս անհուն:

Արդար հայորդի, արի՛ մտովի
Տիեզերական մեր դարը թողնենք,
Թողնենք ուրիշն այն մեծարի, գովի,
Իսկ մենք իրար հետ անցյալը պեղենք:

Մտնենք թեկուպ այս վանքը մամռապատ
Որը կոչվել է նույնիսկ անապատ,
Չնայած այստեղ մարդիկ են ապրել,
Իմաստուն այրեր.
Ճգնել են, տքնել ու ապաշխարել,
Ներումն հայցել Տեր երկնավորից
Իրենց չգործած մեղքերի համար,
Քարե սեղանին, մոմի տակ անմար,
Պատմությունը մեր գիր են դարձրել,
Մարտիրոսվել են, դարձել նահատակ,
Ու մեր գանձերը մեզ են հասցրել,
Լցրել հայ մտքի ծովը անհատակ:


Այս միջանցքներում հնաբույր ու նեղ,
Ինչքա՛ն են այրվել մարխ, կերոն, կանթեղ
Ինչքա՛ն են ճեմել մորուքով, անբեղ
Իմաստունները ու վիճել ահեղ:

Գուցե այս խցում փլված ու անդուռ,
Մեծ վարդապետը ունկնդրել է լուռ,
Իր առաջ չոքած մանկանցը մի բուռ,
Որ դաս են պատմել հայերենով կուռ:

Գուցե և այստեղ, վանքի այս մասում
Հայոց պատմության պսակն էր հյուսում
Հայր Խորենացին...
Կամ թե մյուսում՝
Մեր ալախոսիկ անմահ Եղիշեն,
Ղազար Փարպեցին, Եզնիկ Կողբացին
Ու Շիրակացին և շատ ուրիշներ
Ցերեկ ու գիշեր երկնել են երկեր,
Որ ազգը տոկար,
Որ ազգը տկար մտքերը վաներ
Եվ իր քաջ նախնյաց հավիտյան հիշեր
Ու նրանց նման՝

Ոսոխի առաջ իր սուրը հաներ.
Միշտ վառման պահեր
Դարերից ի վեր կրակն անթեղված.
Եվ իր վերընթաց ուղիով՝ անդարձ
Քայլեր աններ, անընդհատ, միշտ վեր...

Դե ե՛կ, հայորդի, նորից, բյուր անգամ,
Շնչենք խցերի օդն այս խնկաբույր,
Քանսի այս է մեր գոյության վկան,
Մեր ձեռակերտն է ու խիղճը մաքուր:



ԼՈՒՐԵՐ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՕՇՈՒՄ

Մարտի 1-ին, հինգշաբթի օրը, «Սրբոց Վարդանանց պորավարաց» տոնին, Իրաքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մեջ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ս. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը հանդիսավոր ս. պատարագի ընթացքում քահանայական ձեռնադրության և օծման կարգ է շնորհել բարեջնորհ Արմեն սարկավագ Իշխանյանին:

Փետրվարի 29-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, Վարդանանց տոնի նախատոնակի ավարտին, կատարվել է «կոչումն քահանայության» արարողությունը՝ համաձայն ձեռնադրության Մաշտոցի:

Նորընծայի կոչման կարգը կատարել է Ս. Ավագ եպիսկոպոսը՝ խարտավիակությամբ Ս. Զավեն քին. Փոլատյանի:

Հինգշաբթի օրը, Վարդանանց տոնին, երեկոյան ժամը 17-ին, Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պատարագ է մատուցել Ս. Ավագ եպ. Ասատուրյանը: «Ձի ողորմած և մարդասեր ես Աստուած» աղոթքից առաջ սրբապան հայրը քահանայական ձեռնադրություն և օծում է շնորհել Արմեն սրկ. Իշխանյանին՝ վերանվանելով նրան Ս. Նարեկ քահանա:

Ձեռնադրության և օծման արարողությունից հետո սրբապան հայրը իր հոգեշունչ քարոզով ոգեկոչել է Վարդանանց հիշատակը,

ապա անդրադարձել պատրաստված հոգևորականների անհրաժեշտությանը մեր Եկեղեցու անդաստանում:

Այս տարի Վարդանանց քաջամարտիկների տոնը իրաքահայության համար իրապես դարձել է աննախընթաց ցնծության օր: Երկար տարիներ է, ինչ իրաքահայ թեմում չէր կատարվել քահանայական ձեռնադրության և օծման կարգ:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՄԻԱԲԱՆ Ս. ՀՈՎՆԱՆ
ԱԲԵՂԱ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԱՅՑԸ ԻՐԱՔԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄ

Սույն թվականի ապրիլի 15-ին, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ս. Ավագ եպ. Ասատուրյանի և թեմի Ազգային եկեղեցական իշխանության հրավերով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Ս. Հովնան աբեղա Տերտերյանը այցելում է Իրաքի հայոց թեմ մասնակցելու պատկական տոներին:

Ս. Հովնան աբեղա Տերտերյանը իր հետ տարել էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Ս. Ս. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ ի հաստատություն թեմի առաջնորդ Ս. Ավագ եպիսկոպոսի վերընտրության:


Ս. Հովնան աբեղա Տերտերյանը, օծված լինելով լավ ձայնով և եկեղեցական-ծիսական հարուստ գիտելիքներով, իր գործուն մասնակցությունն է բերում Ավագ շաբաթի տո-


նակատարություններին: Հայր սուրբը ապրիլի 21-ին մատուցում է ճրագալույցի ս. պատարագ և քարոզում «Այսօր և հրեշտակք յերկնից իջեալ տան աւետիս մարդկան եթէ յարեաւ խաչեալն և յարոյց զձեզ ընդ ինքեան» (շարական) բնաբանով: Այնուհետև նա կարդում է Վեհափառ Հայրապետի օրհնության գիրը՝ Ս. Հարության տոնի առթիվ, ուղղված սրբազան հորը, թեմի ազգային եկեղեցական իշխանությանը և իրաքահայ ժողովրդին:

Հոգեջնորի Ս. Հովնան արեղա Տերտերյանը ս. պատարագ է մատուցում նաև ապրիլի 24-ին, հայ բյուրավոր նահատակաց հիշատակին:

Պատարագից հետո գործադրվում է Եղեռնին նվիրված գեղարվեստական մի ծրագիր, որի ավարտին փակման խոսքով հանդես է գալիս թեմի բարեխնամ առաջնորդ Ս. Ավագ եպս. Ասատուրյանը:

Մայիսի 9-ին Ս. Հովնան արեղա Տերտերյանը լավագույն տպավորություններով վերադառնում է Մայր Աթոռ:





ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԷՍՏՈՆԻԱՅՈՒՄ

Սույն թվականի մայիսի 15—17 օրերին Էստոնական ՍՍՀ-ում, Պյուխտիցի ռուսական Սուրբ Աստվածածին վանքում, տեղի ունեցավ Սովետական Միությունում գործող Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) անդամ և գործակից Եկեղեցիների ներկայացուցիչների հերթական երկրորդ խորհրդակցությունը՝ նախապատրաստվելու համար 1986 թվականին Շտուլանդիայում կայանալիք ԵԵԿ-ի իններորդ համաժողովին:

Ռուս Օրթոդոքս Եկեղեցու նախաձեռնությամբ կազմակերպված սույն խորհրդակցությանը մասնակցում էին քրիստոնյա ավետարանական-մկրտչականների համամիութենական խորհուրդը, վրացական օրթոդոքս Եկեղեցին, Լատվիայի ավետարանական-լութերական Եկեղեցին, Էստոնիայի ավետարանական-լութերական Եկեղեցին, ԵԵԿ-ի հետ եղբայրական գործակցության մեջ գտնվող Սովետական Միության մյուս Եկեղեցիները՝ Լիտվայի ավետարանական-լութերական Եկեղեցին, Էստոնիայի մեթոդական Եկեղեցին, Անդրկարպատյան վերակազմվալ Եկեղեցին և, որպես հյուր, Լատվիայի կաթոլիկ Եկեղեցին:

Խորհրդակցությանը Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Շիրակի թեմի առաջնորդ Ս. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը:

Մայիսի 15-ին սկսվեց խորհրդակցությունը Էկումենիկ աղոթքով: Խորհրդակցության մասնակիցներին ողջոված ողջույնի խոսք ասաց Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք, Նորին Սրբություն Ս. Պիմենը՝ հաջողություն մաղթելով ժողովի աշխատանքներին: Այնուհետև Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի 25-ամյա գործունեությանը և առաջիկա իններորդ համաժողովի գումարման հետ կապված հարցերին նվիրված ելույթներ ունեցան ԵԵԿ-ի նախագահ, Տալլինի և Էստոնիայի միտրոպոլիտ Ս. Ալեքսեյը և ժողովին ներկա ԵԵԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը:

Խորհրդակցությունն ունեցավ յոթ նիստեր, որոնց ընթացքում զեկուցումներով հանդես եկան խորհրդակցությանը մասնակցող Եկեղեցիների մի շարք ներկայացուցիչներ: Ձեկուցումների շուրջ ծավալվեցին բանավեճեր և մտքերի լայն փոխանակություն:

Եվրափակիչ յոթներորդ նիստում ընդունվեց պաշտոնական մի փաստաթուղթ՝ ՍՍՀՄ-ում գործող Եկեղեցիների սույն խորհրդակցության հայտարարությունը, որով դրական գնահատական է տրվում ԵԵԿ-ի գործունեությանը՝ միաժամանակ կոչ անելով նրան առաջիկայում ևս շարունակելու իր Էկումենիկ և եկեղեցա-մարդասիրական առաքելությունը:

Հայտարարության մեջ գոհունակություն է արտահայտված նաև այն մասին, որ ջանքեր են գործադրվում է՛լ ավելի սերտացնելու ԵԵԿ-ի և Եվրոպայի Եպիսկոպոսական խորհրդի աստվածաբանական կոնֆերանսի միջև էկումենիկ և խաղաղության բնագավառի համագործակցությունը:


Փաստաթղթում նշվում է, որ խորհրդակցության մասնակիցների ընդհանուր կարծիքի համաձայն, ԵԵԿ-ի առաջիկա համաժողովի բնաբանը՝ «Յերկիր խաղաղություն, փառք Աստուծոյն», լավ է արտացոլում ԵԵԿ-ի գործունեության գլխավոր երկու ասպեկտները՝ միության գործին նրա ծառայության երկու ուղղությունների («հորիզոնական» և «ուղղահայաց») սերտ կոգորդումը:

Ինչ վերաբերում է Արևմուտքի կողմից տիեզերքի ռազմականացման վտանգավոր ծրագրերի մշակմանը, հայտարարության մեջ ասված է, որ տիեզերքը չպետք է ռազմականացվի, ժողովուրդներն իրենց գլխավերե-

վում պետք է ունենան մաքուր երկինք. պետք է շարունակել մերձեցումը, համագործակցությունը, փոխադարձ հասկացողությունը պետությունների միջև, որպեսզի վերացվեն անվստահությունն ու սարսափը: Եկեղեցիներն ու բոլոր քրիստոնյաները իրենց բաժին լույսն պետք է դնեն ի նպաստ լարվածության թուլացման ու խաղաղության գործի և այդ՝ անկախ դավանական և հարանվանական հարցերից կամ լեզվական, պգացական և այլ տարբերություններից: Եկեղեցիները պետք է իրար հետ լինեն ի փառս կյանքի, խաղաղության և առաջադիմության:

«Ամեն մի քրիստոնյա,—եպրակացվում է փաստաթղթում,—Տիրոջով թող դառնա մեկ շնորհված սիրո արտահայտիչը և դուրս գա դեպի խաղաղության երթը, փրկելու կյանքը՝ Աստուծո սրբազան պարգևը: Չի կարող լինել ավելի վեհ նպատակ, քան մարդկային ցեղի պահպանումը երկրի վրա»:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ



ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱԶ—ԴԿ ՈՒԹ ՀԱՐՅՆԱԿԱՐԳԵՐԸ

Անանիա Շիրակացին է դարի հայ երաժշտական մշակույթի խոշոր դեմքերից է թե՛ որպես տեսաբան և թե՛ որպես բանաստեղծ-երաժիշտ:

Որպես տեսաբան Անանիա Շիրակացին վաթնամյակու-երաժիշտ ականավոր գիտնական է, որը հայ իրականության մեջ առաջին անգամ ամբողջական շրջագծերով ներկայացրել է երաժշտական հնչականության մասին (Die Akustik) պեքսանդրյան գիտնականների առաջավոր ուսմունքը¹: Ի դեպ՝ այս տեսակետից Շիրակացին առաջինն է նաև ողջ Մերձավոր Արևելքի չափացույցներով²:

Որպես բանաստեղծ-երաժիշտ նա հեղինակել է Հարության ԱԶ—ԴԿ ութ ծավալուն հարցնակարգերի մեծ մասը և Հոգեզալըստյան ու Վարդավառի առաջին օրերի կանոնների երգերը³:

Նախ անդրադառնանք Հարության հարցնակարգերի հեղինակային պատկանելության կարևոր խնդրին: Չարմանալի թող չթվա, եթե ասենք, որ շարականների հեղինակների ցուցակագիրներից Վանական Վարդապետն ու Սարգիս Երեցը շատ հստակ պատկերացում են ունեցել մեզ պաղեցնող երգաշարքերի հեղինակի մասին: Այն՝ նրանց համոզմամբ՝ Անանիա Շիրակացին է⁴: Խնդիրն սկսել է մշուշապատվել Վարդան Արևելցու «Անթառամ ծաղիկ» շարականի մեկնության հրապարակման ժամանակներից: Մեկնություն, որ Արևելցին Մովսես Խորենացու և Բարսեղ ձոնի անունները կապում է Ծննդյան և Հարության երգաշարքերին, առանց պատորոշման⁵: Ավելի ուշ նույն երգաշարքերի հետ մասամբ կապվել է նաև Հովնան Մանդակունու անունը: Մեզը (որը փարատելու ջանքեր

¹ Տես մեր հոդվածը՝ Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսությունից, «Բանբեր Մատենադարանի», հատ. 5, Երևան, 1960:

² Հմտ. մեր հոդվածը՝ Роль Анания Ширакани в развитии музыкально-акустической теории на Востоке, Музыка народов Азии и Африки, вып. 3, М., 1980.

³ Տես մեր աշխատությունը՝ Ներսես Շնորհալի երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 19 (տողատակ): Այստեղ հիշատակելի են նաև Շիրակացու Յայտնություն և Չատկի ճառերը (Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 283 և 292). «Հոգեշահ բանքը» (Հ. Տաշյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 370—«Արդ եթե կամիս որ յաղթես աշխարհի», և 823 —«Ով աստուածասէր եղբայր խնդրող սիրոյն Աստուծոյ» և այլն). ու աղոթք-մանթանքը (Fr. Conybeare, A catalogue

of the Armenian Manuscripts in the British Museum, Oxford University Press, London, 1913, էջ 244 — «Տէր Յիսուս Դու ես իմ ազնական» և այլն):

⁴ Այսպես՝ «ԳՅարութեան հարցնակարգն պոլվանդակն Անանիա Շիրակացին»—հաղորդում է Վանական Վարդապետը (տես Ն. Եպ. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Գ, Երուսաղեմ, 1969, էջ 485): Իսկ Սարգիս Երեցը նույնիսկ ավելի մանրամասն է տեղեկացնում. «ԳՅարութեան կարգն բաւանդակ, փարցներն և Վողորմէքն և Վտեր յերկնցերն Անանիայ Շիրակացին ասաց» (տես Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ LXVI): Չնայած այս հավաստումներին, մենք որոշակի վերապահություն ենք անում պնդելով, որ խնդրո առարկա հարցնակարգերի բաղադրիչների մեծ մասի հեղինակն է Շիրակացին:

⁵ Տեսութիւն Անթառամ ծաղկի արարեալ Վարդաւայ մեծ վարդապետի, Երուսաղեմ, 1834, էջ 6:

են թափվել միջնադարում իսկ)⁶, գոյատևել է այն պատճառով, որ դրան նպաստել են մի-երկու հանգամանք: Հարության հարցնակարգերն ընդմիջվում են մի քանի կանոններով, այդ թվում և՛ մասնավորապես, Տապանակի կանոնի երգերով, որոնց հեղինակը Մանդակունին է: Եվ հետո՝ Հարության ու Շննդյան կարգերի համար ընդհանուր են եղել և այդպես էլ հարատևել են մի ամբողջ շարք մեծացուցներ, որոնց մեծ մասի հավանական հեղինակը Բարսեղ ձոնն է, ինչպես նկատել ենք վաղուց:

Արդ, հայ նոր բանասիրության էջերում Բ. Սարգսյանի կատարած հետապոստությանը արդեն բավականին լուսաբանվում էր Հովհան Մանդակունուն ընծայվող շարականների հարցը⁷: Մովսես Խորենացուն և Բարսեղ ձոնին նվիրված մեր ուսումնասիրություններում էլ ճշտելով քննարկվող խնդրի հետ կապ ունեցող ևս երկու երաժիշտ-բանաստեղծների ժառանգությունը, Անանիա Շիրակացու ստեղծագործությունների որոշումը առավել դյուրա-ցավ:

Հոգեգալստյան տոնի հին երգերի հեղինակային պատկանելության հարցը միջնադարյան ձեռագրերում թեև շոշափված է, բայց հստակված չէ: Որպես հեղինակ, բացի Անանիա Շիրակացու⁸, տարբեր ձեռագրերում

⁶ Դիտել է, օրինակ, որ Գրիգոր Տաթևացու և հետևորդների ցուցակներում Արևելյու և այլոց արձանագրած տեղեկությունները ճշգրտելու և հստակելու միտում էլ է արտահայտվում: Որով՝ Մանդակունուն ընծայվող շարականների շրջանակը նեղատու է: Իսկ Խորենացու և Շիրակացու հեղինակությունների ցանկը մեծանալով դուրս է գալիս, համապատասխանաբար, Շննդյան և Հարության շարականների սահմաններից: Այնպես, որ թափանցիկ ակնարկներ են արվում, մասնավորապես, Շիրակացու հեղինակությունների խմբում դասելու նաև Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի կանոնների երգերը:

⁷ Հմմտ.՝ Բ. Սարգսյան, Քննադատություն Յովհան Մանդակունույ և իւր երկասիրութեանց վրայ, Վենետիկ, 1885, էջ 28. և մեր պեկուցումը՝ Հովհան Մանդակունին և հայ հոգևոր մասնագիտացված երգարվեստը (Հայաստանի մշակույթի և արվեստի խնդիրներին նվիրված հիմնադրոգ հանրապետական կոնֆերանսի նյութերում, Երևան, 12—16 հոկտ., 1983 թ.):

⁸ Հմմտ.՝ Գ. Ավետիքյան, Բացատրություն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 370. Հ. Տաշյան, Մայր ցուցակ... նշվ. հրատ., էջ 441 և 779: Ս. Ամատունի, Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 105: Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ LXVII—LXVIII (Ս. Ամատունու և Հ. Անասյանի օգտագործած ձեռագրերը Մաշտոցի անվան մատենադարանում գտնվելով՝ մեզ էլ են ծանոթ):

հիշատակվում են նաև Մովսես Խորենացին ու (երբեմն) Հովհան Մանդակունին: Հատկապես այն գրիչների և կամ նույնիսկ հայտնի մատենագիրների կողմից, որոնց համար պարզ չէ Հարության հարցնակարգերի հեղինակը:

Հոգեգալստուր կամ Պենտեկոստեն (ին. Πεντηκοστή = հիսներեակ, այն է՝ Ձատկից հետո 50-րդ օրը), հնում միօրյա տոն է եղել (Շնորհալին է սահմանել՝ ութ օր կատարել այն) և, որպես այդպիսին, ներկայացրել է Հինանց («Յինանց») կոչվող շրջանի երգեցողությունների, որ և՛ հիմնականում՝ Հարության հարցնակարգերի բնական և տրամաբանական հանգրվանը: Ուրիշ խոսքով՝ Հարության հարցնակարգերի հեղինակն է, որ հորինած պետք է լիներ նաև ս. Հոգու իջման տոնի առաջին օրվա երգերը: Ուստի առավել վստահելի են միջնադարյան այն ձեռագրերը, որոնք հիշյալ երգերը հատկացնում են ճիշտ Անանիա Շիրակացուն:

Վարդավառի առաջին օրվա երգերի կապակցությամբ ևս միջնադարյան ձեռագրերում հանդիպում են Մովսես Խորենացու, Հովհան Մանդակունու և Անանիա Շիրակացու անունները, որպես հեղինակների: Եվ այս դեպքում նույնպես ճիշտ են Շիրակացու անունը հիշատակող աղբյուրները, ահա թե ինչու: Ինչպես գիտենք, Ներսես Գ. Իշխանցու օրոք (այսինքն՝ Է դարի կեսերին), և ճիշտ Վարդավառի մեծահանդես տոնին, հոգևոր ինքնուրույն երգերի՝ կցուրդների (կամ շարականների) կատարման ժամանակ, կաթողիկոսի ներկայությամբ պատահել է այն ուշագրավ շփոթությունն ու մեծ խանգարումը, որի մասին պատմում են Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին⁹:

Արդ, եթե Վարդավառի տոնին վերաբերող հին կցուրդ-շարականները Ե դարից էին գալիս մինչև Է հարյուրամյակի կեսերը, Հայաստանի գոնե կաթողիկե նշանավոր եկեղեցիների դպրաց դասերը վաղուց յուրացրած կլինեին դրանք¹⁰: Նշանակում է, իրոք, Շիրակացին է նաև այդ երգերի հեղինակը:

⁹ Տես մեր հոդվածը՝ Բարսեղ ձոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում, Բանբեր Երևանի համալսարանի, 1973, № 1:

¹⁰ Ճիշտ այսպես է դատում նաև նրբամիտ բանասեր Գ. Ավետիքյանը (տես նրա՝ Բացատրություն շարականաց, էջ 464): Միայն վարմանալի է, որ նա այս կապակցությամբ չի հիշատակում Անանիա Շիրակացուն: Մինչդեռ նրա անունը, որպես Վարդավառի առաջին օրվա երգերի հեղինակի, տալիս է ոչ այլ ոք, քան Գրիգոր Տաթևացին (տես նրա՝ Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 637), չխոսելով բավարարվ

Դառնանք Հարության հարցնակարգերին: Դրանց սկզբնական կամ հեղինակային դասակարգության և այդ կարգերում ամփոփված՝ հարց, գործ, ողորմյա, տեր երկնից և ճաշու անվանվող 186 երգերի¹¹ տեսակների և նախնական նշման մասին քիչ բան է հայտնի այսօր: Ձեռագրերի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ հիշյալ երգերը մեզ հասել են հիմնականում այն դասավորությամբ, որն ընդունված է եղել ետջնորհալիական Շարակնոցում¹²:

Հարության հարցնակարգերի գրական բնագրերի գեղարվեստական արժեքի ու, միաժամանակ, դրանց հնության խնդիրներին ժամանակին անդրադարձել է Գ. Ավետիքյանը և հաստատել հետևյալը. «Եւ արդարն և կապուտեան շարականացս երկի վայելուչ հնույթին, հանդերձ ճարտարությամբ ի պանալան ձև բանից փոփոխելով վնոյն իմաստըս. թող վկանություն ոճոյ, և զգերականց ասացուածս՝ որք երկին առաւել ի ձայնս ԲԿ, ԳԶ, ԳԿ, ԴԶ, ԴԿ»¹³: Սրան կարող ենք ավելացնել, որ Շիրակացին իր շարականներում հանդես է եկել նաև որպես վարպետ սաղաչափ: Ինչպես Հոգեգալստյան ու Վարդավառի երգերում, այնպես էլ, մասնավորապես, Հարության հարցնակարգերում, նա հմտորեն կիրառել է արձակ բանաստեղծու-

թյունը¹⁴, ազատ ոտանավորը¹⁵, «հայկական» չափը¹⁶ և ուրիշ, այդ թվում և է դարձում բյուրեղանալ սկսած ձևեր¹⁷:

Գալով այդ հարցնակարգերի, ինչպես և Հոգեգալստյան ու Վարդավառի վերոհիշյալ երգերի երաժշտական բաղադրիչի հարցին, նախ ասենք, որ, ինչպես երևում է մատչելի նյութերից, Շիրակացին ընդհանրապես աչքի է ընկել թե՛ հայ շարականերգության և թե՛ Ժամագրքի երգեցողություններին կապված հին ու իրեն ժամանակակից ավանդությունների խոր իմացությամբ և ստեղծագործաբար օգտովել է դրանցից: Այսպես, Ժամագրքի մի շարք երգերի օրինակով, նա առնվազն մի շարական է թողել՝ ծանր ու չափավոր կույզ մեղեդիներով, որ է՝ Հոգեգալստյան առաջին օրվա կանոնի օրինության Ա պատկերը՝ «Առաքելոյ աղանոյ»¹⁸: Դարձյալ՝ Ժամագրքի երգերի օրինակով, Շիրակացին երաժշտական բաղադրիչի ծանր ու ծանր-չափավոր և ողորակի՝ ծանր ու չափավոր հատվածներ է համադրել միևնույն շարականի սահմաններում:

Ամբողջապես առած, Շիրակացու ստեղծագործության մեջ ուշագրավ կարևորագույն պարագաներ են մեղեդիական սկզբնական պտույտների հետագա մշակումն ու, ըստ

ձեռագրերի մասին (որոնցից տես թեկուզ՝ Տաշյան, Ցուցակ..., էջ 779): Գ. Ավետիքյանը քննարկվող շարականներում գրական ոճի վանապանություններ էլ է տեսնում: Ուշադիր ընթերցելով կանոնս, մենք այդպիսիք առանձնապես չենք նկատում: Գուցե, ինչ-որ չափով, ընդհանուր ոճից դուրս է ընկնում լոկ օրինության երկրորդ պատկերը («Երկի երբեմն աշակերտացն»), որը մի փոքրիկ կտոր է վերջապես:

¹¹ Սա մենք ընդունում ենք որպես Անանիա Շիրակացու հեղինակած Հարության շարականների մոտավոր թիվը: Դրան գումարելով Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի կանոնների 21 բաղադրիչները ևս, կստանանք Շիրակացու երաժշտա-բանաստեղծական ժառանգությունը ներկայացնող առ այսօր հայտնի միավորների ընդհանուր, մոտավոր, բայց և պատկառելի քանակը՝ շուրջ 200 երգ:

¹² Այսպես, օրինակ, մեզ զբաղեցնող հարցնակարգերն իրենց միավորների քանակով, կապությամբ, հաջորդականությամբ ու երգերի տեսակների նշումներով գրեթե նույնական են, մի կողմից՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1576 ձեռագրում (Շարակնոց, 1328 թ., Դրավարկ) և մյուս կողմից՝ Չայնագրեալ Շարակնում (Վաղարշապատ, 1875): Մի քանի, վերջին հաշվով, աննշան տարբերություններ կան միայն:

¹³ Գ. Ավետիքյան, Բացատրություն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 285:

¹⁴ Արձակ բանաստեղծության լավագույն նմուշներից է Հարության ԳԿ երգաշարից «Յարեաւ տէրն» գեղեցիկ տեր երկնիցը:

¹⁵ Բազմապիսի ազատ ոտանավորներից հիշենք թեկուզ՝ Հարության ԱԿ շարքից «Սուրբ աստուած» ողորմյան և «Որ վասըն մերոյ փրկութեան» հարցը, ԳԶ շարքից «Յամենայնի աստուած» ողորմյան, ԴԶ շարքից «Վանանցըն կանխելով» տեր երկնիցը և այլն:

¹⁶ Տես, օրինակ, Հարության ԱԶ շարքից «Պատրանօք նախաստեղծին» տեր երկնիցը, կամ ԲԶ շարքից, «Կանխելով սուրբ կանանցն» տեր երկնիցը:

¹⁷ Այստեղ նկատի ունենք, նախ՝ «Հայկական» չափից սերված 4—3 + 4—3 տողերի կանոնավոր հաջորդականությամբ ոտանավորը, որի հիմնալի օրինակներից են՝ Հարության ԲԿ շարքից «Առաւօտեան սուրբ կանայքն» ու «Ըպարություն Քրիստոսի» տեր երկնիցները և ԴԿ շարքից «Իջեր յերկնից միածին» ողորմյան: Հետո՝ 4—3 տողերով ոտանավորը (Հարության ԴԿ շարքից «Վասըն մերոյ փրկութեան» ողորմյան): Այլն եռանդամ ու քառանդամ տողերի կանոնավոր հաջորդականությամբ ոտանավորը, որի սքանչելի մի օրինակն է՝ Հարության ԲԿ շարքից «Իջեր տէր և մարմնացար ի կուսէն» ողորմյան և որն, ամենայն հավանականությամբ, նոր ձև է ներկայացրել Շիրակացու գործունեության տարիներին:

¹⁸ ԴԶ ձայնեղանակում ընթացող երևելի այս շարականը միջին դարերում ևս ուշագրավ է համարվել, ինչպես կտեսնենք:

հարկի, թարմացումը. երգերի ծավալման միջին (ու երբեմն ևս ծայրագույն) հատվածներում մեղեդիական կցությունների ու ենթադասությունների, տարբերակված ու բարձրության առումով տեղափոխված կրկնությունների (սեկվենցիաների) կիրառումը, ինչպես և գրական բնագրի տարբեր խոսքերի երաժշտական յուրահատուկ ընդգծումները՝ առանձին վանկերի երկարաձգման, ոլորման ու վարդոլորման միջոցներով¹⁹:

Ուրույն հարց է, թե ինչպես են պահպանվել Շիրակացու շարականների, մասնավորապես Հարության հարցնակարգերի, եղանակները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հաստատել հետևյալը: Հիշյալ շարականների երաժշտական բաղադրիչը զգալի փոփոխություններ է կրել մինչև 19-րդ դարը: Եվ սակայն մանրամասն քննության ու համեմատության միջոցով հնարավոր է լինում, ընդհանուր առմամբ, կողմնորոշվել այդ փոփոխությունների ուղղվածության հարցերում: Հետապոտությունը ցույց է տալիս, որ Հարության հարցնակարգերը, վերաբերելով եկեղեցական մեծագույն տոներից մեկին, մինչև ԺԲ—ԺԳ դարերը ներառյալ, իրենց որոշ հատվածների շրջանակներում ուռճացել են նորանոր գեղեցիկանքներով ու երկարաձիգ ոլորումներով: Իսկ ուշ միջնադարի ընթացքում էլ՝ ընդհակառակ՝ մասնակիորեն ենթարկվել են հայկական ավատատիրական մշակույթի անկմանը կապված ազդեցությունների:

Նախ անդրադառնանք առաջին կետին: Ուշադիր քննությունից պարզվում է, որ Ա-նանիա Շիրակացու երգերի եղանակներում հանդիպում են ոչ միայն Ժամագրքից²⁰ և Ե—Է հարյուրամյակների մեծ շարականագիրներ Մեսրոպ Մաշտոցի²¹, Սահակ Պար-

թևի²², Մովսես Խորենացու²³ և այլոց ժառանգությունից եկող դրական (մեծ մասամբ ստեղծագործորեն յուրացված ու հաղթահարված) ազդեցություններ, այլև հետագա դարերի երաժիշտ-բանաստեղծների գեղարվեստական արտադրանքը բեղմնավորված արժեքավոր տարրեր: Հիշարժան են, այս տեսակետից, Հարության Բ2 երկրորդ ծանր հարցի («Անապական բանդ») գործատան Դ. Ե. ու Զ. տների մինչև դարձն ընկած հանգանակները (իրենց Բ2—Գ2—Բ2 վարտողությամբ), այլև Հոգեգալստյան Ա օրվա կանոնի Բ2 դարձվածք ճաշուի («Որ ի յարաշարժ ի յաղբերէն») ծավալման միջին մասերը (իրենց բարձրահնչեղ, արտահայտիչ ոլորումներով), որոնք կանխանշում են Գրիգոր Նարեկացու «Աչքըն ծով» տաղի մեղեդիական որոշ պտույտները:

Պետք է հատուկ ընդգծել, որ հայ շարականերգության, և ավելի լայն՝ պաշտոներգության մեջ վերն ու ընդհանրապես նախընթացում նշված տիպի կապերը, դարերի հոլովման մեջ ի վերջո վեր են ածվել փոխադարձ առնչակցությունների: Այնպես որ, եթե ժամանակագրական կարգով կանխածին երկույթները նախապատրաստել են հետագա կերպավորումները, ապա վերջիններս էլ, իրենց հերթին, հետագարձ ազդեցություն են գործել առաջինների վրա: Այս իմաստով, Շիրակացու շարականների երաժշտական բաղադրիչի կրած փոփոխությունները բացատրելի են (բացի հանկարծաբանության արվեստի տիրապետության պայմաններում տոնական երգեցողությունների վարձագման բնական ընթացքից), դրանց փոխադարձ կապերով՝ հայ պաշտոներգության մեղեդիական հարստությունների երկու խոշոր պահեստայանների հետ, որոնք են՝ Ներսես Շնորհալու ստեղծագործությունը և Պատարագի արարողությունը:

Մենք արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ

¹⁹ Այսպես, մեղեդիական սկզբնական պտույտների հետագա մշակման ու նաև թարմացման տեսակետով ուշագրավ են՝ Ա2 դարձվածք «Պայծառացիր եկեղեցի» ծանր հարցի գործատունը (որի սկզբնական պտույտը Շիրակացին կիրառել է նաև Հոգեգալստյան կանոնի Ա2 «Ձեզույն զգալուստն» ծանր հարցի դարձվածք գործատան մեջ), Բ4 չափավոր «Օրինութիւն ի բարձունս» ճաշուն, Դ2 «Փառաւորելով վաւուսն քո» ծանր հարցը, Դ2 միջակ «Անժամանակդ Աստուած» ողորմյան և այլ կտորներ:

²⁰ Հմմտ., օրինակ, «Որ յաթոռ փառաց նըստիս» Ա4 դարձվածք ծանր հարցի ծավալման միջին փուլերը («Օրինաբանիս» և այլն), Ա4 տոնական կանոնազուլիսի հետ:

²¹ Մաշտոցյան շարականների շնչով պարուրված կտորներ են, օրինակ, Հարության Ա2 երկրորդ հարցնակարգի ողորմյան («Ողորմեա ինձ Աստուած»), անմիջապես հաջորդող տեր երկնիցը («Փառք յարու-

թեան քո տէր»), նույն ձայնեղանակի չորրորդ հարցը («Ընդ երիս մանկունս», գործատան հետ միասին), Դ4 երրորդ հարցնակարգի ողորմյան («Ողորմեա ինձ Աստուած: Որ ի հօրէ առաքեցար») և այլն:

²² Սահակ Պարթևի շարականների հետ կապ ունեն Հարության հարցնակարգերից մի շարք փոքրածավալ Ա2 չափավոր կամ ծանր կտորներ, ինչպես, ասենք, առաջին հարցը («Որ եկիր ի փրկութիւն տիեզերաց»):

²³ Մովսես Խորենացու շարականներից եկող որոշակի արձագանքներ են հնչում, ասենք, Հարության Բ2 երկրորդ հարցի գործատան («Օրինեցէք ամենայն գործք տեառն»), և կամ Դ2 հինգերորդ հարցնակարգի ողորմյայում («Եկիր ի փրկութիւն թագաւոր անմահ») և այլն:

Շարակնոցի մեղեդիներից նույնիսկ ամբողջական կտորներ անցել են Պատարագին և կուգորովել գրական այլ բնագրերի հետ²⁴, իսկ մեղեդիական առանձին հատվածներ, տիպական պոստյուսներ և այլն, ավելի մեծ չափով են հոսել Պատարագի մեջ և այնտեղից էլ վերադարձել Շարակնոցին՝ նորովի հղկված ու հարստացած ձևով: Խոսքը մասնավորելով Շիրակացու ստեղծագործության շուրջ՝ նշենք, որ Պատարագի երգեցողությունների հետ վերոհիշյալ տիպի կապերի մեջ են Հարության Բ2 ծանր երկրորդ և երրորդ հարցերի մեղեդիների միջին հատվածները, որոնք ուղղակի հարուցում են «Ամեն: Հայր սուրբ»-ի ամենաարտահայտիչ ստեղծությունը: Նմանապես՝ Դ4 և Դ2 մի քանի ծանր երգերի տիպական որոշ պոստյուսները: Բայց Շիրակացու երգերի և Շնորհալու ստեղծագործության հարաբերության խնդիրը սրանով չի սպառվում բնավ: Ինչպես գիտենք, Շնորհալին օգտվել է իր նախորդ գրեթե բոլոր շարականագիրներից, շատ դեպքերում նոր մակարդակի է բարձրացրել հին չափանմուշ ամբողջական եղանակները և կամ դրանց հատուկ տիպական տարբեր պոստյուսները: Իսկ ավելի ուշ գործած երգիչ-կատարողները ձեռք բերված նվաճումները տարածել են նաև Ե—ԺԱ դարերի հեղինակների մի ամբողջ շարք երգերի վրա: Այդ հեղինակների շարքում է Շիրակացին էլ, որի երգերի երաժշտական բաղադրիչը ներշնչանքի աղբյուր է ծառայել Շնորհալու համար ու նաև հարստացել է նրա ստեղծագործական գյուտերով ևս:

Շիրակացու գեղարվեստական արտադրանքում բավականաչափ խոսույն էջեր կան, որոնք վկայում են փոխադարձ նման կապերի մասին: Եվ նախ՝ Դ4 ստեղծատիպ շարականները. «Փռառուրեալ է անուն քո» և «Իւղաբերից կանանցն»՝ Հարության հարցնակարգերից և «Լերինք ցնծասցեն» ու «Այսօր ի լերինն թաքօր»՝ Վարդավառի Ա կանոնից: Այնուհետև՝ ծանր երգերից Դ2 և Դ4 մի քանի նմուշներ (ինչպես՝ «Ծագումն միածնի» Դ2 վեցերորդ հարցի գործատունը, «Այսօր ցնծան» Դ4 երկրորդ հարցը), ապա Բ2 ու Գ4 շարականներ (ասենք՝ Բ2 երկրորդ հարցը մինչև գործատունը, Գ4 առաջին հարցը և այլն): Դարձվածք տիպի շարականներից տվյալ կապակցության մեջ հիշատակելի է «Վասն մերոյ փրկութեան» Դ4 դարձվածք հոյակապ ողորմյան, որի երաժշտության ինք-

նատիպ, հայեցի կորագծերը մի անգամ չէ, որ գրավել են Շնորհալու ուշադրությունը՝

Գալով այն փոփոխություններին, որոնք Շիրակացու երգերի եղանակներում տեղ են գտել՝ ետշնորհայիական Շարակնոցի հրապարակումից մինչև այդ եղանակների ձայնագրության ժամանակները ԺԹ դարում, ապա դրանց մասին ընդհանուր գաղափար ենք կազմում, համեմատելով Ձայնագրեալ Շարականը կիլիկյան ընտիր ձեռագրերից մեկի հետ²⁵: Պարզվում է, որ, ուշ միջնադարի ընթացքում, նախ՝ մի քանի ծանր երգերի եղանակները կամ նրանց հատվածներն ավելի ևս ծանրացվել են: Դրանցից են՝ Հարության Բ4 երկրորդ ու երրորդ հարցերը և Դ2 երկրորդ ու երրորդ հարցերի գործատուները (հատկապես «Յոյժ ծանր» նշումն ունեցող մասերը): Իսկ առհասարակ՝ նույն Հարության երգերից մի ամբողջ շարք կտորներ՝ Ձայնագրեալ Շարականում հորդոր, միջակ և չափավոր նշումներով հաստատագրված ողորմյաններ, տեր երկնիցներ, ճաշումներ ու մի հարց, դատելով համապատասխան խաղավորումներից, կորցրել են իրենց նախկին ողորմու ու գեղեցիկությունը, և գուցե՝ նախկին ընթացքն էլ (տեմպը), որ հավանաբար չափավոր-ծանր է եղել²⁶:

Դարձվածք տիպի ծանր երգերից խաղավորման պատկերին չի համապատասխանում լույս մեկը՝ Հարության Բ2 առաջին հարցը՝ «Որ ի լերկնից իջեր»: Հարցիս գրական բնագրին ազուցված խաղային նշանները ցույց են տալիս, որ այն՝ Բ2 բուն (ոչ դարձվածք) մեղեդիով է (գուցե չափավոր-ծանր ընթացքով), որ ավելի ողորմու է դառնում գործատան մեջ²⁷: Վերջապես՝ համեմատությունը երևան է հանում նաև մանր «տարբերություններ» տպավորություն թողնող մի քանի

²⁵ Նկատի ունենք Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 1576 գրչագիր շարակնոցը (Դրավարկ, 1329 թ.):

²⁶ Դրանք են՝ Բ4 երրորդ հարցնակարգից ողորմյան ու չորրորդ կարգից հարցը («Որ էիր յառաջ քան պալիտեանս») և Գ2 չորրորդ հարցնակարգից տեր երկնիցը և երրորդ ու հինգերորդ կարգերից ողորմյանները և Գ4 երկրորդ հարցնակարգից ողորմյան և երրորդ կարգից ողորմյան, տեր երկնիցն ու ճաշուն. Դ2 առաջին, երկրորդ և յոթերորդ հարցնակարգերի ողորմյանները և Դ4 երրորդ հարցնակարգի ողորմյան ու վեցերորդ կարգի ճաշուն:

²⁷ Քննարկվող հարցի մասին Ե. Տևոնյանն էլ ժամանակին նկատել է, որ նրա դարձվածք լինելու պարագան «Նորամուտ կերևի, թեև եղանակը գեղեցիկ է և հարմար»: Տես նրա՝ Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, ք. պ., Իսթանպուլ, 1933, էջ 66:

²⁴ Օրինակ՝ Ներսես Շնորհալու շարականներից պահոց վեցերորդ կերակիի կանոնի Բ2 ծանր օրնության («Որ վնորիւրդ քո գալտեանդ») մեղեդին, որ նույնությամբ կուգորովել է Պատարագի երգերից հանրահայտ «Տէր ողորմեա»-ի խոսքերի հետ:

կետեր²⁸, որոնց մասին ավելի որոշակի խոսք ասելու համար անհրաժեշտ է քննության ուղիղը ներգրավել առնվազն մի խումբ միջնորդարյան գրչագիր շարակնոցներ: Այս բո-

լորով հանդերձ, ուսումնասիրությունը հիմքեր է տալիս հավաստելու, որ Անանիա Շիրակացու երաժշտա-բանաստեղծական ժառանգության մեջ մինչև մեր օրերն իսկ պահպանվել

Ծանր

Ա - ուս - ի՛ն - լոյ ա - դաւ - նոյ,
 Ի - զա - նե - լոյ մե - ծա - ջայն,
 հրեւ - մամբ Ի , բար - ջանց
 Ի - նաւ - նու - թիւն
 լու - սոյ փայլ - ման, հրա - ւին եայ
 աւ - կի - ւն - լի զա - ւա - կերսն
 մինչ - դեռ նրա - եւ - ին
 Ի սուրբ վեր - նա - ճան:

²⁸ Ինչպես օրինակ՝ Գ2 առաջին ու երկրորդ հարցերի գործատուների, Գ4 առաջին հարցի և Դ4 երրորդ հարցի սկզբի կարճ վանկերը (ըստ Չայնազրեալ Շարականի), որոնք կարճ չեն մեր օգտագործած ձեռագրում: Կամ դարձեալ՝ Չայնազրեալ Շարականից Հարության Գ4 առաջին հարցի, Դ4 առաջին հարցի և Հոգեգալստյան Ա կանոնի օրինության սկզբները (երեք-չորս վանկ) երաժշտական շեջտի ու կշռույթի առումով փոքր-ինչ տարբեր են վերոհիշյալ ձեռագրի համեմատությամբ և այլն:

են նշանավոր շարականագրի ժամանակն ու նաև նրա արվեստագետի անհատականությունը բնորոշող արժեքավոր բազմաթիվ ստեղծագործություններ թե՛ վանկային ու ծորերգային և թե՛ ծանր երգեցողությունների շրջանակներում:

Այստեղ կանգ առնենք Շիրակացու հատկապես ծանր շարականների վրա: Մի կողմ թողնենք հետագա դարերի գեղարվեստական արտադրանքի հետ վերը նշված տիպի փոխադարձ, և արդեն կարծես անքակտելի դար-

ձած, կապերի մեջ գտնվող երգերը: Շիրակացու ժառանգության մեջ քիչ չեն ծանր, դարձվածք²⁹, երբեմն նույնիսկ ստեղծատիպ

Հոգեգալստյան Ա օրվա կանոնի օրինության ծանր տարբերակը՝ «Առաքելոյ աղանդ»³⁰: Սա Դ2-ի առաջին դարձվածքում ընթացող

Մանր

Ան-ժա-նե-լի բնու-թիւն եւ բան
հօր ա-ռա-քե-լի ցար ի
հայ-րա-կան ծո-ցոյ
և ա-նոր մար-մին ի
սրբ-բոյ կու-սէն, սուրբ
Աս-տի ուած հար-ցուն մե-րոյ:

այնպիսի կտորներ ևս, որոնք, գեթ գլխավորագույն գծերով, պահպանել են իրենց ըսկըպենական նկարագիրը: Ի մոտո ծանոթանանք դրանցից հինգի հետ: Առաջինն է

աչքառու շարականներից է, որ անցյալում գրավել է նաև Առաքել Սյունեցու ուշադրությունը³¹: Բացի կուտ գեղարվեստական այն-

²⁹ Ավելի ստույգ՝ ծանր ու դարձվածք կտորներ առկա են թե՛ Հոգեգալստյան ու Վարդավառի Ա օրերի կանոններում և թե՛ Հարության Ա2—Դ4 բոլոր շաբերում: Գուցե մի վերապահություն պետք է անել Բ4 դարձվածք եղանակի մասին, որն, իրոք, կա՛մ տարրալուծվել է դարերի ընթացքում, ըստ որում ողջ Շարակնոցի չափացույցներով, և կա՛մ, որ նույնպես հավանական է, դարձվածք եղանակների համակարգի մասին մեր գիտանքը դեռ ամբողջական չէ:

³⁰ Չայնագրեալ Շարական Հոգեւոր Երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 615:

³¹ Այսպես, շոջափելով ձայնեղանակների համակարգերի ըմբռնման խնդիրները, երաժիշտ, բանաստեղծ ու գիտական հեղինակը խորհուրդ է տալիս պանականել միևնույն ձայնեղանակի ստորաբաժանումները ևս. «Կի մի ձայնումն պանական եղանակ գոյ,—գրում է նա, օրինակ բերելով Դ2 ձայնեղանակի երեք շարական, այդ թվում և մեզ պաղեցնող երգը,—որպես ի Դ2 ձայնն այլ է այն որ ասի՝ Առաքելոյ աղանդ»:

պիսի արժանիքներից, ինչպիսիք են գրական բնագրի ու երաժշտության օրգանական կապը, երգային կերպարի բնական արտահայտչականությունն ու անսեթևեթ անմիջականությունը, շարականս գրավում է ոճական հա-

վերջին կետերը պայմանավորված են հետևյալ հանգամանքով: Երգի գրական բնագիրը ազատ ոտանավոր է: Տունը (տվյալ դեպքում՝ բերված առաջին տունը) բաղկացած է հինգ անհավասար տողերից, որոնք

Օսեր

Որ կա - մե - նա - ցօր ցօ - րու - թիւ -

ցրդ իո ցու - ցեր ի բա - թի լոն

փրդ - կե - լով զե - թիս ման - կունան ի հնո - ցին,

*) ըզ - ֆեկ օրհ - նեմի Աս - ցը - ուած

հար - ցըն մե

րոյ:

րության մի ուրույն որակով: Պարզ պզգցվում է, որ այն հորինվել է ծանր երգեցողությունների հնամենի ավանդույթներ ունեցող երկրում և փորձված հեղինակի վարժ, վստահ ձեռքով: Հատկապես առինքնող են երգում մեղեդիի սահուն ընթացքը, նրա ծավալման արձակ բնույթն ու ազատ շունչը:

և այլ է այն՝ Որ ի վերայ թղխեալ գաւազանին. և այլ է այն՝ Ընդ երկնայնոց հոգեղինաց. այսպես և վայրս իմասցիս» (Գիրք սահմանաց սրբոյն Դաւթի անյաղթ փիլիսոփայի՝ և յետ ժամանակի արարեալ լուծումն սորին հոգեշահ մեկնութեամբ Տեառն Առաքելի եռամեծ վարդապետի, Մադրաս, 1797, էջ 524. ընդգծումները մերն են—Ն. Թ.): Կարևորագույն պարագա է, որ Սյունեցու իշխատակած շարականները մինչև այժմ՝ էլ պահպանել են նրա մատնացույց արած ձայնեղանակային-եկեղային հատկությունները:

ունեն տարբեր թվով անդամներ (ոտքեր) և վանկեր³²: Այս պայմաններում երաժշտական տարբեր տևողության դասույթներ կուզորդվում են ոտանավորի երբեմն մեկ ու երբեմն ևս երկու անդամների հետ այնպես, որ մեղեդիական փոքր դադարները³³ անկախ լինեն խոսքի իմաստային միություններից, որոնք համապատասխանում են տողերին:

³² Այսպես՝

Առաքելոյ աղաւտոյ (4-3)

Իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց (4-3-2-3)

Ի նմանութիւն լուսոյ փայլման (4-4)

Հրապինեաց անկիպելի վաշակերտոս (4-4-3)

Մինչդեռ նըստեին ի սուրբ վերնատան (2-3-2-3):

³³ Այդ դադարները, որոնք փաստորեն շունչ առնելու տեղեր են, նոտային օրինակում ցույց ենք տվել վերևից դրված խոշոր ստորակետերով:

Գրական բնագրի ու մեղեդիի կառուցվածքի, այլև դրանց փոխհարաբերության տեսակետով բերված ծանր երգին մոտիկ (բայց ոչ նույնական) մի պատկեր են հանդիսարում գեղարվեստական առումով ոչ պակաս

«Անճառելի բնություն» հարցում կրկնակն ուղղակի սկսվում է երկարաձիգ, չարդուրուն վանկով, որով կարևորվում է «սուրբ» բառը: Երաժշտականապես շեջտված է նաև հաջորդ բառը («աստղած»), որ բաժանված

Ծանր

Որ վա - սըն մե - լոյ փրկ - կու
թեան հ - զեք
հ յնրկ - նից մի - ա - ծին
որ դի քրիս - տոս
փրկ - կիչ մեք,
փրկ - կեա պնկ սէր Աս - տը - ուած
հար - պըն մե - լոյ:

շահեկան հետևյալ երկու կոթողները, որ են՝ Հարության ԳԿ շարքից՝ «Անճառելի բնություն», և ԴԿ շարքից՝ «Որ պամենապոր պությունը քո» հարցերը³⁴:

Երկու ստեղծագործություններն էլ ներկայացնում են դարձով կամ կրկնակով շարականներ, որոնցում կրկնակները (տես նոտային օրինակներում մեծ աստղանիշով ցույց տրված հատվածները), երաժշտական ուրույն կառուցվածք ունեն:

Է միջակ-ուրորուն երեք վանկերի: Վերջապես, երգի տան հանգանում դարձյալ հայտնվում է գրական բնագրի մեկ վանկի հետ պուգորոված երկարաձիգ մի նոր ուրորում, որով եկրափակվում է նախընթացը:

«Որ պամենապոր պությունը քո» հարցի կրկնակում ավելի ևս ընդգծված է մեղեդիի չարդուրուն բնույթը: Այն (կրկնակը) նախընթացի հետ կապվում է սահուն անցումով, առանց նկատելի հակադրության: Աստիճանաբար, սակայն, զգալիորեն փոխվում, բար-

³⁴ Չայնագրյալ Եարական, էջ 544 և 594:

դանում է երաժշտության չափա-կշռության կառուցվածքը:

Դիտարկման ենթակա հետևյալ նմուշը Հարություն ԱԿ շարքի «Որ վասըն մերոյ փրկութեան, հարցն է³⁵:

ներով: Մեղեդին ընթանում է ԱԿ դարձվածքում ընդգրկելով ինչպակի սահմաններով որոշվող բավական լայն մի ձայնածավալ (առաջին «էկորձից» մինչև երկրորդ «վերնախաղ» կիսվար):

Ա. Չափավոր ծանր

Յա - րեաւ սէրն

ի գե - րեւ մա - նէն:

Զնդ յառ-նել փրկ - շին մե - թոյ

եղ - կիր շար - ծե - ցաւ,

վէ մըք պա - ւա -

ոե - ցան:

Նախորդ օրինակների համեմատությամբ այստեղ ուշադրություն են գրավում առաջընթաց նոր քայլեր, որոնք կատարված են ինչպես ձայնեղանակի չափա-կշռության կազմակերպման, նույնպես և նրա ելևէջային հնարավորությունների բացահայտման առում-

Ընդհանրապես ասած, տվյալ ձայնեղանակը, իր վարգացած ձևերի մեջ, ունի համաձայնության չորս հենակետ: Դրանք են՝ դիմող ձայնը («պարոյկ») ³⁶, հանգչող ձայնը

³⁵ Չայնագրյալ Շարական, էջ 474:

³⁶ Չայնագրյալ ժողովածուներում սա թեև արտահայտվում է «ներքնախաղ» կիսվերով, բայց դա լոկ գրության ձև է՝ ձայնեղանակը արտաքին տվյալներով

(«խոսքովային»), վերջավորող ձայնը («ներքնախաղ») և վերջին վերջավորող ձայնը («էկորձ»): Բերված օրինակում օգտագործված է մի հավելյալ հանգչող ձայն էլ՝ «բենկորձը», որով մեղեդիապես շրջապարզվող և սեփական շրջապատով ու այլապես հանգաձևերով ներկայացվող հենակետերի թիվը բարձրանում է հինգի: Այս հանգամանքն իսկ բավական է հաստատելու, որ շարականում առավել ամբողջական, բավականորեն բացահայտվում ձայնեղանակի համաձայնության-եկեջային հնարավորությունները: Բայց կան այլ կետեր ևս, որոնք ուրույն նկարագիր են հաղորդում մեղեդիի արտահայտչականությանը:

Վերոհիշյալ հինգ հենակետերը, անկախ ոտանավորի կրկնակով (այսինքն՝ երկմասանի) կառուցվածքից, երաժշտության պարզացման մեջ եռմասնիություն ուրվագծող յուրօրինակ գիծ են անցկացնում, պույգ-պույգ: Այսպես, եղանակի սկզբնական պտույտները ի հայտ են բերում դիմող և հանգչող («պարույկ» և «խոսքովային») ձայների ընդունված (սովորական) հարաբերությունը (b-g): Հետո, լայնաշունչ մի պտույտով վառ կիսահանգաձև է գոյացնում «էկորձը», հանդես գալով լոկ այստեղ, ծավալման միջին հատվածում (այլ ոչ թե որպես վերջին վերջավորող ձայն): Գծագրվում է միջին հատվածին հատուկ հակադրվող հարաբերությունը d(a-fis)-g երկու հենակետերով: Ի վերջո «խոսքովային» մասնակցությամբ շրջապարդումները հանգեցնում են, նախ՝ «բենկորձին», ապա և՛ «ներքնախաղին»:

Նվազ հետաքրքրական չէ նաև շարականի չափակշռության կառուցվածքը: Ոտանավորը հորինված է այնպես, որ կրկնակը ծավալով հավասարվում է տան երկրորդ կեսին:

Շարականի եղանակում քանակապես քիչ չեն միջակ վանկերը: Բայց դրանց կշռության ձևավորման մեջ պայլի դեր են կատարում պարզարող, անցիկ, օժանդակ և կարճագույն տևողության մեղեդիական այլ հնչյուններ, որոնք հարստացնում են ամբողջ պատկերը: Բացի այդ, այստեղ օգտագործված են յոթ մեծ վանկեր (ներառյալ վերջնահանգաձևն էլ) ու նաև երկարաձիգ երկու ոլորումներ:

Ամբողջապես առած՝ շարականս, նախորդ երգերի համեմատությամբ, ներկայացնում է համաձայնության պարտություն մոտեցող ուշագրավ շեղման վարպետ կիրառման և,

ևս իսկույն պանպանելի դարձելու մտահոգությամբ կիրառված: Ապացույց՝ որ տետության մեջ միշտ էլ նշվում է, թե ԱԿ դարձվածքը նման է ճիշտ Ավագ կողմին և գրվում է տեղափոխված էջերով:

միաժամանակ, երկարաձիգ ոլորումները դարձի կամ կրկնակի շրջանակներից դուրս բերելով՝ դրանք բանաստեղծական ամբողջ տան վրա տարածելու միտումների իրագործման հնագույն և խոսուն նմուշ:

Երկու առումներով էլ հաջորդ և շատ նշանակալի քայլը կատարված է հետևյալ օրինակում:


Սա ևս Հարության երգերից է: ԳԿ շարքից «Յարեաւ տէրն» տեր երկնիցը³⁷: Ստեղծագործությունը բաղկացած է երեք տնից: Առաջին տունը, սակայն, ընդամենը մի տող է, որ ներածական բնույթի ավետիս է: Ուստի, մենք բերել ենք երկրորդ տունը ևս, երաժշտական կերպարն առավել ամբողջական ներկայացնելու մտահոգությամբ: Երաժշտական բաղադրիչը, որում պգալորեն խորացված է գրական բնագրի հուպական բովանդակությունը, աչքի է ընկնում վառ կերպարայնությամբ ու վիպա-քնարական լայն շնչով:

Ոտանավորի առաջին տունը կապմող գրական տողի վերոհիշյալ նկարագրի (ու պաշտոնի) համեմատ, երաժշտությունը ևս ներածական բնույթի է: Այդ սահմաններում մեղեդին ընթանում է ԳԿ-ում: Երկրորդ տան սկզբից այն (մեղեդին) կտրուկ անցումով մտնում է ԳԿ դարձվածքի ոլորտը, լրիվ երեվակում է նրա կենտրոնն ու շրջապատը և ետ դառնում դեպի ԳԿ³⁸: Գոյանում է ձայնեղանակային տպավորիչ պարտություն, որ կարի հարստացնում է շարականիս երաժշտության համաձայնության-եկեջային կառուցվածքը: Իսկ չափակշռության պատկերի հարստությունն այնքան ակներև է (կարճ, միջակ և ավելի շատ՝ մեծ ու մեծագույն վանկերի ներգրավումով), որ այդ մասին ավելորդ է երկարաբանել: Սա միայն նշենք, որ բերված օրինակում հնչում է չափական 60 միավոր, որից 45-ն ընդգրկված են մեծ ու երկարաձգված վանկերի կշռության ձևավորման մեջ, վանկեր, որ կիրառված են երաժշտական ողջ կառույցի չափացուցիչներով:

Այսպիսին է մեր միջնադարյան գիտության ու մշակույթի խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ բանաստեղծ-երաժիշտ Անանիա Շիրակացու անփոխարինելի ավանդը հայ մասնագիտացված երգաստեղծության պարզացման մեջ: Երաժշտի, որն հորինել է եկեղեցական տարվա գլխավորագույն ու երկարատև մի շրջանում՝ Հինանց ժամանակամիջոցում կատարվող Հարության երգաշարքերը, այլև Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի շարականները:

³⁷ Չայնագրյալ Շարական, էջ 546:

³⁸ Ի դեպ, նույն պատկերը (այսինքն՝ ԳԿ—ԳԿ դարձվածք—ԳԿ), ավելի սեղմ շրջանակներում կլրկնվում է նաև շարականիս երրորդ տան մեջ:



ԳԵՎՈՐԳ ՄԽԼԱՅԻՄ

Գևորգ Մխլայիմը 18-րդ դարի մատենագիր է, հեղինակ ինքնություն և թարգմանական մի շարք երկերի: Չնայած իր գրական բեղմնավոր գործունեությանը, նրա մասին առ այսօր հրապարակի վրա չունենք գեթ մեկ հոդված¹: Մխլայիմի մասին հիշատակությունների հանդիպում ենք միայն մատենագիտական աղբյուրներում տպագրված կամ անտիպ երկերի առիթով²:

Գևորգ Մխլայիմը ծնվել է 1681 թ. Կ. Պոլսում³: Իր տոհմի պատմության մասին նա

¹ Համառոտ կենսագրականը տես Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հատոր առաջին, Երևան, 1973:

² Գ. Զարբանալյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883: Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, առաջին պրակ, Վենետիկ, 1909: Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր առաջին, Երևան, 1959, հատոր երկրորդ՝ 1976: Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, 1512—1800, Երևան, 1963: Զ. Կոթկոտյան, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթարյան, հատոր Ա, Երեվան, 1965, հատոր Բ՝ 1970: Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հատոր 1—9, Երուսաղեմ, 1966—1979 և այլն:

³ Գևորգ Մխլայիմի ծննդյան և մահվան թվականների մասին միակ տեղեկությունը հաղորդում է Հր. Սաստուրը՝ գրելով. «Ձեռագիր տետրակի մը մեջ, որ կը գտնվի Վահան Զարդարյանի քով, օրինակված է Սթամպուլցի Մխլայիմ Գևորգի տապանագիրը, որմե կը տեղեկանանք թե մեռած է հայոց ՌՄԷ (1758) թվականին, 6 հունվար, 77 տարեկան» («Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», 1901, էջ 148):

գրում է. «Ես, Կոստանդնուպոլսեցի Մրիլայիմօղլու Խօճայ Կարապետի որդի Գևորգ վարդապետս ի վարմէ Պապանուն իշխանին Սեբաստիոյ, որ յաւուրս ձէլալի փաշայից, զոր յիջէ Առաքել պատմագիրն⁴, նահատակութեամբ կատարեցաւ, որոյ ես թոռան որդին եմ...»⁵:

Ինչպես այս հիշատակությունից պարզվում է, Գևորգ Մխլայիմի նախնիները եղել են Սեբաստիայից: Իշխան Պապանունի նահատակության մասին այլ աղբյուր հայտնի չէ: Հոր անունը եղել է Կարապետ. ուստի և Մխլայիմը հայրանուն չէ: Մխլայիմը ըստ երևույթին առաջացել է մըխ-մէխ բառից, որից է նաև մըխլայըձըն, որն, ըստ Հր. Աճառյանի, «մատենու ակը գամող արհեստավոր, ոսկերիչ»⁶ է նշանակում: Գուցե Գևորգի հայրը կամ մեծ հայրը հետևել է այդ արհեստին, որի պատճառով էլ կոչվել է Մխլայիմ օղլի, այսինքն՝ Մխլայիմի որդի⁷:

⁴ Նկատի ունի Առաքել Դավրիժեցուն, որն իրոք հանգամանորեն խոսում է ջալալիների մասին: Պապանունին Դավրիժեցին չի հիշում:

⁵ Ն. Պողարյան, նշվ. աշխ., հատ. 9, Երուսաղեմ, 1979, էջ 154:

⁶ Հր. Աճառյան, Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ, Մոսկվա—Ադաբադապատ, 1902, էջ 235:

⁷ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Չմյուռնիացու (1707—1708) դեմ պայքարած կաթոլիկ աշխարհականների՝ Մանուկ Բուրսուկյանի, Հարություն Թյուրքյանի և այլոց հետ հիշվում է նաև մի Մխլայիմյան («Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», 1901, էջ 124): Այս Մխլայիմյանը Գևորգը լինել չի կիրոր, քանի որ նա այդ ժամանակ արդեն վարդապետ էր, և երկրորդ՝ 1706-ից գտնվում էր Փարիզում:

Գևորգ Մխլայիմն իր նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ընդունել հոգևորական կոչում, դարձել վարդապետ։ Այդ ժամանակ էլ շրջագայել է Հայաստանում, այցելել անգամ Նորվիքայ։ Նա իր այդ շրջանի գործունեության մասին հետագայում գրում է. «Ահա ես, բազմամեղ և անարժան ծռայք քո՝ յորմէ հետէ շնորհօք ողորմութեան քոյ վարդապետական աստիճանի վիճակեալ, ի սպասատրութիւն բանի քոյ շըրջեցայ ընդ ամենայն Հայաստան և ոչ վրիժիայն ժամանակ առանց չարչարանաց և հալածանաց անցուցի, եթէ ի թշնամեաց, եթէ ի սուտ եղբարց ըստ առաքելոյն Պօղոսի քոյ. և ահա այսօր տարեդարձ արեգական շրջումն կատարեաց զընթացն իւր, յորմէ հետէ ի մէջ խաւարային բանտիս այսորիկ ի տուէ և ի գիշերի կարդամ առաջի քոյ»⁸։

1706 թ. Գևորգ Մխլայիմն հանդիպում ենք Ֆրանսիայում ուսանելիս⁹։ Վեց տարի սովորել է «ի թագաւորական դպրատանն Փարիզու»¹⁰, տիրապետել է ֆրանսերեն, լատիներեն, հունարեն լեզուներին, որոնցից կատարել է թարգմանություններ։

Դժվար է ենթադրել, որ հայ առաքելական եկեղեցու վարդապետը մեկնել է Փարիզ կրթություն ստանալու, ունկնդրելու կաթոլիկ քարոլիզների դասընթացները։ Ամենայն հավանականությամբ եղել է նաև այլ դրդապատճառ։

17-րդ դարի վերջին լուսավորչական-կաթոլիկական պայքարը ծայր աստիճան սրվել էր։ Լուսավորչականների պարագլուխն էր ժամանակի Կ. Պոլսի պատրիարք Ավետիք Եվդոկիացին, որը շատ բուռն և հետևողական պայքար է մղել կաթոլիկների դեմ։ Պատահական չէ, որ նրան համարել են «Ամենամեծ հալածիչը, որ երբևէ ունեցած լինեն կաթոլիկներն Արևելքում», կամ «կաթոլիկության անդրդվելի և անողոք հալածիչ»¹¹։ Եվդոկիացու ամենավտանգավոր հակառակորդն էր Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան մարկիզ դը Ֆերիոլը, որը «լատին կրոնավոր հայր Հակիսթոսի թելադրությամբ առնանգեց Ավետիքին՝ նրան ընկերացող թուրք բարապանին կաշառելով և նրան մի ֆրանսիական նավ նըստեցնելով՝ հանել տվեց Մեսինայի նավահանգիստը, 1706 թ. մայիսին։ Ավետիքը միառժամանակ այնտեղ մնալուց հետո Լուդովիկ Ժ-ի հրամանով հետպիտեռ ուղարկվեց

Մարսիլայի արքունի նավարանի (Arsenal) բանսը, հետո՝ Ատլանտյանի վրա Բենեդիկտյանների ս. Միքայելի վանքը (Mont-Saint-Michel) և ապա՝ Փարիզ, Բաստիլի բանտը (Bastille)»¹²։

Եվդոկիացու համախոհները, տեղեկանալով իրենց պատրիարքի առևանգման մասին, դիմել են ամեն միջոցի՝ նրան ազատելու համար։ Նրանք անգամ խնդրագիր են ներկայացրել սուլթանին։ Գուցե Ավետիք Եվդոկիացու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու, անգամ նրա փախուստը կապակերպելու նպատակով անհրաժեշտ է եղել որևէ մեկին ուղարկել Փարիզ։ Պատահական չէ, որ հենց այդ օրերին, այսինքն Ավետիք Եվդոկիացու Բաստիլում բանտարկվելու՝ 1706 թվականին է կուգադիպում Գևորգ Մխլայիմի Փարիզում հայտնվելը։

Եվդոկիացու կյանքի վերջին շրջանի մասին կարդում ենք. «1710 թ. սեպտեմբեր 22-ին Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Նոայի առաջ հավատո դավանություն տալով Բաստիլից հանվեց՝ հսկողության տակ ապրելու համար, սակայն ինն ամիս հետո մահացավ, 1711 թ. հուլիսի 11-ին»¹³։ Ավետիք Եվդոկիացին մեծ հեղինակություն էր վայելում Արևելյան քրիստոնյա աշխարհում, և նման դավանափոխությունը ցնցող ապդեցություն պիտի ունենար՝ մանավանդ պոլսահայ իր համախոհների միջավայրում։ Ուստի և կարդինալ Նոայի համար Եվդոկիացու կաթոլիկություն ընդունելն ուներ շատ կարևոր նշանակություն։ Սակայն կաթոլիկ գործիչները չէին կասկածում, որ այդ դավանափոխությունն առերես է։ Նրանք նաև համոզված էին, որ հայերը փորձելու են ազատել Ավետիք Եվդոկիացուն, դրա համար էլ նրան պահում էին խիստ հսկողության տակ։

Հնարավոր է, որ այդպիսի փորձ կատարվել է, և այդ պատճառով է, ամենայն հավանականությամբ, Գևորգ Մխլայիմը ձերբակալվել ու նետվել Բաստիլի բանտը։

Թե երբ է տեղի ունեցել այդ բանտարկությունը, հայտնի չէ։ Սակայն առկա փաստերի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացության. Մխլայիմը Փարիզ է գնացել 1706-ին, ուր, իր իսկ վկայությամբ, ուսանել է վեց տարի, որից հետո բանտարկվել է։ Ուրեմն բանտարկությունը տեղի է ունեցել 1711 թ., այսինքն՝ Եվդոկիացու մահվան տարում։

Բոլորովին էլ անհավանական չէ, որ 54-ամյա Ավետիք պատրիարքը 1711 թ. հուլիսի 11-ին մահացած լինի ոչ թե իր մահով, այլ

⁸ Գևորգ Մխլայիմ, Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաթեակաց, [Կ. Պոլիս], 1734, էջ 105, 165։

⁹ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 9805, էջ 3ա։

¹⁰ Գիրք վիճաբանութեան, էջ 61։

¹¹ Հ. Ս. Անապյան, նշվ. աշխ., հատ. Բ, սյուն. 981։

¹² Անդ։

¹³ Անդ, սյուն. 981—982։

թունավորված, մի բան, որ սովորական երեկոյթ էր մոլեռանդ կաթոլիկ հոգևորականության համար¹¹:

Մխլայիմը բանտում մնացել է մինչև 1713 թ.: Ահա թե ինչ է գրում նա այդ մասին. «Ահա ի ծունկս անկեալ առաջի աստուածային մեծ վայելչութեան քոյ. ի մէջ խաւարային և դռնփակ բանտիս այսորիկ, յոր արկին փս թշնամիք ճշմարտութեան քոյ, ապա ի խորոց աստի, մառախլապատ և անմխիթար խորխորատոյս այսորիկ, Կտկարացեալ հիւանդագին ձեռս իմ այժմ առ քեզ յերկինս համբառնամ»¹²:

Ըստ երևույթին Եվդոկիացու մահից հետո Գևորգ Մխլայիմի հանդեպ հսկողությունը թուլացել է, և նա բանտում կարողացել է անգամ պաշտել գրական աշխատանքով. գրել է «Յաղագս քահանայագործութեանց» երկը¹³, կատարել թարգմանություններ: Օգոստինոսի «Յաղագս պահոցի» հիշատակարանում նա գրում է. «Ես, Կոստանդնուպոլսեցի Գևորգ վարդապետս, չարչարակից Քրիստոսի... գրեցի կայս գիրքս արտասուալից թանաքով եւ հիւանդացեալ ձեռք ի մէջ բանտին»¹⁴:

1713 թ. Գևորգ Մխլայիմը ապատվում է Բաստիլից և վերադառնում Թուրքիա¹⁵, բայց

¹⁴ Ֆրանսիացի մի քանի գիտնականներ (Տոլես, Տոպեն և այլն) հայտնել են այն կարծիքը, թե Բաստիլի բանտի նշանավոր կալանավորը՝ Երկաթի դիմակով մարդը, եղել է Ավետիք Եվդոկիացին: Հատկապես արժեքավոր է Topin Marius, L'Homme au masque de fer, Paris, E. Dentu-Didier et Cie, 1870 աշխատությունը, որի հայերենը տես Երկաթե դիմակով մարդը և Հայոց Ավետիք պատրիարքը: Գրեց Պ. Մարիոս Թոբեն և թարգմանեց գաղիական բնագրեն Կ. Ս. Ութուշյան: Կ. Պոլիս, 1870: Թեև հետագայում այս կարծիքը մերժվեց, սակայն հետաքրքրությունը Ավետիք Եվդոկիացու հանդեպ չթուլացավ և, ինչպես հայերեն, այնպես էլ Ֆրանսերեն ստեղծվեց հարուստ գրականություն (մատենագիտությունը տե՛ս Հ. Ս. Անասյանի նշվ. աշխ., սյուն. 980—1009):

¹⁵ Գիրք վիճաբանության, էջ 164:

¹⁶ Մատենադարան, ձեռ. 134:

¹⁷ Ն. Պողոսյան, նշվ. աշխ., հատ. երրորդ, Երուսաղեմ, 1968, էջ 176:

¹⁸ Ա. Ղազարյանի իր «Հայկական նոր մատենագիտություն» գրքում (սյուն. 436—437) Մխլայիմի «ճշմարիտ նշանակություն կաթոլիկություն» երկի կապակցությամբ գրում է. «Սույն գիրքը գրած է Հռոմի իր բանտարկության օրերուն, ինչպես կընես Առաքանության մեջ...: Ատեն մըն ալ Հռոմ կեցած, ինչպես կը հիշվի էջն 209»: Թյուրիմացությունը ակնբախ է, քանի որ ո՛չ Ղազարյանի հղած էջում և ո՛չ էլ Գևորգ Մխլայիմի որևէ այլ երկում նման ակնարկի չենք հանդիպում: Արդեն տեսանք, որ նա բանտարկվել է ոչ թե Հռոմում, այլ՝ Փարիզում:

հաստատվում է ոչ թե Կ. Պոլսում, այլ՝ Կեսարիայում: Այստեղ մնում է վեց ամիս: Այնուհետև այցելել է Թոխաթ¹⁹ և հավանաբար 1714-ի սկզբներին տեղափոխվել Կ. Պոլիս, որ պաշտոնավարել է Ղալաթիա թաղամասի հայկական եկեղեցում, պաշտելով քարույրությամբ և մատենագրությամբ:

Կ. Պոլիս վերադառնալուց հետո Գևորգ Մխլայիմը ծավալել է բուռն պայքար ընդդեմ կաթոլիկության, դառնալով, փաստորեն, այդ շարժման գաղափարախոսը: Նա իր ծախսով հրատարակել է ոչ միայն հայերեն, այլև հունարեն²⁰ գրքեր. «Ոչ թե վասն իմաստութիւն ցուցանելոյ կամ փառս որսալոյ ի մէջ մարդկան, քաւ լիցի, այլ միայն պշահաւէտութիւնն ընթերցողաց խնդրեմք, որպէս քի ամենեքեան եթէ մեծք և եթէ փոքունք, ընթերցեալք ւնտսս և ճանաչեալք վճշմարտութիւնն...»²¹: Պատահական չէ, որ երբ հայ առաքելական եկեղեցու դեմ որևէ գործ է հրատարակվել, հայոց պատրիարքը «հրաման տուեալ էր նմա, ասելով թէ դո՛ւ ես ընդդիմարկն նոցին բանիցն գրեա և տպագրեա և ցրուեա»²²:

Գևորգ Մխլայիմը մահացել է իր ծննդավայրում՝ Կ. Պոլսում, 1758 թ., 77 տարեկան հասակում:

*
* *

Գևորգ Մխլայիմի մատենագրական ժառանգությունը, ինչպես արդեն նշեցինք, ցարդ չի արժանացել թեկույ համառոտ մի ուսումնասիրության: Դրա պատճառը, ըստ երևույթին, նրա ինքնուրույն և թարգմանական երկերի կրոնադավանաբանական բովանդակությունն է: Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ լուսավորչական-կաթոլիկական պայքարին մասնակցող հոգևորականների մեծ մասը օժտված է եղել լեզուների իմացությամբ (ինչպիսին էր նաև Գևորգ Մխլայիմը), տեղյակ ոչ միայն աստվածաբանական գրականությանն ու պատմությանը, այլև փիլիսոփայության, անտիկ մատենագրության, տոմարագիտության, ունեցել է քննական-բանավիճային նկատելի կարողություն: Անգամ Կոստանդնուպոլսի հարցեր շրջափող գրքերում հանդիպում ենք պատմական արժեք ներկայացնող շատ փաստերի, բարոյախոնական գեղեցիկ պատմությունների, առակների, չափածո պատկերների, որոնք ընթերցանության հաճելի նյութեր են եղել և այժմ էլ չեն կորցրել իրենց թարմությունը:

¹⁹ Գիրք վիճաբանության, էջ 58:

²⁰ Մատենադարան, ձեռ. 883, էջ 81ա:

²¹ Ճշմարիտ նշանակություն կաթոլիկություն, Կ. Պոլիս, 1750, էջ 270:

²² Մատենադարան, ձեռ. 883, էջ 86ա:

Վերջապես, դավանաբանական գրականությունը հիմնականում ունեցել է նաև քաղաքական նշանակություն, քանի որ հայ ժողովրդին կաթոլիկություն ընդունելուց, այսինքն ձուլումից ետ պահելու գործում նրա դերը եղել է բավական կարևոր:

Գևորգ Մխլայիմի ինքնությունը և թարգմանական գրեթե բոլոր գործերն էլ ունեն նույն նպատակադրումը՝ պայքար կաթոլիկության դեմ հանուն ազգապահպանման:

Այժմ ծանոթանանք Գևորգ Մխլայիմի մատենագրական ժառանգությանը: Նախ ներկայացնելու ենք նրա թարգմանական գործերը, քանի որ դրանք հարուստ ատաղձ են հանդիսացել ինքնությունների համար:

Մեր նպատակից դուրս է անդրադառնալ այդ երկերում բարձրացված կրոնական հարցերին: Փորձելու ենք ներկայացնել թարգմանությունների ժամանակի, տեղի, շարժառիթների, դրանց նշանակության հետ կապված խնդիրները:

Գևորգ Մխլայիմի թարգմանությունների մեջ կարևոր տեղ են գրավում եկեղեցական ժողովների պատմությունները, որոնցից առաջինը նա կատարել է 1706-ին, Փարիզում: Աշխատության խորագիրն է՝ «Սուրբ և տիեզերագումար երկրորդ ժողովն Եփեսոսի ընդդեմ Փլաբիանոսի երկաթնակ պատրիարքին Կոստանդնուպոլսոյ, արարեալ ի մեծ վկայեն Քրիստոսի սրբոյն Դեոսկորոսէ հայրապետէն Աղէքսանդրիայոյ. արտահանեալ ի գործոց Քաղկեդոնի ժողովոյն և թարգմանեալ ի հելլենացոց լեզուէն ի հայ բարբառ ի Կոստանդնուպոլսեցի Գէորգ վարդապետէն, ի մէջ Դպրատանն Փարիզոյ, մայրաքաղաքին Ֆրանսայոյ, թոին Քրիստոսի ՌՉԺ (1710) և Հայոց ՌՃԾԵ (1706)»²³:

Հետագայում, արդեն Կ. Պոլսում, թարգմանել է «Պատմութիւն սրբոյն ժողովոյն Սարգիկայ, իբր մասն ինչ առակցական Նիկիա-

յոյ»²⁴, «Պատմութիւն Կոստանդնուպոլսոյ ժողովոյն, որ է երկրորդ ընդհանրական ժողով»²⁵, «Պատմութիւն սուրբ ժողովոյն Եփեսոսի, որ է երրորդ տիեզերական ժողով»²⁶, «Գործք Քաղկեդոնի ժողովոյն»²⁷ երկերը:

1734 թ. հրատարակված և վերնում հիշատակված «Գիրք վիճաբանութեան» երկի հետ միասին, էջակաման շարունակությամբ՝ իբրև մեկ ընդհանուր գիրք, հանդիպում ենք Գևորգ Մխլայիմի դեռևս Փարիզում կատարված մի այլ թարգմանության՝ «Պահք առաջին քրիստոնեից. ցուցեալ ի թղթոյն Օգոստինոսի, թարգմանութեամբ շարադրողի վերոյ գրեցեալ գրքոյն»²⁸:

Մատենագիտական աղբյուրներում «Գիրք վիճաբանութեան» ու Օգոստինոսի հիշյալ երկը նկարագրված են իբրև մեկ ամբողջություն:

Առաջին անգամ այս գրքին անդրադարձել է լեզվաբան Վ. Համբարձումյանը²⁹ ցույց տալով, որ երկրորդը հանդիսանում է Գևորգ Մխլայիմի կողմից լատիներենից կատարված մի թարգմանություն, որը, բացի էջակաման հաջորդականությունից, ոչ մի առնչություն չունի նախորդ՝ «Գիրք վիճաբանութեան» երկի հետ:

Հիշյալ թարգմանությունը ևս Մխլայիմը կատարել է Բաստիլի բանտում³⁰:

Այդ նույն երկի նախնական մի օրինակի հանդիպում ենք Երուսաղեմի № 992 ձեռագրում, որի հիշատակարանում կարդում ենք. «Ես, Կոստանդնուպոլսեցի Գէորգ վարդապետըս, չարչարակից Քրիստոսի եւ լուսատրչադաւանդ հերձուածողաց վասն շատագովութեան Աստուածութեանն Քրիստոսի եւ լուսատրչադաւանդ օրինացն նորա, գրեցի զայս գիրքս արտասուալից թանաքով և հիւանդացեալ ձեռօք ի մէջ բանտիս»³¹:

Երուսաղեմի հիշյալ ձեռագրում պահվում է բանտում Մխլայիմի գրած մի թուղթը՝ ուղղված Փարիզի դպրատան իր ուսումնակից մի ասորու. «Թուղթ Կոստանդնուպոլսեցի Գէորգ վարդապետին, գրեալ ֆռանկալեդեկն առ ասորի ոմն, սնունդ դպրատանն Փարիզոյ, վասն դարձուցանելոյ վնա ի մոլորութենէ փափապաշտից: Եւ թարգմանեալ ի հայ

²³ Մատենադարան, ձեռ. 9805, էջ 3ա: Այս բնագիրը տես նաև ձեռ. 4036, Երուսաղեմի 2961 և այլ ձեռագրերում: № 9805 ձեռագիրն ընդօրինակված է 1754 թ. Կ. Պոլսում: Այս օրինակը եղել է թարգմանչի ձեռքի տակ, և նա իր երկը վերանայել է, ավելացրել մի շարք դիտողություններ ու մեկնություններ, որոնք ուղղված են կաթոլիկ գաղափարախոսների դեմ: Ինչպես տեսնում ենք, թարգմանության թվականների մեջ կա տարբերություն: Ահա թե ինչ է գրում Գևորգ Մխլայիմը այդ կապակցությամբ. «Մի՛ ոք վարմասցի, որ վթուականն Քրիստոսի չորս տարի աւելի եղաք քան վթուականն լատինացոց, քանզի այժմ ամենայն իմաստունք լատինացոց համարեն. տես ՎԳալմեթ մեկնիչն ի յեկեղեցին ճէզվիթաց» (անդ, էջ 2բ):

²⁴ Մատենադարան, ձեռ. 2620, էջ 34ա—52բ:

²⁵ Անդ, էջ 53ա—70ա:

²⁶ Անդ, էջ 70ա—381բ:

²⁷ Մատենադարան, ձեռ. 1777, էջ 2ա—249բ:

²⁸ Գիրք վիճաբանութեան, էջ 177—288:

²⁹ «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1981, № 3, էջ 63—72:

³⁰ Գիրք վիճաբանութեան, էջ 250:

³¹ Ն. Պողոթյան, նշվ. աշխ., հատոր երրորդ, Երուսաղեմ, 1968, էջ 176:

բարբառ ի պէտս ֆրոնակացեալ Հայոց: Ի Հայրապետութեան իմաստափառ և սրբապան Աղեքսանդր կաթողիկոսին, ինքնագլուխ եւ տիեզերական եպիսկոպոսապետին ամենայն Հայոց: Ի թովին ՌՃԾԲ (1703), ի Թիֆլիզ մայրաքաղաքին Վրաստանայ»³²: Թվականը 1703, բացահայտ սխալ է, քանի որ ա) Գեւորգ Մխլայիմը 1703-ին դեռևս Փարիզում չէր, և բ) հիշվող Աղեքսանդր (Ջուղայեցի) կաթողիկոսը գահակալել է 1706—1714 թթ., ուստի և 1703 թ. չէր կարող հիշվել իբրև կաթողիկոս: ՌՃԾԲ-ն պետք է ուղղել ՌՃԿԲ (1713): Իսկ Թիֆլիսը, ըստ երևույթին, եղել է այս ձեռագրի գրչության վայրը, քանի որ Գևորգ Մխլայիմը այնտեղ երբեք չի եղել: Նույն 1713 թ., բայց արդեն ոչ թե Փարիզում, այլ Կեսարիայում թարգմանել է հույն մետրոպոլիտի իրեն ուղղված թուղթը («Թովատ Մետրոպոլիտին Յունաց առ Գեորգ վարդապետն Հայոց»)՝³³ ինչպես և իր պատասխանը³⁴:

Ասորի իր ուսումնակից ընկերոջն ուղղված թուղթը միակն է, որ Մխլայիմը թարգմանել է ֆրանսերենից: Ինչպես տեսնում ենք խորագրից, թղթի գրության շարժառիթը նույնն է, ինչ հեղինակի ստեղծագործությունների մեծ մասինը՝ «վասն դարձուցանելոյ վնա ի մոլորութենէ փափապաշտից»: Արդյոք այս թուղթն իսկապես գրվել է ֆրանսերեն և ուղղված է եղել «ունն ասորու», թե դա լոկ գրական հնաընթաց է՝ դժվար է որոշել:

Նույնատիպ մի գործ է նաև երկրորդը՝ դարձյալ ուղղված հռոմեադավանության դեմ: Այստեղ արդեն գործ ունենք երկու թղթի հետ՝ նույն մետրոպոլիտինը՝ ուղղված Մխլայիմին և նրա պատասխանը, երկուսն էլ թարգմանված հունարենից:

Գևորգ Մխլայիմը 1752 թ. թարգմանել է «Պատարագամատոյց Յունաց»-ը³⁵, որի խորագրում կարդում ենք. «Աստուածային Պատարագ Սրբոց Հարցն մերոց Յօհաննու Ոսկեբերանի, Վասիլիոսի Մեծին եւ Գրիգորի Աստուածաբանին: Նորապէս թարգմանեալ ի հեղինականէ Գեորգ վարդապետէ: Ի փառս ամենամեծին Աստուծոյ, եւ ի լուսաւորութիւն Սրբոյ եկեղեցոյ: Յամի փրկչին 1752, Յուլիսի տասն աւ եօթն: Ի Կոստանդնուպոլիս»:

³² Անդ, էջ 592:

³³ Մատենադարան, ձեռ. 2080, էջ 112ա—113բ (տես նաև Ն. Պողարյան, նշվ. աշխ., հատ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 204):

³⁴ «Պատասխանի Գեորգ վարդապետին առ մետրապոլիտն Կեսարիայոյ» (անդ, էջ 113բ—116բ):

³⁵ Երուսաղեմ, ձեռ. 1021. Պողարյան, նշվ. աշխ., հատ. Դ, էջ 34—35. Երուսաղեմ, ձեռ. 2957. Անդ, հատ. 9, էջ 150—151:

Երուսաղեմի № 226 ձեռագրում հանդիպում ենք հետևյալ նյութին. «Գրեցեալս ի ներքոյ կոչի Վեմ գալթակոյութեան, շարադրեցեալ յիշիայ Մինեադիս եպիսկոպոսէ Քեսարիքի եւ Քալափեղացն վիճակի, ի խնդրոյ ուրումն իշխանի: Եւ թարգմանեցեալ ի լուսաց ի Հայս յամի Տեառն 1767 եւ Հայոց ՌՄԺՁ իսկ յունվարի ԼԱ»³⁶: Պողարյանը սույն երկի համար տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Ըստ Տ. Սավալանյանի «թարգմանությունն է բառարական և անհարթ եւ թարգմանիչն կարծի լինել Միխայիմօղուն» (Յուցակ, էջ 175)»³⁷:

Ինչպես տեսնում ենք, Իշիայ Մինեադիսի այս գործը թարգմանվել է 1767 թ., իսկ Գեւորգ Մխլայիմը մահացել է 1758-ին: Ուստի հասկանալի է, որ Տիգրան Սավալանյանի ենթադրությունը սխալ է³⁸:

Այժմ անդրադառնանք Գևորգ Մխլայիմի ինքնուրույն երկերին:

Գևորգ Մխլայիմի դավանաբանական առաջին ինքնուրույն երկը, գրված 1707-ին Փարիզում, կոչվում է «Յաղագս միութեան եկեղեցեաց»: Մատենադարանում ունենք այս նյութը պարունակող հինգ ձեռագիր: Դրանցից չորսում իբրև հեղինակ նշված է «ունն դպիր Կոստանդնուպոլսեցի», իսկ մեկը (№ 6674) անանուն է: «Յաղագս միութեան եկեղեցոյ» երկի վերնագրում կարդում ենք. «Հատոր առաջին: Կարճառօտ մեկնութիւն կաթողիկէ եկեղեցոյ, արտահանեալ յԱստուածաշունչ գրոց և ի բանից սուրբ հայրապետաց և ի աստուածաբան վարդապետաց, աշխատութեամբ և ջանիւք Կոստանդնուպոլսեցի դպրի միոյս, ի դիտապետութեան իմաստնափառ և սրբապան Աղեքսանդրի կաթողիկոսի, ինքնագլուխ և տիեզերական եպիսկոպոսապետին Ամենայն Հայոց, ի թովին Փրկչին ՌՉԵ և Հայոց ՌՃԾՁ (1707), ի Փարեկ մայրաքաղաք Ֆռանկաց և Հայոց»³⁹:

Ինչպես տեսնում ենք, այս երկի առաջին հատորը կոչվում է «Մեկնութիւն կաթողիկէ եկեղեցոյն»: Մատենադարանի № № 1463 և 1464 ձեռագրերում հանդիպում ենք նույն գործին՝ որպէս ինքնուրույն նյութ: № 1464-ը գրված է 1707 թ. և հեղինակի ինքնագիրն է: Կոչվում է «Խաղաղարար մեկնութիւն կաթողիկէ եկեղեցոյն, արտահանեալ յԱստուածաշունչ գրոց և ի բանից սուրբ հայրապետաց և աստուածաբան վարդապետաց, շարադրու-

³⁶ Ն. Պողարյան, նշվ. աշխ., հատ. 1, էջ 612:

³⁷ Անդ:

³⁸ Այս երկի թարգմանիչն է Կ. Պոլսեցի Մելքիսեթը, որն ունի հունարենից կատարված նաև այլ թարգմանություններ:

³⁹ Մատենադարան, ձեռ. 6567, էջ 134ա:

թեամբ Կոստանդնուպոլսեցի Գեորգ դպրին ի փառս Աստուծոյ և ի պէտս խաղաղութեան հայկական եկեղեցւոյն Քրիստոսի, ի դիտաւելտութեան իմաստափառ և սրբապան Աղէքսանդր կաթողիկոսին՝ ինքնագլուխ և տիեզերական եպիսկոպոսապետին Ամենայն Հայոց, թոխն Փրկչին ՌՉԷ և Հայոց ՌՃԾԶ (1707), ի Փարէկ մայրաքաղաքն Ֆռանձալու»⁴⁰:

Ինչպես տեսնում ենք, բուն երկը կոչվում է «Յաղագս միութեան եկեղեցւոյ», իսկ «Մեկնութիւն կաթողիկէ եկեղեցւոյն»-ը առանձին գործ է, այլ նախորդի առաջին մասը:

1734 թ. Կ. Պոլսում Գևորգ Մխլայիմը հրատարակել է հետևյալ երկը. «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց: Շարադրեցեալ Գեորգ վարդապետէ Կոստանդնուպոլսեցւոյ Մխլայիմ օղլու կոչեցելոյ: Տպեցեալ ի վեհապետութեան իմաստափառ և սրբապան Բաղիշեցի տեառն Աբրահամու կաթողիկոսին, ինքնագլուխ և տիեզերական հայրապետին ամենայն Հայոց: Եւ ի պատրիարքութեան երկուց աթոռոց սրբոյն Երուսաղէմայ և Կոստանդնուպոլսոյ տեառն Գրիգորի և տեառն Ուփաննու արքեպիսկոպոսաց: Ի թըլին մերոյ ՌՃԶԳ ի փետրվարի ԺԲ»: 1750-ին էլ, դարձյալ Կ. Պոլսում, առանձին հրատարակել է այս գրքի առաջին մասը «Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան»⁴¹ խորագրով:

Գևորգ Մխլայիմի ստեղծագործություններից ամենալայն ընդունելության արժանացել է «Ճառ ամենամաքուր ծննդեան և Կտակ չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ Տեպեան Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչին, տաճկերէն բանիւք» երկը, որն ունեցել է ութ հրատարակություն: Առաջին տպագրության կապակցությամբ Ա. Ղապիկյանը գրում է. «Ճակատ չունի, ասիկա գրված է իբր վերնագիր»⁴²: Կը պակսին ասոր մեջ հետևյալ տպագրությանց չարչարանաց ճառն ու մյուսները. բայց կա Լուսավորչի տե-

սիլը. ութածալ, 31 էջ: Խեղճ տպագրություն, անթվական, անքաղաք. կերևա, ի Կ. Պոլիս տպված՝ հեղինակին ողջության ատեն և գուցե առաջին տպագրությունն ըլլա»:

Երկրորդ և երրորդ տպագրությունները Ղապիկյանը չի տեսել և նշված են հարցականով: Այս երեք տպագրությունների մասին, բացի Ղապիկյանի հիշյալ տեղեկությունից, ավելին մեզ հայտնի չէ:

Գևորգ Մխլայիմն իր «Պատմութիւն երկրորդ ժողովոյն Եփեսոսի» երկում գրում է. «Չմանցեալ վկայութիւնս ի վերայ բանիս այսորիկ տեսէք ի մէջ երկրորդ անգամ տպագրած տաճկերէն Մանդաճառին մերոյ և ի մէջ Դիոնեսիոս»⁴³ անուանեալ ձեռագիր գրքին մերոյ»⁴⁴:

Հիշյալ բնագիրը ընդօրինակվել է 1754-ին Կ. Պոլսում, ուստի հասկանալի է, որ առաջին երկու տպագրությունները կատարվել են մինչ այդ թվականը, հեղինակի կենդանության օրոք:

Երրորդ հրատարակության մասին ոչինչ չգիտենք: Չորրորդը կատարվել է 1787-ին, հինգերորդը՝ 1793-ին:

Մեր մատենագիտությանը (Ա. Ղապիկյան, Հ. Դավթյան, Բ. Կորկոտյան) անծանոթ է նաև վեցերորդ տպագրությունը, թեև այդ հրատարակությունից մեկ օրինակ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Իբրև հայ գրքի մատենագիտական աշխատություններում չհիշատակված գործ, ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել Մխլայիմի սույն աշխատության վեցերորդ հրատարակության տիտղոսաթերթը նույնությամբ. «Ճառ ամենամաքուր ծննդեան և Կտակ չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ

⁴⁰ Անդ, ձեռ. 1464, էջ 3ա:
⁴¹ Բնագիրը տես Մատենադարան, ձեռ. 8378: Հեղինակը այս հրատարակության կապակցությամբ գրում է. «Ի մէջ այս երկրորդ տպագրութեանս ի բաց թողաք զվերջին տառն նշանս յերձնածողաց, վասնպի կամեցաք փոքրացուցանել զգիրքս, զի դիրին լիցի ամենեցուն և մանաւանդ նորավարժ տղայոց» («Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան», էջ 268):
⁴² Ա. Ղապիկյանի բերած վերնագիրն է «Ճառ վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ասացեալ Կոստանդնուպոլսեցի Գեորգ վարդապետին ի Լուսավորչի եկեղեցին Ղալաթիայու» (Ա. Ղապիկյան, նշվ. աշխ., սյուն. 433):
⁴³ «Դիոնեսիոս» կոչված գիրք Գևորգ Մխլայիմը չունի: Ըստ երևութիւն նկատի ունի իր «Կաթողիկէութիւն լուսաւորչադաւանաց» երկը (տես Մատենադարան, ձեռ. 6458): Մխլայն վերջինիս ամբողջական խորագրում ենք հանդիպում Դիոնեսիոս Արիսպագացու անվանը. «Կաթողիկէութիւն լուսաւորչադաւանաց համաձայն հին ընդհանրական եկեղեցւոյ, ցուցեալ ԽԳ (43) վկայութեամբք սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ անուանեալ գրքին, Կոստանդնուպոլսեցի Գեորգ վարդապետէն, ի նախատինս ի յամօթ յաւիտենական էջ և կոյր ախթարմայից մերոց, թուին Հայոց ՌՃՂԹ (1750)» (Մատենադարան, ձեռ. 6458, էջ 2ա): Նա այս երկը գրել է 1749—1750 թթ., քանի որ 1749-ին նոր է ծանոթացել Արիսպագացու ստեղծագործությանը, որից հետո էլ գրել է իր գիրքը: «Թուին Հայոց ՌՃՂԸ (1749),—գրում է նա,—ես, վերջինս վարդապետաց հայոց, ընթերցալ հեղինակեցերն սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ անուանեալ գիրքն ի թաղն Պէկոլլի» (Անդ, էջ 2բ):
⁴⁴ Մատենադարան, ձեռ. 9805, էջ 159բ:

Տեպեան սրբոյ իօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, տաճկերէն բանիւ: Ասացեալ ի Մըխլէիմ օղլու կոչեցեալ Կոստանդնուպօլսեցի Գէորգ վարդապետէ, ի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին, որ ի Ղալաթիա: Եւ վկնի հինգերորդ անգամ տպագրութեան, վեցերորդս՝ համառօտ սրբագրութեամբ վերստին տպագրեցաւ ի հայրապետութեան տեառն Ղուկասու սրբապան կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարքութեան տեառն Պետրոսի պերճաշնորի վարդապետի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ:

Իսկ և վեհափառ հրամանաւ մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ սրբապան արհիեպիսկոպոսի տեառն Ջաքարիայ ապագաւոր, կարդացեալ, աստուածաբան պատրիարքի:

Յամի Տեառն 1796 և Հայոց ՌՄԽԵ ապրիլի ԺԵ, առ տպարանաւ Յօհաննիսեան Պօղոսի» (էջ 1):

Մխլայիմի այս գրքի հաջորդ յօթերորդ տպագրութիւնը նկարագրված է Ա. Ղապիկյանի մոտ, բայց ոչ ամբողջությամբ, գուցե այն պատճառով, որ ձեռքի տակ չի ունեցել:

Ղապիկյանից վերցնելով՝ իրենց մատենագիտական երկերում այն հիշում են նաև Հ. Դավթյանը, Բ. Կորկոտյանը և ուրիշներ: Դավթյանի մոտ հիշատակվում է աստղանիշով, ինչ որ նշանակում է, թե այդ գրքից Անդրեկովկասի ոչ մի գրադարանում չկա⁴⁵: Ուստի հարկ ենք համարում մեր օրինակի հիման վրա (ստացված Գ. Ստեփանյանի խնդրանքով Բեյրութից, գրավաճառ Ա. Տեր-Գևորգյանից, հայատառ թուրքերեն այլ գրքերի հետ) տալ նրա մանրամասն նկարագրությունը, մանավանդ որ Մխլայիմի երկերից ամենից ավելի այդ մեկն է մեզ պաղծեցնելու:

Գրքի տիտղոսաթերթի ամբողջական բովանդակությունն է. «Ճառ ամենամաքուր ծննդեան և Կտակ չարչարանաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ըստ տեսանան սըրբոյ իօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, տաճկերէն բանիւ: Ասացեալ ի Մխլէիմ օղլու կոչեցեալ Կոստանդնուպօլսեցի Գէորգ վարդապետէ, ի սուրբ Լուսաւորիչ եկեղեցին որ ի Ղալաթիա: Եւ վկնի վեցերորդ անգամ տպագրութեան եօթներորդս՝ համառօտ սրբագրութեամբ վերստին տպագրեցաւ ի հայրապետութեան Տեառն Դաւթի կաթողիկոսի ամենայն հայոց: Եւ ի պատրիարքութեան սրբոյ պօռնոյն Երուսաղէմի Տեառն Թէոդորոսի արհիե-

պիսկոպոսին: Վեհափառ հրամանաւ մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի սրբապան պատրիարքի Յօհաննու Աստուածաբան կոչեցեալ վսեմաբան ռաբբու-նապետին. յամի Տեառն 1804 և ի թուին հայոց՝ ՌՄԾԳ, ի տպարանի Յօհաննիսեան Պօղոսի»:

Մխլայիմի գրքում Ծննդյան «Ճառին» հաջորդում են «Կտակ չարչարանաց և խաչելութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» և «Տեսիլք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» հատվածները:

Թեև աշխատության տիտղոսաթերթի վրա գրված է «տաճկերէն բանիւ», սակայն հեղինակը նկատի է ունեցել նաև հայախոս ընթերցողին, ամբողջ հատվածներ շարադրել է հայերեն, էլ չենք խոսում այն մասին, որ թուրքերենում էլ զգալի թիվ են կապում հայերեն առօրյա բառերը, նախադասությունները, գրաբար մեջբերումները:

Թե ինչու է գիրքը հիմնականում շարադրված թուրքերեն, բացատրության կարիք չունի: Հայատառ թուրքերեն ստեղծվել է վիթխարի գրականություն այն հայերի համար, որոնք թուրքական տևական հալածանքների հետևանքով կորցրել էին իրենց մայրենի լեզուն:

Մխլայիմի գրքի յօթերորդ հրատարակությունը գրեթե ամբողջությամբ համապատասխանում է վեցերորդին: Միայն «Ողբ Աագ ուրբաթու» հայերեն չափածո երկն է (էջ 60—62), որ բացակայում է նախորդում⁴⁶:

Վերջին 8-րդ տպագրությունը կատարվել է 1818-ին:

Գևորգ Մխլայիմի այս գիրքն ուշագրավ է նաև որպես արևմտահայ աշխարհաբարի առաջին արտահայտություններից մեկը:

Հր. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» Բ հատորում մեջ է բերել արևմտահայ աշխարհաբարի մի քանի նմուշ՝ մեծ մասամբ Մխիթարյանների հրատարակություններից, նաև պոլսահայ մատենագիրներ Հակոբ Նայանից, Պաղտասար Դպիրից: Դրանք գրաբարապետ աշխարհաբարով գրված հատվածներ են, սակայն պարունակում են մի շարք թուլքերեն բառեր, արտահայտություններ, որոնք սովորական են եղել պոլսահայ խոսվածքում: Գևորգ Մխլայիմը ևս գրել է հղկված, ժողովրդի համար միանգամայն հասկանալի աշխարհաբարով: Մեր ասածը հիմնավորելու համար բերենք մի հատված նրա վերոհիշյալ գրքից. «Ահ, տէր իմ Քրիս-

⁴⁵ Ա. Ղապիկյան, Հայկական նոր մատենագիտություն, սյուն. 434: Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 70, Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, Բ. Կորկոտյան, նշվ. աղբյուր:

⁴⁶ Այս յօթերորդ հրատարակության մեջ էլ չկա «Ցուցակ Հայերեն Ըռադամին», որը կա և Ղապիկյանի նկարագրած առաջին և Մատենադարանով գտնվող վեցերորդ տպագրություններում:

տու, սեր սրտի իմոյ, աս դուն ի՞նչ դատաւարտութեան արժանի բան գործեր էիր, որ ասանկ չարչարանքներով դատաւարտուեցար: Ի՞նչ մեղք ունէիր, որ ասանկ մեղաւարտ եղար. ի՞նչ չարութիւն գտնուեցաւ վերադ, որ ասանկ չարաչար մեռար: Երկինք և երկիր վըկայ են, որ դուն իսկի մէկ դատաւարտութեան արժանի բան մի չունէիր: ...Ամա մեր դատաւարտութիւնը, մեր մեղքը, մեր չարութիւնը քու վըրադ առեր էիր, որ մեկ անով ի յաիտենական դժոխքէն ապատէիր»⁴⁷:

Ինչպես տեսնում ենք, այս ամբողջ հատվածը աշխարհաբար է, անգամ առանց թուրքերեն բառերի օգտագործման:

Գևորգ Մխլայիմի դավանաբանական վերջին երկն է՝ «Ջրապարտութիւն ուրումն հաբեղայի, ընդդէմ Արմենաց»⁴⁸:

Գևորգ Մխլայիմի երկերում պատահում են որոշ չափածո հատվածներ, որոնք վկայում են հեղինակի բանաստեղծական շնորհի մասին: Բերենք մեկ-երկու օրինակ.

...Ո՛ր ես, աչացըս լոյս իմ որդեակ,
ուր ես իմ հոգոյս հոգի վառակ:
Ա՛յ իմ սիրուն անուշիկ գառնուկ,
ես առանց քեզ մնացի որբուկ:
Յառաջ թող ես մեռանիմ հոգի,
որ քեզ նման չեմ գտներ որդի:
Ո՛ր ես իմ երկու աչացս լոյս,
որ քո մայրիկդ միևնակ կու թողուս:
Մէկ մի տեսնեմ զքեզ կենդանի,
այնուհետև թող մայրդ մեռանի»⁴⁹:

«Յաղագս քահանայագործութեանց» երկի սկզբում էլ կարդում ենք.

Բղխեաց սիրտ իմ աղբիւրաբար,
Բարբառեցաւ լեզուս ճարտար,
Բացաւ բերան իմ ճոխաբար՝
ձառել վխորհուրդս սրբարար:
Դո՛ւ, Տէ՛ր, հոգի կենդանաբար
Տուր վօրանալ լեզուիս տըկար,
Չսուրբ խորհուրդս բացայայտել,
Չհակառակորդս յանդիմանել,
Չճշմարտութիւնդ փառաւորել,
Չնեռան որդիս խայտառակել,
Չուղղահաւատս մխիթարել,
Եւ ի յերկինքս մուծանել»⁵⁰:

Գևորգ Մխլայիմի մատենագրական ժառանգության մեջ առանձնանում են նաև երկու պատմական ստեղծագործություններ:

Դրանցից առաջինի («Յաղագս արտօնութեանց, զոր էօմէր ամիրայն շնորհեաց սուրբ քաղաքին Երուսաղէմի»)՝⁵¹ նյութն այն է, թե ինչպես էումեր (կամ Օմար) Խաթթապը 636 թ. գրավեց Երուսաղէմը և թե ինչ գործեր կատարեց այնտեղ: Գևորգ Մխլայիմի հիմնական աղբյուրն է պատմիչ Չեքիելին: Իսկ այն հանգամանքը, որ Գևորգ Մխլայիմն անդրադարձել է 7-րդ դարի դեպքերին, բոլորովին էլ պատահական չէ: Հարցն այն է, որ էումեր Խաթթապը Երուսաղէմի քրիստոնյա բնակիչների հետ վարվել է շատ մեղմ, նրանց տվել մի շարք արտոնություններ՝ հաստատված ընդարձակ մի հրովարտակով, որի բնագիրը հաղորդում է Չեքիելին: Ուրեմն, ըստ Գևորգ Մխլայիմի, հնարավոր է նվաճող լինել և չլինել բարբարոս, իսկ հպատակներին որքան արտոնություններ տրվեն (ինչպես վարվել է Խաթթապը), այնքան կշահի պետությունը, քանի որ քրիստոնյա բոլոր ժողովուրդներն էլ՝ թե՛ հայերը, թե՛ հույներն ու հրեաները, աշխատասեր են ու խելոք, ուստի կարող են միայն օգուտ բերել տերությանը: Միայն թե պետք է տրվեն հնարավորություններ և, որ ամենակարևորն է, նրանց չպետք է դիտել որպես ստորին ազգ:

Վիեննայի Մխիթարյանների № 779 ձեռագրի նկարագրության մեջ հանդիպում ենք հետևյալ նյութին. «Պատմութիւն սկզբնաւորութեան եւ շինութեան Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն որ ի Խասգիղ» (Էջ 88ա—90ա): Այս պատմության վերջում կարդում ենք. «Եւ շինութիւն եկեղեցւոյն եղել ի պատրիարքութեան Տեառն Յօհաննոս Բաղիշեցոյ Կօյտ կոչեցելոյ եւ ի թագաւորութեան սուլթան Ահմետին երրորդի, ի թուականին Հայոց ՌՃՀԶ: Պալատական Գէորգ դպրի է պատմութիւնը»⁵²:

Ինչպես տեսնում ենք, հեղինակն է «պալատական Գէորգ դպիր»-ը, որը կարող է լինել միայն Գևորգ Մխլայիմը: Ի՞նչ հիմքեր ունենք այս պնդման համար:

Եթե ընդունենք, որ պալատական բառը պետք է հասկանալ Պոլսի Պալատ թաղամասի, այսինքն՝ Պալատցի, կարող էինք այս երկի հեղինակ համարել Գևորգ դպիր Պալատեցուն (Տեր-Հովհաննիսյան): Սակայն նա ծնվել է 1737-ին, իսկ սույն երկը, ինչպես տեսանք, գրվել է 1727-ին: Երկրորդ. նյութը վերաբերում է Խասգիղի Ս. Ստեփաննոս եկեղեցու շինությանը, ուրեմն երկը գրվել է Կ. Պոլսում: Իսկ 1727-ին Թուրքիայի մայրա-

⁴⁷ «Մենդաճառ», Կ. Պոլիս, 1796, էջ 35—36:

⁴⁸ Մատենադարան, ձեռ. 883, էջ 87ա—89ա:

⁴⁹ «Մենդաճառ», էջ 37:

⁵⁰ Մատենադարան, ձեռ. 134, էջ 2բ:

⁵¹ Անդ, ձեռ. 9622, էջ 148—154:

⁵² Ոսկյան Հ., Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա, հատ. Բ, Վիեննա, 1963, էջ 334բ—335ա:

քաղաքում հանդիպում ենք միայն մեկ Գևորգ դպրի՝ Մխլայիմին: Երրորդ, Գևորգ Մխլայիմը մի այլ առիթով ևս իրեն կոչում է նույն կերպ՝ «Գևորգ դպիր պալատական»: Արդեն հիշատակված Էոմեր Խաթթապի՝ Երուսաղեմի գրավման պատմության խորագրում գրում է՝ «Գևորգայ պալատական դպրի Կոստանդնուպոլսեցույ...»⁵³: Իսկ նույն գրքի վերջում՝ «...այսքան գիտացի և այսչափ գրեցի, ես չնչին Գևորգ դպիր պալատական»⁵⁴:

Այս երկը, նվիրված լինելով Կ. Պոլսի Ս. Ստեփաննոս եկեղեցու պատմությանը, ունի ճանաչողական արժեք իբրև ժամանակակցի


խոսք, արժանի նաև հրատարակության: Սակայն բնագիրը գտնվելով Վիեննայում, մեկ համար եղել է անմատչելի:


Այսպիսով, բացի հիշյալ երկու պատմական երկերից, Գևորգ Մխլայիմի ողջ մատենագրական ժառանգությունն ուղղված է կաթոլիկության դեմ: Նա մի հայրենասեր հոգևորական է, որը պայքարել է Հռոմի ապրեցության դեմ՝ հանուն ազգապահպանման: Նրա գործունեության ամփոփումն է կարծես իր ժողովրդին ուղղված հետևյալ պատգամը. «...Մի երբեք մոռանար զհանճարեղ խրատն Սողոմոնի, թէ յօտար աղբերէ մի՛ ըմպիցես, ա՛րբ վշուր ի քոց ամանոց»⁵⁵:

⁵³ Մատենադարան, ձեռ. 9622, էջ 148:

⁵⁴ Անդ, էջ 154:

⁵⁵ Գիրք վիճարանութեան, էջ 78:





ՀՈՌՈՄՈՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր և ճանաչված մշակութային կենտրոններից էր Հոռոմոսի վանքը: Հիմնադրվել է Աբաս Բագրատունի թագավորի (929—953 թթ.) կառավարման տարիներին, Անիից հյուսիս, Ախուրյան գետի աջ ափին, Բյուզանդիայից եկած հայ վանականների կողմից, որոնք, խուսափելով այնտեղ սկսված հալածանքներից, վերադառնում էին հայրենիք՝ հիմնելով իրենց վանքերը. «Իսկ ի գաւառին Հիրակայ՝ Հոռոմոսին կոչեցեալ վանք ջինեցաւ ի ձեռն Յովհաննիսի, որ էր վարդարեալ յողորմածութեան պարոս» — գրում է Ստեփանոս Տարոնեցի Ասողկը¹:

Հոռոմոսի վանական համալիրը բաղկացած է տարբեր ժամանակներում կառուցված մի շարք մատուռներից և երեք խոշոր եկեղեցական շենքերից՝ Ս. Գևորգ², Ս. Հովհաննես և Ս. Մինաս: Առաջինը հիմնադրվել է Գագիկ Ա Բագրատունու (990—1021 թթ.) թագավորության տարիներին, երկրորդը՝ 1038 թ. Հովհաննես Սմբատ թագավորի կողմից, իսկ

Ս. Մինասը կառույցներից ամենահինն է և հավանաբար հենց սա է Հովհաննեսի հիմնադրած բուն Հոռոմոսի վանքը³: Ուսումնասիրելով Անիի արվարձանները՝ Թորոս Թորամանյանը եկել է այն եզրակացության, որ պարիսպներից դուրս՝ հյուսիս-արևմուտքում, քաղաքը հասնում էր մինչև Հոռոմոսի վանքը⁴: XI—XIII դդ. բարգավաճած, պորացած և ընդարձակված մայրաքաղաքը ոչ միայն տարածությամբ, այլև քաղաքային իր եռուն կյանքով և մշակութային վերելքով իր ոլորտն է առնում Հոռոմոսի վանքը, իսկ վերջինս Անիի հոգևոր և մշակութային կյանքում նշանակալից դեր էր խաղում: Բավական է նշել, որ Անիի Բագրատունի թագավորների աճյունները հողին էին հանձնվում Հոռոմոսում:

Պատմաբան Լեոն Անի կատարած իր ուղեվորությունից հետո գրում է. «Անի գնացողներին ես խորհուրդ կտամ նախ այցելել Հոռոմոսը: Սա նախադուռն է: Անին այստեղից է սկսվում»⁵: Միջնադարում Հոռոմոսն ուներ

¹ Ստեփանոս Տարոնեցի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետրբուրգ, 1885, էջ 174:

² Այս եկեղեցին ունեցել է որմնակարներ. «Եկեղեցին ի ներքուստ ներկված և նկարապարզված է: Խորանի կիսագմբեթի մեջ նկարված է մեծադիր Քրիստոսի պատկերը... նկարները նույն ճաշակը և ափսոսելու ունին գրեթե ինչպես Անիի եկեղեցիներու նկարները» — Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, Երևան, 1948, էջ 161:

³ Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. Ա, Երևան, 1942, էջ 299—305:

⁴ Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 327—328:

⁵ Լեոն, Անի, Երևան, 1946, էջ 99: Հոռոմոսի վանքից քիչ հեռու, Անի տանող ճանապարհի վրա կառուցված է մի ինքնատիպ զույգ աշտարակավոր կամար, որն ամենայն հավանականությամբ Անիի արվարձանի ելքին կառուցված, քաղաքի մուտքը խորհրդանշող կամար է: Կ. Մաթևոսյան, Հոռոմոս — Անի ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես» 1982, № 1, էջ 143:

հմուտ և անվանի ուսուցիչներով և մեծաթիվ աշակերտներով հռչակված դպրոց⁶, ինչպես նաև հարմարավետ ուսումնական շենքեր⁷:

վանական համալիրի եկեղեցիների պատերին պահպանվել են մեծ թվով վիմագիր արձանագրություններ: Դրանցից մեկում (գրված



Անվանաթերթ «Բագնայրի Ավետարանից», 1232 թ.
Գրիչ՝ Իգնատիոս Հռոմոսուցի

Վանքն ունեցել է գրադարան, որն անընդհատ ճոխացել է նոր ընդօրինակությունների և նվիրատվությունների շնորհիվ: Հռոմոսի

1201 թ.) ունի խաչեղբայր և նրա որդի Ավետիսը նշում են իրենց կատարած նվիրատվության մասին⁸: Մեարոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 7635 ձեռագիր Ավետարանի 1249 թ. գրված հիշատակարանում դարձ-

⁶ Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 272:

⁷ Օ. Халпахчян. Гражданское зодчество Армении, Москва, 1971, с. 121.

⁸ Ն. Սարգսյան, Տեղագրությունը ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 151:

յալ հանդիպում ենք նույն նվիրատուների անուններին: Խաչեղբայրը հավանաբար արդեն մահացել էր, քանի որ որդին՝ Ավետիսը, իրեն ծեր է համարում: Վերջինս հիշատակարանում հաղորդում է, որ Հռոմոսի վանքի Ս. Հովհաննես եկեղեցուն է նվիրում այդ Ավետարանը. «Ավետարանս Հռոմոսի վանքից Սուրբ Յովանիսի է աւանդեալ ի մեղապարտ ծերոյս յԱւետեացս, որդոյ Խաչեղբայրն, աղաչեմ յիշի յաղաթս: ի ՈՂԸ թվին...»⁹: Հռոմոսի վիմագիր արձանագրություններում վկայություններ կան ևս երկու ձեռագրերի նվիրատվության մասին: 1246 թ. Աջոտ Դսեղեցին, այլ նվիրատվությունների հետ միասին, վանքին է տվել մի Ավետարան. «...ետու պամենագով Աւետարան»¹⁰: Մեկ ուրիշ արձանագրության մեջ Հովհաննես Յիսկը հիշատակում է վանքին հանձնված մի Հայսմավուրքի մասին, որը հենց ինքն էր գրել տվել. «...ետու պիմ Մարտիրոսը որ իմ հալալ արդեամբք գրեալ էր...»¹¹: Հռոմոսի վանքին մեկ այլ Ավետարան է նվիրվել 1347 թ.: Հիշատակություն կա այդ մասին ձեռագրի կապի վրա: Նվիրատուն է ունի Ջաջում և իր Ամիր Սմբատ որդին: Գարեգին Հովսեփյանը ենթադրում է, որ կապը հավանաբար Անի քաղաքում է պատրաստված¹²: Իսկ բուն ձեռագիրը գրված է եղել 1324 թ. «ի աշխարհս ֆռանգաց, ի քաղաքս ձէն»¹³:

Սակայն Հռոմոսի գրադարանը սոսկ նվիրատվություններով չի հարստացել: Վանքում աշխատել են մի շարք հմուտ գրիչներ, որոնցից Իգնատիոսը հայ միջնադարյան լավագույն արվեստագետներից մեկն է համարվում: Գրչությամբ պատվել են նաև Հռոմոսի դպրոցի աշակերտները: Վանքի գրչատունը հայտնի է եղել ոչ միայն վարպետ գրիչներով ու մանրանկարիչներով, այլև ջնորհալի կապարարներով: Այսպես, Հաղբատում գրված և Անիի Բեխենց վանքում նկարապարզված «Հաղբատի Ավետարանը» (Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6288)

⁹ Մատենադարան, ձեռ. № 7635, էջ 267ա: Հմմտ. Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիպոլս, 1951, էջ 1007:

¹⁰ Ն. Սարգսյան, նույն տեղում, էջ 154:

¹¹ Նույն տեղում, էջ 156:

¹² Գ. Հովսեփյան, Մի էջ հայ արուեստի և մշակույթի պատմությանից, Հալեպ, 1930, էջ 36—37:

¹³ Գ. Հովսեփյան, նույն տեղում, էջ 37: Ուշագրավ է, որ այդ շրջանում Իտալիայի մի շարք այլ քաղաքներում ևս բազմաթիվ հայերեն ձեռագրեր են գրվել: Տես Լ. Խաչիկյան, Ժ-դ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 189—190, 204, 238, 273, 408, 487:

կապվել է Հռոմոսում, Աբրահամ կապմովի կողմից:

XII դարի վերջին Հռոմոսի գրչատան գործունեության մասին պատկերացում կարող ենք ունենալ Հովհաննես գրչի և մանրանկարչի ստեղծագործական ժառանգությանը ծանոթանալով: «Յովանես մեր երևելի գրիչներից է» — նկատում է հայ գրչության արվեստի բազմահմուտ գիտակ Գարեգին Հովսեփյանը¹⁴:

Հովհաննեսի ընդօրինակած, առայժմ մեկ հայտնի ամենավաղ ձեռագիրը գրված է 1181 թ. և պահվում է Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանում 961/87 համարի տակ: Ձեռագիրն Ավետարան է, գրված մագաղաթի վրա, երկաթագիր գրությամբ, միասյուն, ունի 344 թերթ (15×19) տող՝ 17¹⁵: Հովհաննեսը որ գործն սկսել և ավարտել է հարապատ եղբայրների՝ Վարդանի և Գրիգորի «սատարությամբ» և խրախուսանքով: Գրիգորը միաբանության անդամ չէր, իսկ Վարդան երեցը Հռոմոսի միաբաններից էր, որին Հովհաննեսը անվանում է իր ուսուցիչը: Ձեռագրի գլխավոր հիշատակարանի սկզբի մասը չի պահպանվել: Նրա անվաս մնացած հատվածից (էջ 343ա) իմանում ենք, որ «գրեցաւ աստուածային եւ կենարար Աւետարանս ի թուիս Հայոց ի ՈԼ (1181) ի տիեզերահռչակ վանս Հռոմոսի ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննիսի, ի հայրապետութեան տեառն Բարսղի եւ յառաջնորդութեան ուխտիս Նաչատրոյ եւ ի հոգեւոր տեսչութեան Կարապետի...»: Հովհաննեսը նշում է, որ ձեռագիրը գրել է «...հրամանաւ Վարդանայ երեց եղբար իմոյ և ուսուցչի, և սատարութեամբ կոտսեր եղբար աշխարհաւարի՝ Գրիգորոյ...»¹⁶:

Հովհաննես գրիչը նաև մանրանկարիչ էր: Նրա ստեղծած ձեռագիրը, չնայած տերուական պատկերների բացակայությանը, հարուստ գեղարվեստական հարդարանք ունի: Ձեռագրում պահպանվել են խորանները, որոնք գեղեցիկ, գունավառ և բազմամոտիվ պարդարանքներ ունեն¹⁷: Ավետարանի սկզբում պակասում են Եվսեբիոսի նամակը և Մաթնոս ավետարանիչի պատկերը: Մյուս երեք ավետարանիչների պատկերները տեղադրված են համապատասխան Ավետարանների սկզբում: Ավետարանիչները նկարված են

¹⁴ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք..., էջ 486:

¹⁵ Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. I, 1914, էջ 391:

¹⁶ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք..., էջ 483—484:

¹⁷ «Այլական մանրանկարչություն», Վենետիկ, 1966, էջ 50—58:

կանգնած դիրքով՝ ձախ ձեռքերին գրքեր: Թե՛ իրենց դիրքով, թե՛ ձեռքերի ու ոտքերի շարժումով, հագուստների ձևավորումով, իրար նման են Ղուկասի և Հովհաննեսի պատկերները: Մարկոս ավետարանիչի պատկերը առանձնանում է մյուսներից¹⁸: Ավետարանի էջերում նաև մեծաթիվ նրբաոճ լուսանցապարզեր կան:

Այս ձեռագրի հետագա ճակատագրի մասին է պատմում 1236 թ. գրված նրա հիշատակարանը, ըստ որի, այդ թվականին ոմն Նացուալ գնել է Ավետարանը և նվիրել Անիի Կաթողիկեին. «Ի թուականիս Հայոց ՈԶԵ (1236) ես նուապս ծառայ Աստուծոյ Նացուալս տուի պուրբ Աւետարանս ի Սուրբ Կաթողիկէն ի յիշատակ ինձ եւ ննջեցելոց ի մոց...»¹⁹:

Հովհաննես գրիչը 1181—1182 թթ. Հռոմոսում ընդօրինակել է նաև մեկ այլ ձեռագիր՝ «Մաշտոց»: Այն այժմ պահվում է Երուսաղեմում, Սրբոց Յակոբեանց վանքի ձեռագրատանը (№ 3299): Ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ես Յովանէս Հռոմոսի վանեցի՝ եղբայր Վարդանայ, մեծ տառապանաւք աշխատեցայ ի գիտս բանից գրոցս եւ գրեցի ըստ իմում կարի, աղաչեմ յիշեսցիք զմեզ յաղութս» (էջ 123ա):

Գրիչ Հովհաննեսի ստեղծած մեզ հայտնի երրորդ ձեռագիրը գրված է 1187 թ.: Բովանդակությունն է՝ «Ճառք յաղագս վեցարեւից սրբոյն Բարսղի Կեսարոս»: Այն պահվել է Կեսարիայի Ս. Սարգիս հայկական եկեղեցում, այժմ գտնվում է Երուսաղեմում (№ 1801)²⁰: Ձեռագիրը գրված է թղթի վրա, ունի 386 թերթ, գրչությունը՝ բոլորգիր: Գլխավոր հիշատակարանում գրիչը հայտնում է. «...յոկ անտամբ միայն քահանայ Յովանէս գծագրեցի զսա տկար մտամբ և անպար անձամբ ի տիեզերահոռակ ուխտիս Հռոմոսի կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Յովանիսի... Արդ աղերսահայց մաղթանաւք խնդրեմ յամենեցուն, որ աւգտիք ի սմանէ, յիշեսցիք յաղաթս զաճիւնացեալ մեղաւք զՅովանէս և զեղբայրն իմ զՎարդան միայնաւոր հանդերձ ծնաւաւք մեռումք և եղբարք... Թուական Հայոց ՈԼԶ (1187)»²¹: Ձեռագրում կան մանր

հիշատակագրություններ, իսկ գլխավոր հիշատակարանի վերջում հանդիպում ենք նաև գրչի մյուս եղբոր՝ Գրիգորի անվանը. «Ընդ նմին եւ զԳրիգոր եղբայրս յիշեսցիք ի Տէր»:

Այսպիսով, վերոհիշյալ երեք ձեռագրերը մեզ ծանոթություն են տալիս XII դարի վերջին Հռոմոսի վանքի գրչատանը աշխատող Հովհաննեսի, ինչպես և նրա Վարդան և Գրիգոր եղբայրների մասին, որոնք իրենց նվիրել էին հայ մշակույթին ծառայելու սրբական գործին:

XII դարի վերջերին Հռոմոսի վանքում է գրված Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 3613 ձեռագիրը, որը պարունակում է Սամվել Անեցու ժամանակագրության ամենահին օրինակներից մեկը: Ձեռագիրը գրված է թղթի վրա, ունի 79 թերթ (16,5×11,5), գրչությունը՝ միասյուն, գրչությունը՝ բոլորգիր և շղագիր, տողերի քանակն է 26-և 18: Ձեռագրի բուն գրիչը Մխիթար Անեցի արեղան է, որն իրեն անվանում է Հռոմոսի վանքի աշակերտ: Ըստ երևույթին, ձեռագրի գրվելուց քիչ հետո, մեկ ուրիշն այնտեղ որոշ հավելումներ է արել²²: Գրիչ Մխիթարը թողել է երկու հիշատակարան. «Ձեռնեալս յարդիւնական գործոց՝ զչուառ գրիչս զՄխիթարիչ Անեցի սուտանուն արեղայ և աշակերտ բանի ի վանացն Հռոմոսի, սնեալ առ ոտն Սուրբ Յովանիսի: Յիշեսցիք ի Քրիստոս աղաչեմ», «Ձմեղաւոր ստացաւոս և զաշխատաւորս զՄխիթար և ծնաւոսն մեր և եղբայրսն յիշել աղաչեմ»²³:

XIII դարի առաջին կեսին Հռոմոսում է աշխատել գրիչ և մանրանկարիչ Իզնատիոսը, որի ձեռագրական ժառանգությունը Անիի շրջանում ստեղծագործած գրիչների գործերի մեջ ամենահարուստն է: Իզնատիոսի գրչական գործունեության և մանրանկարչական արվեստի վերաբերյալ բավականաչափ գրականություն կա²⁴, ուստի, համառոտելով մեր

²² Երկրորդ գրիչը, որի անունը ձեռագրում չի նշված, գրչության համար օգտագործել է աղյուսակների ազատ մասերը: Նա գրել է ավելի բաց գույնի թանաքով և տարբեր գրչությամբ, որն իսկույն առանձնանում է Մխիթարի գրից:

²³ Մատենադարան, ձեռ. № 3613, էջ 26բ, 35բ:

²⁴ Գ. Հովսեփյան, Նիւթեր և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակույթի պատմության, պր. Ա. Իզնատիոս մանրանկարիչ և Եղթոնկանց տոհմը, Երուսաղեմ, 1935, պր. Բ, «Նարձեալ Իզնատիոս Հռոմոսի մանրանկարիչի մասին», Նյու Յորք, 1943, Հ. Քլաւտյան, Իզնատիոս մանրանկարիչ, «Անահիտ», 1939, № 3, Ա. Երեմյան, Իզնատիոս մանրանկարիչ արվեստի հիմնական գծերը, «Էջմիածին» 1956, № 3, Կ. Մարտոսյան, Գրիչ և մանրանկարիչ Իզնատիոս Հռ-

¹⁸ Նույն տեղում, էջ 49—50: Հեարավոր է, որ Մարկոս ավետարանիչի պատկերը ավելի ուշ (1236 թ.) նկարված լինի:

¹⁹ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք..., էջ 907:

²⁰ Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1972, էջ 161—163: Հովհաննեսի գրած ձեռագիրը Սամվել Անեցու ժամանակագրությունը պարունակող, 1198 թ. գրված մի ձեռագրի հետ Նույն կապի մեջ է ամփոփված:

²¹ Նույն տեղում:

խոսքը, նշենք, որ այս վաստակաշատ գրիչը թեև աշխատել է նաև գրչության այլ օջախներում, սակայն հիմնականում ապրել և ստեղծագործել է Հռոմոսի վանքում: Այստեղ է գրել և ծաղկել նշանավոր «Բագնայրի Ավետարանը» 1232 թ., որի հիշատակարանում սիրով է հիշում վանքի միաբաններին՝ Աստուծո ողորմությունը խնդրելով նրանց համար. «Եւ արդ գրեցաւ սա ձեռամբ Իգնատիոսի ապաշնորի և մեղապարտ գրչի՝ ի ՌՁԱ (1232) թուականին, ի մեծահոգակ ուխտիս՝ ի Հռոմոսի կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետիս՝ ի մէջ սուրբ եղբարց, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած մեր, որ է արինեալ յաիտեանս, ամէն»²⁵:

Իգնատիոսը հավանաբար Հռոմոսում է ստեղծել նաև 1236 թվականի բարձրարվեստ մանրանկարներով վարդարված Ավետարանը, որը ստացողների կողմից նվիրվել է Նծկոնքի վանքին²⁶:


Հռոմոսի գրչության կենտրոնը իր աշխարհագրական դիրքի բերումով սերտորեն կապված է եղել քաղաքամայր Անիին և անմիջականորեն կրել է նրա քաղաքային բարձր մշակույթի ուղղակի ազդեցությունը: Իր հերթին, ժամանակակիցների կողմից «մեծահոգակ», «տիեզերահոգակ» մակդիրներով հորջորջված Հռոմոսի վանքը անեցիների համար առաջնակարգ նշանակություն ունեցող հոգևոր և մշակութային կենտրոն է եղել, Բագրատունի թագավորների շիրիմներով սրբագործված նվիրական վայր:


Հապարամյակից ավելի է, ինչ գոյություն ունի Հռոմոսի վանքը, նրա կիսավեր եկեղեցիներն ու մատուռները մինչև օրս էլ կանգնած են Ախուրյան գետի ափին, որպես նախնյաց փառքի ու իմաստության լուռ վկաներ:

ռոմոսցի, «Բաներ Երևանի համալսարանի», 1982, № 1, և այլն:

²⁵ Մատենադարան, ձեռ. № 1519, էջ 299ա, հմմտ. Գ. Հովսեփյան, Յիշատակարանք..., էջ 888;

²⁶ Ս. Տեր-Ավետիսյան, Յուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, Խ. Ա. Վիեննա, 1970, էջ 205—207;





ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՋՐԱԲԵՐՈՒ ԱՆԱՊԱՏԸ

Ուշ միջնադարում պատմական Հայաստանի Արցախ նահանգի կենտրոնական մասով հոսող Տրտու (Թարթառ) գետի միջին ավազանում էր տարածվում Ջրաբերդ՝ գավառը համանուն բերդով, որ վեր էր խոյանում Տըրտու և Թրդի գետերի միջև, մի խիստ անառիկ վայրում: Բերդը հայտնի էր դեռևս վաղ միջնադարից: Այն աչքի է ընկնում տեսարժան դիրքով, մանավանդ դեպի Թրդի գետը փռված ուղղությամբ: Անառիկ այս բերդի շրջապատում պահպանվել են մի քանի վանքերի ավերակներ, ինչպես՝ Երից Մանկանց վանքը, Թուխկասարի և Անապատի վանքերը, Շուքավանքն ու Մեսեսավանքը: Թվարկված հուշարձաններից Անապատ վանքը ամենամոտն է բերդին և գտնվում է ոչ պակաս անառիկ մի վայրում: Անապատը գտնվում է մի աննշան վտակի ձախ ափին, որը թափվում է Տրտու գետը՝ շուրջ կես կիլոմետր հոսելուց հետո: Անապատը Ջրաբերդի նկատմամբ առավել կտրված է բանուկ ճանապարհներից և այստեղ հասնելու համար հարկավոր է նախ իջնել բերդից Թրդի գետի հովիտը, ապա անցնելով գետի աջ կողմը, լեռնային միակ արահետով բարձրանալ Մռավ լեռնաշղթայի հարավահայաց անտառապատ լանջը (մոտ 2 կմ), որտեղ դարավոր հաճարենիների ու կաղնի ծառերի հովանու տակ պահպանվել է Անապատի հուշարձանախումբը: Տեղում պահպանված հուշարձանները, որոնք չորսն են ամեն տեսակ ճանապարհներից ու կտրված գյուղամիջյան բանուկ ճանապարհներից, միշտ էլ դուրս են մնացել մեր մի ջարք մայ-

նագետ-ուսումնասիրողների տեսադաշտից: Հուշարձանախմբին վերաբերող առաջին գրավոր հիշատակությունը պատկանում է Ը. Մկրտչյանին¹:

Սակայն տեղում պահպանված արձանագրությունների շնորհիվ, որոնց վերծանությունը տրվում է ստորև, պարզվեց Անապատ հուշարձանի դերն ու նշանակությունը Արցախի պաշտամունքային ճարտարապետական հուշարձանների մեջ: Առավել շոշափելի է մանավանդ Անապատ հուշարձանախմբի պատմական նշանակությունը, իբրև գավառի գլխավոր կրոնա-մշակութային կենտրոններից մեկը: Ցավոք, Անապատի հուշարձանախումբը ուշ միջնադարում ենթարկվել է հիմնավոր վերանորոգումների, որի հետևանքով ավերվել ու լրիվ ձևափոխվել է հին եկեղեցին, իսկ շրջապատում եղած հին խաչքարերը, որպես սուկ շինաքար, տեղադրվել են շենքի պատերում: 17-րդ դարի սկզբներին տեղի ունեցած հիմնավոր վերանորոգումների հետևանքով հին տաճարի սրբատաշ բեկորները ևս ագուցվել են շենքի առավել նկատելի հատվածներում: Վերջիններիս թվում բարեբախտաբար պահպանվել են նաև արձանագիրները: Այսօրվա վիճակով հին տաճարի հորինվածքային առանձնահատկությունների մասին բացառապես հնարավոր չէ որևէ ենթադրություն անել: Այս հարցում արդյունա-

¹ Ը. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի Պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 58:

վետ կլինեն միայն կատարվելիք հնագիտական պեղումները: Ներկայիս եկեղեցին միանալ թաղածածկ բազիլիկ տիպի պարզունակ եկեղեցի է, որի ծածկն առնված է երկթեք ծածկի տակ: Թաղը պահում են մեկ զույգ

բանության շենքերի ավերակները, լցված հողով ու ծածկված բուսականությամբ: Միջնադարում Անապատում հաստատված է եղել բավանդամ միաբանություն, որը խոսում է մենաստանի դիրքի ու նշանակության մասին:



Եկեղեցու արևմտյան ճակատը

որմնասյուները: Եկեղեցին չունի ավանդատներ, միակ մուտքն իրականացված է արևմտյան ճակատից: Ընթրը հարավից ունի երկու յուսամուտ, մեկական՝ նաև արևելյան ու արևմտյան ճակատներից: Եկեղեցու հատակն ու տանիքը պատված է եղել հողով: Ընթրը կառուցված է կոպտատաշ ու անտաշ տեղական քարերով և կրաշաղախով: Սրբատաշ են միայն շենքի անկյունաքարերը, որոնց վրա մեծ մասամբ կան ուշ միջնադարյան հակիրճ հիշատակություններ: Եկեղեցու այդ քարերն ունեն դեղին երանգ և ակնհայտորեն բերված են ավելի հեռվից²: Եկեղեցուց արևելք քիչ հեռու, պահպանվել են միա-

Այդ է վկայում եկեղեցու ներսում հարավային որմնասյան ստորին շարվածքում ագուցված սրբատաշ քարի վրա եղած ութ տողանոց արձանագրությունը:

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ
ԿԱՐԱՊԵՏ ՄԻԱԲ
ԱՆԵՅԱ ՍԲ ՈՒՆ
ՏԻՍ ԵՍ ՍԱՄՈՒԷԼ
ՏՎԻ:Բ:ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱՐ (ՈՒՄ)
Ն ՍԲ ԽԱԶԻՆ ՉՍԵԻ
ԱԴԱ ՉՄԽԻԹԱՐ ԶՅՈՀԱՆ
.....ՇԱՀ ՉՈՐԴԻՔՆ

² Նույն քարով է կառուցված Երից Մանկանց վանքը, որտեղից և հավանաբար բերվել է շինաքարը: Նշենք, որ Երից Մանկանց վանքը կառուցվել է 1691 թվականին, իսկ Ջրաբերդի Անապատը, ինչպես կոտեսենք ստորև, կառուցվել է դրանից քիչ առաջ կամ հետո:

Անթվակիր, բայց կարևոր այս արձանագրության հնագրական ոճի ու առանձնահատկությունների ուսումնասիրության շնորհիվ, կարելի է անել հետևություն, որ վիմագիրը փորագրվել է 12—13-րդ դարերում: 1177 թվականից մի գեղաքանդակ խաչքար

է պահպանվել եկեղեցու հարավային պատի արևելյան կողմի լուսամտի մեջ:



Խաչքար Անապատի հուշարձանախմբից

ԹԻԻՆ ՈՒԶ (1177)
ԵՍ ԴԱԻԻԹ ԿԱՆ (ԳՆ) ԵՅԻ
ԶԽԱԶՍ Ի ԲԱՐԵՆԱ
ԻՍՈՒԹԵՆ ԾՆՈՂԱ (Յ)

Պահպանվել են նաև մի քանի անարձանագիր խաչքարեր, որոնց առկայությամբ ապացուցվում է միջնադարում խաչքարերով գերեզմանատան գոյությունը հին վանքի շրջակայքում: Ներկայիս եկեղեցու մուտքի ճակատակալ սրբատաշ քարի վրա պահպանվել է շինարարական արձանագրությունը՝ փորագրված հինգ տողով:

ԵՍ ՍԱՐԳ
ԻՍ ԱԲԵՂԱՅ
ԱԻՍ ՇԻՆԻԼ ՏՎԻ ՈՒ
ՍՏԱՅ ԳՐԻՔՈՐԻՆ
ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ


Սարգիս աբեղան Հայոց եկեղեցու Աղվանից թեմի ինքնակոչ Սիմեոն կաթողիկոսի հայրն էր, որ հակառակ Գանձասարի կաթողիկոսության Մոավ լեռներում 1691 թվականին հիմնադրեց Երից Մանկանց վանքը: Սարգիս քահանան, ինչպես հիշատակված է

Երից Մանկանց վանքի շինարարական արձանագրության մեջ, Ջրաբերդի Մեծ Շեն գյուղից էր: Այժմ էլ այն տարածքը, ուր գրվում է Անապատը, պատկանում է Մեծ Շեն գյուղին, և վերջինս ամենամոտ բնակավայրն է հուշարձանախմբին:

Վիմագրից պարզվում է, որ եկեղեցին կառուցել է ուստա Գրիգորը, որը հայ քարգործ-վարպետների շարքում մի նոր անուն է: Թեև արձանագրությունը թվագրված չէ, բայց ելնելով պահպանված մյուս վիմագրերից, ինչպես նաև եկեղեցու ճարտարապետական-ոճական առանձնահատկություններից, հետևում է, որ եկեղեցին կառուցվել է 17-րդ դարի երկրորդ կեսին կամ 18-րդ դարի սկզբներին: Եկեղեցու հյուսիսային ճակատում, հյուսիս-արևելյան սրբատաշ անկյունաքարի վրա, երեք տողով՝ փորագրված է հակիրճ արձանագրություն:

ԵՍ ՏՈՄ
ԱԶՍ Գ(Ր) Ե
ՅԻ ԹՎ(ԻՆ) ՌՃՀԷ (1728 թ.)

Նշված արձանագրված քարից մեկ շարք բարձր, նույնպես անկյունաքարի վրա փորագրված են Յ, Ն, Թ, տառերը: Եկեղեցու հարավային ճակատում, հարավ-արևելյան



Ջրաբերդի Անապատի եկեղեցու համալիրը

սրբատաշ անկյունաքարի վրա հիշատակված է մեկ տողով՝

ԱՀԱՐՈՆՍ:

Վերջինիս մոտ մեկ այլ սրբատաշ քարի վրա 1723 թվականից արձանագրություն:

ԵՍ ԱՂԱՍԻ Ո
ՐԴԻ Տ (Է) Ր ՊԵՏՐՈ
Ս (Ի) ԳԻՐՑԻ Թ (ՎԻՆ) ՌՃ
ՀԲ.


Նշված արձանագրությունից երկու քար ներքև, հարավային ճակատում՝ անհասկանալի, բայց շատ պարզ փորագրությամբ


ԶՊԽՕ, ԱՅՍ

Մեկ ուրիշ բեկորի վրա՝ ԽԱԶՍ ՎԱՐԴԱՆԻ
ՅԱՅ ՈՂՈՐՄԵԱՅ..... ՆՄԱՅ:

Անապատ հուշարձանախմբի տարածքում այլ արձանագրություններ չենք նկատել: Հուշարձանի պատերում և շրջակայքում պահպանվել են նաև կրոնական թեմաներով

պատկերաքանդակներ, որոնք ունեն գեղարվեստական որոշակի արժեք և արժանի են լուրջ ուսումնասիրության: Տեղում նշենք, որ Երից Մանկանց վանքում (հեռավորությունը Անապատից 6 կմ) գտնված պատկերաքանդակներն իրենց կատարման արվեստով ու սկզբունքով մեծ ընդհանրություն ունեն Անապատում եղած պատկերաքանդակների հետ, ըստ որի չի բացառվում միևնույն վարպետների մասնակցությունը նաև Անապատում: Եկեղեցու դռան մեջ ագուցված է ուղղանկյունաձև մի քար, որի վրա պատկերված է Հիսուս Քրիստոսը (շրջանագծի մեջ), իսկ շրջակայքում առաքյալներն են, որոնք ձեռքերով պահում են Հիսուս Քրիստոսի պատկերը: Եկեղեցուց արևմուտք, ոչ հեռու ընկած է մի փոքրաչափ խաչքար, որը պատկանում է Ամենափրկիչ կոչվող խաչքարերի տիպին: Խաչքարի խաչթևերի վրա, խաչված դիրքով պատկերված է Հիսուս Քրիստոսը: Փորագրման ու կատարման եղանակը բնորոշ է 17—18-րդ դարերին:





ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՅՑԱՆ

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՈՑ ՕՐԱՅՈՒՅՑԸ ՄԻՆՉԵՎ ՄԵԾ ԹՎԱԿԱՆԸ

Այս շարքի նախորդ հոդվածում [1] տեսանք, որ Հայոց Մեծ Թվականը սկսվել է հուլյան տոմարով 553 թվին: Այն ստեղծված է եղել, իբրև հռոմեականին նման մի անշարժ օրացույց, և տարեսկիզբն էլ եղել է հունվարի մեկը: Հայոց Մեծ Թվականի ըսկըպենավորման տարում հունվարի մեկին համապատասխանել է հայոց ահեկի ԻԵ (25)-ը: Այս թվականի առաջին 532 տարիների եկեղեցական տոների օրերը որոշվել են այդ իսկ նպատակի համար կապված ՀԼԲ բոլորակով: Եթե այժմ նայենք Անանիա Շիրակացու կապմած ՀԼԲ բոլորակին, կարող ենք միայն հիանալ դրա պարզությամբ և ըստուգությամբ: Սակայն, չնայած այդ բոլորակի շատ դյուրին ու հասկանալի լինելուն, այդուհանդերձ մինչև դրա ավարտվելն արդեն հայոց մոտ տոմարական խառնաշփոթ էր առաջացել: Պատճառն, անշուշտ, կարող էր լինել ոչ թե կապված աղյուսակի սխալը, այլ այդ աղյուսակի սխալ ընկալումն ու կիրառումը: Մյուս կողմից, սակայն, նայելով հիշյալ ՀԼԲ բոլորակին, այսօր կարելի է վարմանալ, թե ինչպե՞ս էր հնարավոր այն թյուր ընկալել: Վերջինս շա՛տ պարզ է թյուրիմացության տեղիք տալու համար: Ուրեմն, սխալի պատճառը պետք է որոնել դրանից դուրս: Ինչպես նախորդ հոդվածում տեսանք, Հայոց Մեծ Թվականի բոլոր տարիները սկսվել և ավարտվել են հուլյան օրացույցի տարի-

ների հետ մեկտեղ, և տարեսկիզբ է դիտվել հունվարի մեկը: Սակայն, ի հակադրություն դրան, հայոց ամսակարգը սկսվում է նավասարդով¹: Իսկ նավասարդի մեկը հռոմեական (կամ մի այլ անշարժ օրացույցի) որևէ ամսաթվի հետ կայուն կերպով կապված չէր և 1460 տարում շրջում էր հուլյան տարվա բոլոր ամսաթվերի վրայով: Բացի այդ, «նավասարդ» բառի ստուգաբանությունը ևս [2] վկայում է, որ այդ ամիսը ոչ միայն ամսակարգի, այլև տարվա սկիզբը պետք է լիներ: («Նաւասարդ» նշանակում է նոր տարի, ամանոր): Նշենք նաև, որ նավասարդը որպես տարեմուտ դիտվել այնքան սովորական և այնքան բնական է եղել հայոց մոտ, որ տակավին մեր օրերում ևս դա առիթ է տալիս հայոց տոմարի թյուր մեկնությունների: Այս հանգամանքը հուշում է, որ Հայոց Մեծ Թվականի սխալ ընկալման ու կիրառման պատճառը հարկ է կապել նավասարդով սկսվող ամսակարգի հետ: Որպեսզի պարզ ու մանրամասն կապված տոմարը թյուր ընկալվեր, անհրաժեշտ էր մի վտրավոր գործոնի առկայությունը, այնպիսի մի գործոնի, որն ավելի ապդու լիներ տոմարական հաջիվներով պեղովողների համար, քան ՀԼԲ բոլորակի

¹ Հայոց ամսակարգը, որ իր 12 ամիսներով և հինգ ավելյաց օրերով միասին պարունակում է 365 օր, Հայոց Մեծ Թվականը ներկայացնող Անանիա Շիրակացու ՀԼԲ բոլորակում չի դիտվում իբրև տարի: Մեծ Թվականի տարվա միջին տևողությունը փաստորեն 365,25 օր էր, և տարեմուտը կապված չէր նավասարդի հետ:

ստույգ թվերը: Այդպիսի գործոն կարող էր լինել, թերևս միայն դարավոր արմատ ունեցող ավանդույթը՝ տարեմուտը կապել նավասարդի հետ: Իսկ այդ տեսակ ավանդույթը կարող էր հիմնված լինել միմիայն որոշակի օրացուցային համակարգի վրա, այնպիսի մի համակարգի, որի տարեմուտը նավասարդի մեկն է: Հայոց մոտ այդպիսի օրացուցային համակարգի գոյությունն ապացուցելու համար փաստերի պակաս բնավ չի պահանջում: Կարելի է նշել նավասարդով սկսվող ամսակարգը, «Նաասարդ» բառի ստուգաբանությունը, նավասարդն իբրև տարեմուտ դիտելու ավանդույթը հայոց մոտ, որ հարատևել է մինչև մեր օրերը: Որպես այդ ավանդույթի մի հետևանքը, կարելի է նշել նաև Մեծ Թվականի սխալ մեկնաբանումը Անանիա Շիրակացու հետևորդների կողմից: Բացի այդ, ասվածի օգտին է վկայում նաև այն, որ ԺԱ դարում Հովհաննես Իմաստասերը, կարգավորելով ու բարեփոխելով հայկական օրացույցը, տարեմուտն անշարժ կապեց նավասարդի մեկի հետ՝ համարելով դա ամենաճիշտը մեր բնիկ օրացույցից ելնելով:

Հաջվի առնելով վերևում ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ մինչև Մեծ Թվականին անցնելը հայոց մոտ գործածական է եղել մի օրացույց, որի տարեմուտը նավասարդի մեկն է եղել²: Ինչպիսի՞ն է եղել այս օրացույցը. շարժական, թե՛ անշարժ ամսակարգով: Ըստ Հ. Ղ. Ալիշանի [3], մեր նախնիքն ունեցել են երկու տարբեր տոմարական համակարգ. մեկը՝ շարժական, մյուսը՝ անշարժ ամսաթվերով³: Այն, որ շարժական օրացույց իրոք եղել է լայնորեն օգտագործվել է, կասկածից վեր է: Հապացույց դրան կարելի է հիշել թեկույզ առկա տոմարական խառնաշփոթը, որի պատճառը հենց դա պետք է լինի: Այդ է վկայում նաև մեր 365-օրյա ամսակարգն իր 12 երեսուցօրյա ամիսներով և հինգ ավելաց օրերով: Նշենք նաև, որ ՀԼԲ բոլորակը

կապմելիս այս կարգը թողնվել է անփոփոխ:

Մնում է անշարժ օրացույցի հարցը: Այստեղ ամեն ինչ այնպես պարզ չէ, ինչպես նախորդ դեպքում: Բանն այն է, որ դրա գոյությունը և՛ հաստատելու, և՛ ժխտելու համար առկա են մի շարք հանգամանքներ, որոնք կարող են կռվանների դեր կատարել: Նախ նկատի առնենք հոգուտ անշարժ օրացույցի գոյությանը խոսող հանգամանքները: Առաջինը հիշենք վարգացած երկրագործության առկայությունը Հայաստանում քրիստոնեության մուտքից դեռևս շատ դարեր առաջ: Երկրագործական պետքերի համար հարկ էր ունենալ մի անշարժ օրացույց, որ հնարավոր լիներ ճիշտ որոշել վար ու ցանքսի և այլ հողագործական աշխատանքների ստույգ ժամանակը: Շարժական օրացույցն այս նպատակին ծառայել չէր կարող: Սա անշուշտ այսպես է, սակայն նախ և առաջ նկատենք մի փոքր մանրամաս: Բանն այն է, որ այս դեպքում արդեն անշարժ օրացույց ասելով, պարտադիր չէ նկատի ունենալ հուլյան օրացույցը կամ դրա նման մի այլ օրացուցային համակարգ: Ըստ էության տվյալ խնդրի համար կարևորն է արևադարձային տարվա տեվոդության հնարավորին չափ ճիշտ որոշումը: Այդ դեպքում հնարավոր կլինի հուսալի միջոց գտնել երկրագործական պետքերի համար անհրաժեշտ օրերը որոշելու: Եվ իրոք, նման օրինակ մենք տեսնում ենք հին եգիպտացիների մոտ: Նրանք ևս, հայոց պես, օգտագործել են 365-օրյա տարիներով շարժական օրացույց, բայց իրենց երկրագործական աշխատանքների ժամանակը որոշել են առաջնորդվելով երկնային լուսատուներով: Նրանց համար անվարան առաջնորդ էր երկնակամարի ամենապայծառ աստղը՝ Շնիկը (կամ Շնաստղ, որ է α Մեծ Շան, Sirius), որի արեգակնային ամբարձումը բավարար ճշտությամբ համընկել է ամառային արևադարձի օրվա հետ [4]: Եթե Եգիպտոսի բարձր վարգացած երկրագործության պահանջները բավարարվել են առանց անշարժ օրացույցի, միայն աստղերի դիտումներով, ապա այդ բանը հնարավոր կլինի անել նաև այլ վայրերում: Ավելացնենք, որ Հայաստանում ևս վարգացման բարձր աստիճանի վրա է եղել աստղագիտությունը. դրա վկաներն են թեկույզ միայն Հայկական ՍՍՀ տարածքում գտնված աստղագիտական բնույթի բազմաթիվ ժայռապատկերները: Այսպիսով, տեսնում ենք, որ քննարկված հանգամանքը չի կարող կռվան դառնալ հոգուտ անշարժ օրացույցի գոյության:

Որպես երկրորդ հանգամանք՝ նշենք հայոց նախաքրիստոնեական տոները. դրանց մեջ կային այնպիսիք, որոնք կարելի էր կա-

² Հայտնի է, որ Մեծ Թվականի ընդունումից առաջ, մինչև հուլյան 552 թվականը հայերը օգտագործել են Անդրեաս Բյուզանդացու կազմած երկուհարյուրամյա աղյուսակը: Սակայն խոսքը վերաբերում է ոչ թե դրան, այլ մեր բնիկ օրացույցին, որն օգտագործվել է դրանից առաջ և, անկախ այդ աղյուսակից, հարատևել է առավել մինչև Հայոց Մեծ Թվականի ընդգրկմանը:

³ Շարժական տոմար ասելով այստեղ հարկ է հասկանալ 365-օրյա տարիով օրացույց, որի տարեմուտը չորս տարին մեկ փոխվում է հուլյան տոմարի համեմատ: Իսկ անշարժ տոմար ասելով պետք է նկատի առնել հուլյան տոմարի նման մի համակարգ, ուր չորս տարին մեկ նահանջի օր է մուծվում, և տարվա միջին տևողությունը դառնում է 365,25 օր:

տարել միայն տարվա որոշակի եղանակին: Վերևում նշված ձևով հնարավոր կլինե՞ր այս տոնակատարությունների ժամանակը ևս որաշել: Հետևաբար սա նույնպես չի կարող կովան դառնալ անշարժ օրացույցի օգտին:

Մնում է թերևս ամենածանրակշիռ հանգամանքը: Դա է դարի մեր թարգմանական գրականության մեջ օտար ամսանունների թարգմանության առկայությունն է: Բավական թիվ օրինակներ կան, որոնց մեջ օտար անշարժ ամիս-ամսաթվերից հետո դրված են դրանց համապատասխան հայկականները: Սա, անշուշտ, մտածել է տալիս, որ, եթե մեր հանճարեղ թարգմանիչները օտար անշարժ ամիսների կողքին դրել են հայկականները, նշանակում է հայկականները ևս եղել են անշարժ: Այլապես ստիպված պիտի լինեինք մեր մեծագույն երախտավորներին մեղադրել տգիտության մեջ: Փորձենք քննել այս կետը մի փոքր ավելի մանրամասնորեն: Նախ նկատենք, որ հիշյալ թարգմանական գրականության մեջ տրված օտար և հայ ամսանունների վուգադրումները միարժեք չեն: Տարբեր տեղերում տարբեր վուգադրումներ են նշվում: Հետաքրքիր է, որ ժամանակին դա նկատել և այդ մասին նշել է նաև Հովհաննես Իմաստասերը ([5], էջ 261): Բացի այդ, Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ առկա վուգադրումները բոլորն էլ կազմված են բավական տարօրինակ ձևով. տրված է օտար ամսանունը և ապա, որպես դրա բացատրություն, գրված է «որ է» և հայկական ամսանունը: Տարօրինակ ենք համարում, քանի որ նույն թարգմանիչները Աստվածաշնչի այլ հատվածներում թարգմանել են նույնիսկ երկնային լուսատուների և համաստեղությունների ու աստղակույտների անունները և բոլոր դեպքերում պարզապես օտարալեզու անունների փոխարեն դրել են հայկականը, առանց տալու բնագրային անունները: Եվ միայն ամիսների դեպքում է, որ տեսնում ենք այսպիսի պատկեր՝ իրար կողքի դրված և՛ բնագրայինը, և՛ հայկականը: Բացի այդ, գիտենք, որ Աստվածաշունչը թարգմանվելուց հետո լրիվ վերանայվել է Ս. Սահակ Պարթևի կողմից: Ուստի, պետք էր սպասել ամբողջ թարգմանության միակերպության, որ սակայն այս դեպքում չի դիտվում: Արժե հիշել Եսթերի գրքում եղած այդօրինակ թարգմանությունները, որոնք, չնայած բոլորն էլ նույն գրքի մեջ լինելուն, նույնիսկ իրար հետ չեն համաձայնում: ԺԱ զբլխի 2-րդ համարում կարդում ենք. «...յառաջնում աուր ամսոյն Ադարայ, որ է հայերեն Արեգ...», այսինքն՝ ադար ամսի մեկը եղել է հայոց արեգ ամսվա դիմաց: Իսկ նույն գրքի Ը գլխի 9-րդ համարում կարդում ենք. «...յա-

ռաջնում աուրն յամսեանն Նիսան՝ որ է Արեգ...», որը հնարավոր չէ համաձայնեցնել նախորդի հետ: Իրոք, եթե այստեղ ադարը և նիսանը թարգմանված են որպես ասորական ամսանուններ, ապա անհամաձայնությունն այն է, որ ասորական ադար ամիսը 31 օր է պարունակում, ուստի դրա և նիսանի առաջին օրերի միջև 31 օր կա, և բնականաբար այդ երկու ամիսների սկիզբները չեն կարող միաժամանակ լինել հայոց արեգ ամսի դիմաց: Եթե թարգմանված են իբրև եբրայական ամիսներ, ապա նկատենք, որ և՛ ըստ Անանիա Շիրակացու [6], և՛ ըստ Հովհաննես Սարկավագի ([5], էջ 165), այդ ամիսների միջև կան ավելյաց հինգ օրերը, ուստի դրանց սկիզբներն իրարից բաժանված են 35 օրով և դարձյալ չեն կարող միևնույն արեգ ամսի դիմաց լինել: Այս բոլորը մտածել է տալիս, որ նշված բոլոր վուգադրությունները արվել են ոչ թե թարգմանիչների կողմից, այլ արտագրությունների ժամանակ արված ընդմիջարկություններ են: Բնական է, որ թարգմանվելուց հետո հայերեն Աստվածաշունչը շատ արագ բավաճցվել է: Հենց այս սկզբնական արտագրությունների շրջանում էլ, ամենայն հավանականությամբ տարբեր արտագրող գրիչների կողմից, արվել են հիշյալ ընդմիջարկությունները՝ որպես բացատրություններ, տարբեր ժամանակներում: Այսպիսով, տեսնում ենք, որ անշարժ օրացույցի օգտին՝ վկայող անառարկելի կովաններ չըկան:

Այժմ տեսնենք, թե ինչ հանգամանքներ կան ընդդեմ անշարժ օրացույցի: Նշենք նախ, որ եթե այդպիսի մի օրացուցային համակարգ եղած լինե՞ր, ապա սպասելի էր, որ դրա մասին վկայություններ հասած լինեին գոնե մինչև Անանիա Շիրակացին: Սակայն վերջինս ոչինչ չգիտե այդպիսի օրացույց գոյության մասին: Ավելին. գիտենք, որ նա ինքն է ձեռնամուխ եղել այդպիսի օրացույց ստեղծելու գործին [7]: Եթե Շիրակացու առաջ եղած լինե՞ր անշարժ օրացույց, և ինքն էլ իմանար դրա մասին, ապա նորն ստեղծելու փոխարեն անկասկած կմտածեր վերականգնել եղածը: Հույժ կասկածելի է, որ Շիրակացուց ավելի քան չորս դար հետո ապրած Հովհաննես Իմաստասերին հասնեին փաստեր, որոնք Շիրակացուն հասած չլինեին: Ավելի խելամուտ է մտածել հակառակը. շատ բաներ հայոց հին օրացույցի մասին, որ Անանիա Շիրակացու ժամանակ դեռևս հայտնի էին, արդեն մոռացված ու կորսված են եղել նրանից չորս դար հետո: Թերևս դրանով էլ կարելի է բացատրել այն ինքնավատահոությունը, որով Հովհաննես Սարկավագը «վերականգնում» է հայոց հին օրա-

ցույցը: Նրա համար հիմնական կռվաններ են եղել Ե դարի թարգմանական գրականության մեջ եղած Վուգադրությունները, որոնց մասին վերնում խոսեցինք⁴: Բացի այդ, հայոց ամիսների մասին խոսելով, Անանիա Շիրակացին իր տոմարական աշխատության ԽԲ գլխում [8] գրում է. «Իսկ մարգաց և հարաւանց, Վոր այժմ ահկի կոչեն, այս ի գործոց անուանեցան, Վի ընդ այն ժամանակս ամառնային էին սոքա»: Այսինքն՝ երևում է, որ այս տողերի հեղինակը քաջ գիտակցել է, որ հայոց ամիսները տարվա եղանակների վրա պտույտ են գործել սկսած հայոց օրացույցի հենց սկզբնավորումից, քանի որ «ընդ այն ժամանակս» ասելով այստեղ ի նկատի է առնվում հայոց տոմարի ստեղծման ժամանակը (տե՛ս [8]): Ի վերջո նշենք նաև Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը: Եթե Ե դարի սկզբում մեր թարգմանիչներն ունենային մի անշարժ հայկական օրացույց, ապա անկասկած օտար ամսանունների փոխարեն կոնեին հայկականները՝ ելնելով այդ անշարժ օրացույցից: Սակայն, ինչպես վերևում տեսանք, այդպիսի բան չի եղել, և եղած բոլոր բացատրական Վուգադրումները հետագայում արված ընդմիջարկություններ են:

Ամբողջ ասվածն ի մի բերելով՝ կարող ենք եզրակացնել, որ անշարժ ամսակարգով օրացույց հայոց մոտ քննարկվող ժամանակաշրջանում չի եղել: Այսինքն՝ հայոց օրացույցը եղել է 365-օրյա հաստատուն տարիով ու չարժուտ տարեսկզբով, և տարեսկիզբն էլ չորս տարում մեկ օր առաջ է անցել հուլյան օրացույցի համեմատությամբ: Բնականաբար հայոց տարեմուտն էլ, որ նավասարդի մեկն էր, նույնպես չորս տարին մեկ օր առաջ անցնելով հուլյան օրացույցից, 1460 տարում կշրջեր տարվա բոլոր օրերի վրայով: Այստեղ սակայն առաջանում է մի այլ հարց: Ինչպես գիտենք, հեթանոս հայոց տոներից Վարդավառը միջոտ տոնվել է նավասարդի տոնից միայն մի քանի օր տարբերությամբ: Իսկ նավասարդը փոփոխական լինելու դեպքում Վարդավառն էլ այդպիսին կլիներ և, փոփոխվելով, ի վերջո ձմռանը կհանդիպեր: Բայց, ինչպես գիտենք, Հայաստանի պայմաններում ձմռանը Վարդավառ տոնել հնարավոր չէ: Արժե հիշել նաև, որ հենց Վարդավառ բառն իսկ իր իմաստով հուշում է, որ պետք է գործ ունենանք ամառային տոնի հետ: Որ-

պես ամենագեղեցիկ վկայություն այդ մասին, կարող ենք հիշել Գրիգոր Նարեկացու հանձարեղ քերթվածը. «Գոհար վարդն...»: Այսինքն՝ Վարդավառը, հետևաբար նաև նրանից միայն մի քանի օրով տարբերվող նավասարդի տոնը, կատարվել են ամռանը: Ահա այստեղ է, որ արժե մեկ էլ հիշել հին եգիպտացիներին: Չէ՞ որ նրանք ևս մեծաշուք տոնակատարությամբ են նշել իրենց կենսատու գետի՝ Նեղոսի տոնը, որ կատարվել են միջոտ ամառային արևադարձի օրը (կամ դրան մոտ մի օր): Ընդ որում դա տոնվել է անկախ այն բանից, թե սույն օրն իրենց օրացույցով ինչ ամիս և ամսվա ինչ օր է եղել: Ուստի, վարդացնելով վերնում ասվածը, կարող ենք եզրակացնել, որ հայոց Վարդավառը, հետևաբար նաև նրա հետ սերտորեն կապված նավասարդի տոնը, տոնվել է ամառվա մեջ խիստ որոշակի մի օր: Թե ինչ կերպ է որոշվել այդ օրը, կփորձենք պարզել այս շարքի հաջորդ հոդվածում, իսկ առայժմ ամփոփենք արված դատողություններն ու հետևությունները:

Ի մի բերելով եզրակացությունները՝ ստանում ենք այսպիսի պատկեր: Հայոց օրացույցը իր սկզբնավորման ժամանակից նեթ եղել է 365-օրյա հաստատուն տարիներով և փոփոխական տարեսկզբով մի համակարգ: Նշենք, ի դեպ, որ, հակառակ իր տարեմուտի փոփոխական լինելուն, այսպիսի համակարգը լուրջ առավելություն ուներ բավմաթիվ այլ օրացուցային համակարգերի նկատմամբ, դա նրա ծայրահեղ պարզությունն էր՝ տարիների հաստատուն տևողությունը և բոլոր ամիսներում օրերի քանակի հավասարությունը (30 օր): Իսկ պարզության շնորհիվ դրա օգտագործումը դառնում էր չափազանց դյուրին: Հենց այս առավելությունների համար է, որ մինչև Ն. Կոպենհիկոսը եվրոպական աստղագիտության մեջ կիրառվել է այդ նույն կառուցվածքն ունեցող մեկ այլ օրացույց՝ եգիպտականը: Հակառակ օրացուցային ամսամուտերի և տարեմուտերի փոփոխական լինելուն, հեթանոս հայերն ունեցել են իրենց անշարժ տոները, որոնց օրերը որոշվել են երկնային լուսատուների դիտումների միջոցով: Դրանով էլ բավարարվել են հեթանոսական կրոնի պահանջները օրացույցի նկատմամբ: Հետագայում, սակայն, 301 թ. քրիստոնեության պետական կրոն հռչակվելով, փոխվում են օրացույցի նկատմամբ եղած պահանջները: Նոր կրոնը նոր պահանջներ ուներ, որոնց, բնականաբար, հին օրացույցը բավարարել չէր կարող: Ահա այս պայմաններում հայոց մոտ ստեղծվում է մի նոր օրացուցային համակարգ, որը փաստորեն նոր կրոնի պահանջմունքի պատվաստն էր հին օրա-


⁴ Կարելի է մտածել նաև, որ Հովհաննես Իմաստասերը նավասարդի մեկը օգոստոսի տասնմեկի հետ է կապել, որպեսզի այդ կերպ պահպանի թարգմանական գրականության մեջ եղած Վուգադրությունների մոտիվությունը գործածվող օրացույցին:


ցույցի վրա: Ստեղծվում է հայոց ավանդական ամսակարգով, բայց արդեն քրիստոնեության պահանջներին համապատասխանող մի խառնածին համակարգ՝ Հայոց Մեծ Թվականը, որի տարին, ինչպես տեսանք, ուներ 365,25 օր միջինացված տևողություն: Այս համակարգի ամենալուրջ թերությունն այն էր, որ այստեղ գործածվող ամսակարգը ի սկզբանե ստեղծված էր մի այլ տոմարի համար (որն ուներ 365-օրյա հաստատուն տարի), իսկ Չ դարից այդ նույն ամսակարգով փորձում էին հաշվել ըստ հուլյան 365,25-օրյա տարիների: Այստեղից էլ, բնականաբար, առաջանում է տոմարական մեկ արդեն հայտնի խառնաշփոթը: Սա, անշուշտ, վկայում է, որ հնարավոր չէր թեկուզև ամենահեղինակավոր ժողովի որոշմամբ փոխել ժողովրդի հապարամյա արմատ ունեցող պատկերացումը իր օրացույցի մասին: Հետագայում, միայն հայոց ամսակարգի մեջ փոփոխություն մտցնելով, Հովհաննես Սարկավազը կարողացավ այդ ամսակարգը անշարժացնել: Իսկ նրա կատարած փոփոխությունն այն էր, որ մոծվեց նահանջի օր, որ չորս տարին մեկ դրվում էր մեհեկան և արեգ ամիսների միջև: Դրանով արեգի մեկը միշտ մնաց հուլյան տոմարի մարտի իննի դիմաց: Իսկ նահանջի օրը չորս տարին մեկ դրվում էր մարտի ութի դիմաց: Չարմանալի է, որ այս մասին իշխող կարծիքն այն է, թե նահանջի օրը մոծվել է ավելաց հինգ օրերից հետո, նավասարդի մեկից առաջ [9, 10]: Ինչպես ցույց է տալիս Հովհաննես Իմաստասերի կազմած խառնախորանը ([5], էջ 159), նավասարդից առաջ ոչ մի նահանջի օր չկա, իսկ մեհեկան ամսի վերջի դիմաց նշված է. «Հայք պառելորդ նահանջին աստ դնեն»: Նահանջի օրվա այսպիսի դիրքը նաև շատ տրամաբանական է: Հուլյան տոմարով նահանջի օ-

րը դրվում է փետրվարի 28-ի և մարտի մեկի միջև, այդ երկու ամիսների արանքում: Մարտի մեկին ամենամոտ ամսամոտն էլ, ըստ սարկավազակիր կարգի, արեգ ամսինն է: Ուստի, որպեսզի հուլյան և սարկավազակիր օրացույցների նահանջից առաջացող զուգընթացության խախտումը նվազագույնը լինի, հարկ էր նահանջի օրը մոծել հենց արեգ ամսից առաջ, մեհեկանի վերջից հետո: Այս կերպ առավելագույն չափով մեծացել է հուլյան և սարկավազակիր օրացույցների զուգընթացությունը:

Ամփոփելով՝ տեսնում ենք, որ հայոց մոտ մինչև ԺԱ դարը անփոփոխ հարատևել է հնավանդ 365-օրյա ամսակարգը, որը, հակառակ իր տարբեր մեկնություններին ու կիրառություններին, եղել է մեր հնագույն պարզ ու գեղեցիկ օրացույցի վկան:

1. Գ. Բրուտյան, «Էջմիածին», 1983 թ., Ը, էջ 41:
2. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977 թ., Գ հատոր, էջ 435:
3. Հ. Ա. Ալիշան, Յուզիկը հայրենեաց հայոց, հատոր առաջին, Վենետիկ, 1920, էջ 72—79:
4. E. J. Bickerman, Chronology of the Ancient World, London, 1968, p. 40—43.
5. Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956:
6. Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 116:
7. Յովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Տիֆլիս, 1912, էջ 92:
8. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, Երևան, 1940, գլուխ ԽԲ, էջ 75:
9. Հ. Ս. Բադալյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 82:
10. Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, Երևան, 1972, էջ 117:





Յ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 596
ՅՈՒՑԱԿ ԻՐԵՐԻ

Թերթերը՝ 96:— **Պրակները՝** 6:— **Մեծությունը՝** 20.3×16.8×1 սմ.:— **Նյութը՝** դեղնած հասարակ թուղթ:— **Կազմը՝** սրճագույն մոմաթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կապտավուն հասարակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—1բ, 5ա—7ա, 30բ, 44ա—96բ:— **Տողերը՝** 23:— **Գծումները՝** թուղթի ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1950-ական թթ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռագիրը մի ցուցակ է, որ պարունակում է Նոր Զուղայի խաչքարերի, տապանագրերի, կնիքների, նկարների, որմնանկարների, հախճապակիների, դռների, պատուհանների, ասեղնագործությունների և տարազների ցանկը:

* Ըարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի № № Բ—Գ-ից, Է—Ժ-ից և 1984 թվականի № № Բ—Գ-ից:

Թ. 2ա.—խաչքար:
Թ. 8ա.—Տապանագիրք:
Թ. 21բ.—ԺԹ դար:
Թ. 27բ.—Փակագրեր, ԺԸ (18-րդ) դար:
Թ. 28բ.—Կնիքներ, 17-րդ դար:
Թ. 29բ.—18-րդ դար:
Թ. 30ա.—19-րդ դար:
Թ. 31ա.—Որմնանկարներ Նոր Զուղայի տաճարներից:

18-րդ դարի սկիզբ:
Թ. 33ա.—Որմնանկարներ բնակարաններից:
17-րդ դար:
Թ. 35ա.—18-րդ դար:
19-րդ դար:
Թ. 36ա.—Չանազան նկարներ:
Թ. 37ա.—Փարֆորներ:
Թ. 39ա.—Նմուշներ. ապակեպար (ս) դռներ և պատուհաններ:
Թ. 41ա.—Ասեղնագործություններ:
Թ. 42ա.—Պարակահայ գյուղական տարազներ:

№ 597
ԴԻՄԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ
ԿՐՕՆԻ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Թերթերը՝ 401:— **Պրակները՝** 20, յուրաքանչյուրը 20 թերթից բաղկացած:— **Մեծությունը՝** 21.2×18.3×5 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն թուղթ:— **Կազմը՝** կաշվով և մոմաթով ծածկված հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական սև թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—2բ, 3ա, 26բ, 400ա—401բ:— **Տողերը՝** 19:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Թ. Տեր-Ստեփաննոսյան:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** հունիս 1892 թ.:— **Վայրը՝** Կալկաթա:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրը ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

- Թ. 6ա.—Յառաջաբանություն հեղինակին:
 Թ. 18ա.—Պարունակություն (12 գլուխների համա-
 տո բովանդակությունը):
 Թ. 27ա.—Դիմամարտության կրօնի և գիտության:
 Գլուխ առաջին:
 Մագում Գիտության:
 Թ. 64ա.—Գլուխ երկրորդ:
 Մագում Քրիստոնեության:
 Թ. 98բ.—Գլուխ երրորդ:
 Վեճ՝ վերաբերության վարդապետու-
 թեան միության Աստուծոյ:
 Թ. 135բ.—Գլուխ չորրորդ:
 Վերածագումն Գիտության ի հարա:
 Թ. 152ա.—Գլուխ հինգերորդ:
 Վեճ՝ վերաբերության բնության հոգ-
 տոյ:
 Թ. 184ա.—Գլուխ վեցերորդ:
 Վեճ վերաբերության վիճության աշ-
 խարհի:
 Թ. 214ա.—Գլուխ յոթերորդ:
 Վիճաբանության վերաբերության հնու-
 թեան կամ հասակի աշխարհի:
 Թ. 233բ.—Գլուխ ութերորդ:
 Վիճաբանության վերաբերության ըս-
 տուգման ճշմարտության:
 Թ. 259ա.—Գլուխ իններորդ:
 Վեճ վերաբերության կառավարության
 տիեզերաց:
 Թ. 286ա.—Գլուխ տասներորդ:
 Յնթացս առաել քան մի հազար ա-
 մաց Լատինական Քրիստոնեությունն ի
 ճնշման կալան պիմացական կարողու-
 թիւն բոլոր Եւրոպայ, և պատասխանա-
 տու է հետևանաց այնորիկ:
 Թ. 317ա.—Գլուխ մետասաներորդ:
 Առնչության Գիտության ընդ արդի քա-
 ղաքակրթության:
 Թ. 358ա.—Գլուխ երկուսասներորդ:
 Մօտալուտ ճգնաժամն:

<ԻՇԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 2ա.—Դիմամարտության կրօնի և գիտության:
 Թ. 3ա.— Դիմամարտության
 Կրօնի և Գիտության
 Աշխատասիրեաց
 Յովհաննէս Գուլիէմուս Դրէպր
 Բժիշկ և վարդապետ ազատական արհեստից
 Վարժապետ համալսարանի Նիւ Եօրկայ և
 Հեղինակ «Ճառից ի վերայ մարդակազմության»
 Թարգմանեաց

Յինն և տասներորդ տպագրութենէ բնագրին

Թ. Տր Ստեփաննոս:

Թ. 4ա.—Եթէ վկարկութիւն և վարժէս մատենի
 միոյ ի թուոյ ընթերցողացն կշռադատել արժան իցէ,
 ոչոքմն արդարն, ի յոյժ կարևորաց և ի պիտանա-
 տրաց սակի պտեղի ունի սոյն: Անց մատենան ոչ

միայն ինն և տասնիցս (որչապի ինձ ծանօթ) յառան-
 ձին տպագրութիւնս ի բնագրի իւրում յԱնգղիական
 լեզուի, այլ և վերածաւ թարգմանութեամբ ի բազում
 յայլ լեզուս: Եթէ այսչապի ինչ մեծ՝ խնդիր սորին,
 ուստի և արժէք առ այնչապի բազում ապինս և ան-
 հատս, ընդէ՛ր և ոչ հայեցոյն իրաւունք ունելոյ
 վայն:

Առ այն չի իցէ թէ կարծեսցի թէ ընդհանրութիւն
 ապգի մերոյ չէ տակաւին յայն հասուն կէտ մտայնո-
 հութեան, առ ուղղութեամբ դատելոյ վկարկոր թընդ-
 րոցն ի սմին պարունակեալ, փոխանակ ի ռամիկն. ի
 գրոց թարգմանեցաւ սոյն ի բարբառ: Բայց և այն-
 պէս ճշմարտութիւնն լոյս է կենսատու գի(թ. 4բ)-
 սութիւն ճշմարտութեան ոչ երբէք արար վնաս, և
 ոչ երբէք առնելոց է ո՛չ ռաշկին, ո՛չ գիտնորն:

Ապառ իմն ձև կալայ թարգմանութեանս, ու շե-
 դեալ ըստ չափան կարեաց ճշմարտութեամբ ի յայտ
 բերել վիմաստ բանից հեղինակին, յոր եթէ թերա-
 ցեալ իւրք իւրք, առ այն հայցի ներդամութիւն
 ընթերցողին:

Թարգմանիչ:

Թ. 5ա.—Սիրեցեալ հոգևոր պաւսկունք իմ,

Դէպ եղեալ ինձ ընթեռնուլ վմատեանս, որ թուե-
 ցաւ ինձ լի և վեղուն բազմադիմի ծանօթութեամբ
 արքանի Գիտութեան կարևոր խնդրոց և առարկայից,
 խորհուրդ անկաւ ի միտս իմ թարգմանել վայն ի
 լեզու ապգի մեր, զոր և արարի բաժին տալով այնմ
 երբեմն ի ժամանակէ ազատութեան իմոյ յառօրեայ
 վբարձանց: Վաստակ սիրոյ եղեալ ինձ այս, վասն
 որոյ և պտուղ սիրոյ, սիրայօժար ըղձին վերընծայեմ
 ձեզ զսոյն, ոչ մեծ ինչ արդարն, այլ մեծի և անկեղծ
 գորովոյ յայտարար: Հաճելոց է՞ք ընդունել, սիրեց-
 եալ պաւսկունք իմ, իբր (թ. 5բ) լոկ նշան ինչ խո-
 րազաց երախտագիտութեան վասն անհուն սիրոյ և
 կաթողութեան զոր ցուցիք և ցուցանէք դեռ ծերունի
 վարժապետի ձեր յայսչապի ամս:

Թ. Տր Ստեփաննոսեան:

Կալկաթա, Յունիս 1892:

Թ. 213բ.—Մարգարէութիւն հեղինակի մատենիս
 լրացեալ է արդէն: Ի 19-երորդում Յունիսի 1889 ա-
 մի, մեծաւ հանդիսին քօղաբաց եղև ի տես հասա-
 րակաց արձան մի կանգնեալ յԻտալիա ի Հռովմ քա-
 ղաքի ի յիշատակ Բրունօի, թէև ոչ առանց մեծի
 գծումութեան Պապի և եկեղեցականաց իւրոց:

Թարգմանիչ:

Թ. 399բ.—Աւարտ:

Ունա՛յն վաստակ, իպո՛ւր աշխատութիւն: Ո՛չ տպա-
 գրութեամբ ո՛չ ընթերցման արժանացաւ:

Թարգմանիչ.

1914:


<ԻՇԱՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

(Կազմի վրա կազմած կարմիր փոքրիկ պիտակի
 վրա ոսկեգույնով տպված է գրքի անունը)

Դիմամարտության

Կրօնի և Գիտության:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(МАЙ 1984 г.)

1. **Религиозная жизнь** (хроника): краткие сообщения о литургиях, проповедях и прочих событиях, имевших место в первопрестольном Эчмиадзине (стр. 3—4).

2. **В. Абраамян**—Президент фонда имени Галуста Гюлбенкяна д-р Жозе де Азередо Пертиган в первопрестольном Эчмиадзине, 23 мая 1984 г. (стр. 5—6).

3. **Епископ Геворг Серайдарян**—Антропони-мы армянского происхождения (исследование с приложением списка имен)—(стр. 7—11).

4. **Проф. Вараздат Арутюнян**—Начинания в области строительства, предпринятые первопрестольным Эчмиадзином в 1956—1980 гг. в период правления Католикоса всех армян Вазгена I (исследование)—(стр. 12—19).

5. **Левон Петросян**—Монастырь (стихотворение)—(стр. 20).

6. **Жизнь епархий**—Вести из армянской епархии в Ираке (стр. 21—22).

7. **Епископ Нарек Шакарян**—Совещание представителей действующих церквей Советского Союза, состоявшееся в Эстонии, 15—17 мая 1984 г. (стр. 23—24).

8. **Н. Тагмизян**—Ананья Ширакаци и 8 рядов песнопений на Воскресение Христово (исследование)—(стр. 25—35).


9. **Армен Тер-Степанян**—Геворг Мхлаим (исследование)—(стр. 36—44).

10. **Карен Матевосян**—Из истории монастыря Оромос—крупнейшего центра по созданию рукописей (исследование)—(стр. 45—49).

11. **Самвел Карапетян**—Пустыня Джраберда (исследование)—(стр. 50—53).

12. **Григор Брутян**—О некоторых вопросах, связанных с армянским календарем (исследование)—(стр. 54—58).

13. **Список рукописей**, поступивших в первопрестольный Эчмиадзин (№№ 596—597)—(стр. 59—60).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(MAY 1984)

1. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of May (pages 3-4).

2. V. Abrahamian—The president of the „Calouste Gulbenkian Foundation“ Dr. Jose de Azeredo Perdigao in the Holy See, 23rd May 1984 (pages 5-6)

3. Bishop Guevorg Seraydarian—Names of persons which have taken origin from Armenian language (study and list of names)—(pages 7-11).

4. Prof Varazdat Harutiunian—The history of the architectural activity of the Holy See of St. Etchmiadzin, during the patriarchate of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians (1956-1980) (study)—(pages 12-19).

5. Levon Petrossian—„Monastery“ (poetry)—(page 20).

6. Diocesan life—News from the Armenian diocese of Iraq (pages 21-22),

7. Bishop Narek Shakarian—Consultation in Estonia of the representatives of Soviet Union's churches, 15-17th May 1984 (pages 23-24).

8. N. Tahmizian—Anania Shirakatz'i and eight series of hymns of the Resurrection of Christ (study)—(pages 25-35).


9. Armen Ter-Stepanian—Guevorg Mekhlayim (his life, church and literary activities)—(pages 36-44).

10. Karen Mathevossian—The history of Horomos monastery's center of manuscripts (study)—(pages 45-49).

11. Samvel Karapetian—The monastery of Djeraberd (study)—(pages 50-53).

12. Grigor Brootian—About some questions of the Armenian calendar (study)—(pages 54-58).

13. Nubar Mikaelian—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 596-597 (pages 59-60).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(MAI 1984)

1. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de mai 1984 (pages 3—4).

2. Visite au Saint-Siège d'Etchmiadzine du Docteur Jose de Azeredo Perdigao, président de la Fondation Calouste Gulbenkian (23 mai 1984) — (pages 5—6).

3. Evêque Guévorg Séraïdarian—Noms de personne d'origine arménienne (étude et liste des noms)—(pages 7—11).

4. Prof. Varazdat Haroutiunian—Histoire des travaux de construction réalisés par le Saint-Siège d'Etchmiadzine dans les années 1956—1980 du patriarcat de Sa Sainteté V:skén Ier (suite)—(pages 12—19).

5. Lévon Pétrossian—„Le monastère“ (poème)—(page 20).

6. Vie diocésaine: Nouvelles du diocèse des Arméniens d'Iraq (pages 21—22).

7. Evêque Narek Chakarian—Réunion consultative des représentants des Eglises de l'Union Soviétique tenue du 15 au 17 mai 1984 en Estonte (pages 23—24).

8. N. Tahmizian—Anania Chirakatsi et huit séries d'hymnes sur la Résurrection du Christ (pages 25—35).

9. Armen Ter-Stépanian—Guévorg Mekhlaim (sa vie et ses activités religieuses et littéraires)—(pages 36—44).

10. Karen Mathévossian—Le monastère d'Horomos, célèbre centre des manuscrits arméniens (étude)—(pages 45—49).

11. Samvel Karapétian—Le monastère de Djeraberd (étude)—(pages 50—53).

12. Grigor Broutian—Certains problèmes relatifs au calendrier arménien (pages 54—58).

13. Noubar Mikaélian—Index des manuscrits reçus au Saint-Siège d'Etchmiadzine et placés sous les numéros 556—597 (pages 59—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ, լուրեր	3
Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Գալուստ Կյուպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժուլի դե Ապերեդո Պերտիգանը Մայր Աթոռում	5
ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ—Հայոց լեզվից ծագում առած անձնանունների ՊՐՈՖ. ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շի- նարարական գործունեության Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաքինի գահակալության օրոք (1956—1980)	7
ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Վանքը	12
Լուրեր Իրաքի հայոց թեմից	20
ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ—Սովետական Միությունում գործող Եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցությունը Էստոնիայում	21
Ն. ԹԱՀՄԻՅԱՆ—Անանիա Շիրակացի և Հարության ԱԶ—ԴԿ ութ հարցնակարգերը ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ—Գևորգ Մխլայիմ	23
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Հոռոմոսի գրչության կենտրոնի պատմությունից	25
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Զրաբերդի Անապատը	36
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏՅԱՆ—Հայոց տոմարի որոշ հարցերի մասին	45
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	50
„Эчмиадзин“ официальный журнал Эчмиадзинского Католикосата	54
„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin	59
„Etchmiadzine“ organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	61
	62
	63



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԷԶՄԻԱԾԻՆ

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 11.05.1984 թ.: Ստորագրված է տպագրության 15.06.1984 թ.:
Տպագրական 4 մամուլ+2 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 420

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1984 թ.